Printed in Turkey

# ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

կամ

## ՀՈԳԵՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

1840. ի Զմիւռնիա.

2004

# ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

կամ

# ՀՈԳԵՎԱՐԺՈՒԹԻՒՆ

# ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

Ըստ լուսաւորչական Ուղղափառ դաւանութեան Առա-քելական Եկեղեցւոյ Հայաստանեայց՝։

Համառօտեալ

յընծայելոյն ի լոյս ի Միքայէլ Ծայրագոյն Վար-դապետէ Սալլանթեանց Կոստանդնուպօլսեցւոյ՝ Միա-բանէ Մայր Աթոռոյն Հայոց Սրբոյ Էջմիածնի, և ի տպագրելոյն ի Մոսկով յամին 1831.

Ի Վարժապետէ Հայոց Լեզուի յԱւագ Սարկաւագէ Գրիգորէ Տէր Առաքելեանց Հին Նախիջեւանցւոյ յօգուտ Լուսաւորչական մանկանց Հայաստանեայց Ս. Եկեղե-ցւոյ՝ յաւելմամբ ի վախճանի վկայութեանց Ս. Գրոց՝ Վեր-բերելոց ի համապատասխանեան տեղիս ի սմին. և տպագրեալ

Ի Հայրապետութեան Տն ՅՈՎՀԱՆՆՈՒ Գերըն-տիր Կաթուղիկոսի ամ. Հայոց և Ռ.սպետի.

Ի Տպարանի Միձակաւոր Առաջնորդին Գերա-պատիւ Բարձր Սրբազան Մետրապոլիտին Բաղ-տասարայ.

1840. Ի ՇՈՒՇԻ. ՌՄՁԹ.

## ՀՐԱՄԱՅԵՑԱՒՔ ՏՊԱԳՐԵԼ.։

Սիձակաւոր Առաջնորդ Ղարաբաղու Արք Եպիս-կոպոս և Ասպետ Մետրապօլիտ Բաղտասար Հա-սան Ջալալեանց. 'ի 1. Դեկտեմբերի 1839 ամի.

'Ի Ներքնաքաղաքն Շուշի, որ յԱրցախ.

Printed in Turkey

Արդարութիւն Տեառն ուղիղ է, և ուրախ առնէ զսիրտս. պատուիրանք Տեառն լոյս են, և լոյս տան աչաց։

Ճրագ են բանք քո ոտից իմոց, և լոյս տան շաւղաց իմոց. (Սաղմ. ժը. 8. և ճժը. 105.)

Ամենայն որ կարդասցէ զանուն Տեառն՝ կեցցէ. իսկ արդ՝ զիա՞րդ կարդասցեն, յոր ոչն հաւատացին. կամ զիա՞րդ հաւատասցեն՝ որում ոչն լուան. կամ զիա՞րդ լուիցեն առանց ուրուք քարոզելոյ. կամ զիա՞րդ քարոզեսցեն, եթէ ոչ առաքեսցին (յԱ. Ն)... ապա ուրեմն՝ հաւատք 'ի լսելոյ են, և լուր 'ի բանէն Քրիստոսի. (Հռովմ. ժ. 13—17.)

# ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

կամ

# ՀՈԳԵՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

## ԳԼՈՒԽ ՄԻԱԿ

### Յաղագս կրօնի ընդհանրապէս.

### Ա. Ինչութիւն կամ սահման կրօնի.

Հարց. Ի՞նչ է կրօնագիտութիւնն.

Պատասխանի. Կրօնագիտութիւնն է մակացութիւն, որ տայ մարդոյ ճանաչել զճշմարիտ և զա̅ծավայել կրօն առ ուղիղ վարելոյ նովին 'ի լինել երջանիկ յայսմ և 'ի հանդերձեալ աշխարհի.

Խնդիր. Ո՞րս լինի զենթակայն, զառարկայն և զվախճան մակացութեանս.

Պ. Ենթակայ այսր գիտութեան է Միտք մարդոյ. Առարկայ՝ է կրօնն. իսկ Վախճան կամ Նպատակ՝ է ճանաչելն և արդիւնալի գործով կատարել զծանուցեալ ճշմարտութիւնն.

Հ. Ի՞նչ է կրօնն.

Պ. ԿՐՕՆՆ է կիրք կամ զգածումն հոգւոյ, որ շարժէ զմիտս 'ի ճանաչել զճշմարտութիւն զԱ̅Յ և զԱ̅ծայնոց, և ոգւորէ զկամս առ 'ի մատուցանել Ա̅Յ զպարտաւոր պաշտամունս ներքին և արտաքին զօրութեամբք (1. 2. 3.).

## Բ. Առարկայ և Ենթակայ Կրօնք.

Հ. Ո՞յք են առարկայ և ենթակայ կրօնք.
Պ. Առարկայ Կրօնք է Ա՟ծ և Ա՟ծային իրք. իսկ Ենթակայ նորին է մարդն ըստ որում էակ մտաւոր և բարոյական.

## Գ. Նիւթ և Կերպ Կրօնք.

Հ. Ո՞յք են նիւթ և կերպ կրօնք.
Պ. Նիւթ Կրօնք են կրկնատեսակ ներգործութիւնք մարդկային հոգւոյ. այս՝ ՚ի միտս են ծանօթութիւնք գաղափարք և ճանաչմունք ճշմարտութեանց Ա՟յ և ածայնոց, որոց գումարն կոչի՝ Հաւատ. իսկ ՚ի կամս զգացմունք՝ բաղձանք՝ խանդք և գործողութիւնք ճանաչմանցն համաձայնք, որոց գումարն ասի՝ Բարք. և
Կերպ Կրօնք է ուղիղ եղանակն յանկելոյ և վերածելոյ զնիւթն յառարկայն.

## Դ. Վախճան կամ Նպատակն կրօնք.

Հ. Զի՞նչ է նպատակն կրօնք.
Պ. Նպատակ Կրօնք (ըստ մտաց նկատեալ՝) է ճանաչել զանսխալ ճշմարտութիւնս յԱ՟ծ և ՚ի մարդիկ վերաբերեալս. և (ըստ անձնիշխան կամացըն նկատեալ՝ է) ստանալ զանխոտոր բարոյականութիւն և զհամաձայնութիւն ընդ մէջ բարոյական կատարելութեան և ծայրագոյն երջանկութեան. որոց ՚ի վերայ գայ ստացումն վերջին վախճանին և անսահման երանութեան՝ առ որ սահմանեալ է մարդն.

## Ա. Ոգի կամ յատկութիւն Ճշմարիտ Կրօնի.

Հ. Զի՞նչ է յատկութիւն ճշմարիտ կրօնի։

Պ. Յատկութիւն Աստուածահաճոյ Կրօնի է յԱստուած ամբառնալ և ընդ Աստուծոյ միաւորել զհոգի և զսիրտ մարդոյ, զբանականութիւն առնել տէր՝ և իշխան զգայութեան զներքին և զարտաքին մարդոյն համօրէն նուաճել 'ի ծառայութիւն Աստուծոյ որդիական սիրով, և զբովանդակ վարս և զբարս ուղղել ըստ կամաց և պատուիրանաց Աստուծոյ։

Հ. Ո՞ր է առաջին 'ի ճշմարտութիւնս Կրօնի։

Պ. Բնականապէս նկատել՝ Առաջին Ճշմարիտ Նախադասութիւն 'ի Կրօնի է այս ,, Գոյ Աստուած Ամենասուրբ, Ամենաճշմարիտ և Ամենարդար ||. իսկ ըստ Յայտնականին նկատեալ՝ Առաջին Ճշմարտութիւն է այս Նախադասութիւն ,, Ջա՛ն դիր առաւել քան զառաւել պայծառ և ուղիղ ճանաչել զԱստուած, և գործեա՛ համաձայն ճշմարիտ ճանաչմանցդ. (4. 5. 6. 7. 8. 9.)

## Բ. Բաժանումն Կրօնի։

Հ. Զիա՞րդ բաժանի Կրօնն, կամ քանի՞ ազգք են կրօնի։

Պ. Կրօնն Ընդհանրապէս նկատել ըստ Էութեանն, ըստ Ընթացակային, ըստ Բնականին և ըստ Աղանդերացն բաժանի 'ի պէսպէս ազգս։

Հ. Զիա՞րդ բաժանի Կրօնն ըստ Էութեանն։

Պ. Կրօնն ըստ Էութենէ նիւթոյն և կերպին մտածել բաժանի 'ի Ճշմարիտ և 'ի Սուտ։

Հ. Զի՞նչ է կրօնն ճշմարիտ, և զի՞նչ կրօնն սուտ։

Պ. Ճշմարիտ Կրօն այն է՝ որ ճիշդ համաձայնի Աստուծոյ խրատում, որ ընդունելի և նմանակերպ է Սուրբ Գրոց խրատում, և որ քաջ միաձայնի Աստուծոյ և Ոգւոյ խրատում՝ Իսկ

Սուտ և ունայն կոչի Կրօնն որ չունի զասացեալ հանգամանսդ։

Խ. Ասա ինձ — Պարտակա՞ն է արդեօք ամենայն մարդ որոնել քննել թէ՝ Կրօնն՝ զոր կրէ ՚ի հոգւոջ իւրում՝ իցէ՞ արդեօք ճշմարիտ, թէ ո՛չ։

Պ. Այո՛՝ ըստ ամենայնի. վասն զի Սուրբ Գիրք հրամայեն զայն առնել (Տես 10. 11. 12. 13.)։

Հ. Քանի՞ ազգ են ներգործութեանց ճշմարիտ Կրօնի։

Պ. Որովհետև մարդն բաղկանայ ՚ի հոգւոյ և ՚ի մարմնոյ, ներգործութիւնք կրօնի ևս կատարին կամ՝ հոգւով, կամ մարմնով. և ըստ այսմ երբ Հոգւով միայն ներգործէ և պաշտէ մարդ զԱստուած, որպիսի են՝ ներգործութիւնք մտաց և կամաց, ճանաչել զԱստուած, հրճուիլ նովաւ, երախտագէտ լինել առնա, սիրել զնա, ևն՝ Կրօն այնպիսի կոչի՝ Ներքին, Հոգևոր, Մտաւոր, Կամաւոր։ Իսկ յորժամ Մարմնով ևս, ծնիւք և սուրբ արարողութեամբք պաշտէ զԱստուած, որպիսի են՝ երկրպագանել, ձայնիւ աղօթել, զոհել, պահել ՚ի կերակրոց, ևն՝ Կրօն այնպիսի կոչի՝ Արտաքին, Մարմնական, Զգալի Երևելի։

Հ. Քանի՞ տեսակք են ներքին և արտաքին Կրօնի։

Պ. Ներքին Կրօնի երկու են տեսակք, այն է՝ Հաւատ կամ Կրօն Մտաց, և Բարեպաշտութիւն կամ Կրօն Կամաց. նոյնպէս և

Արտաքին Կրօնի երկու են ազգք, այն է՝ Առանձ-նական կամ Գաղտնի Կրօն, և Հրապարակականն։

Հ. Որպիսի պարտին լինել Հաւատք և ծանօթութիւնք մեր զԱյ։

Պ. Ճանաչումն մեր զԱյ պարտի լինել, նախ՝ Ճշ-մարիտ, Ուղիղ և Ազատ ՚ի պէսպէս մոլորութեց. Երկրորդ՝ Բացայայտ և պայծառ, զի մթին և ան-բացորոշ Ճանաչումն ոչ օգուտ բերէ. Երրորդ՝ Կենդանի և գործօնեայ, այնպէս զի կարասցէ ծնանիլ և տածել զսէրն և զայլ առաքինութիւնս. և չորրորդ՝ անդադար Աճեցուն, այնպէս զի ՚ի բոլոր ընթացս կենաց մերոց յամ ժամու գուն գործեսցուք առաւելուլ և կատարելագործել զՃանաչմունս մեր զԱյ և զհաւատալ մեր ՚ի նա (14. 15. 16. 17. 18.)։

Հ. Որպիսի միջոցիւք կարեմք ճանաչել զԱծ.

Պ. Միջոցք ճանաչելոյ զԱստուած են, նախ՝ հասուն դատողութեամբ քննել զհանգամանս և զգործս բնութեն, զշարժմունս և զբնութիւն էակաց, յորոց ճանաչի Այ գոյութիւն, բարութիւն, իմաստու-թիւն, կարողութիւն, նախախնամութիւն և կառա-վարութիւն (19. 20). Երկրորդ՝ յաճախ ընթեռնուլ զսուրբ գիրս, քննել իմաստութեամբ զամ դի-պուածս շնորհաց և բնութեն անդ պատմեալս. Եր-րորդ՝ ընթեռնուլ զհոգեպատում մատեանս. Չոր-րորդ՝ լսել զքարոզութիւն Աստուածային բանից յեկե-ղեցւոջ, հարցանել զիմաստունս, և աղօթիւք խնդրել ՚ի Տեառնէ, զի տացէ մեզ զհոգի գիտութեն և իմաստութեն՝ խելամուտ լինիլ ճանապարհաց նորա։

Հ. Որք են մոլութիւնք հակառակք ներքին կրօնի.

Պ. Ներքին կրօնի դիմադրեալ մոլութեանց բազում են տեսակք, բայց երեւելիքն են՝ անաստուածութիւն, որ իսպառ ուրանայ զգոյութիւն Աստուծոյ (21.). Նիւթապաշտութիւն, կռապաշտութիւն, բազմաստուածութիւն, հաւատալ բախտի՝ ճակատագրի եւ դիպուածոյ, անտարբերութիւն՝ որ զոր եւ է կրօն բաւական համարի 'ի փրկութիւն, ծուլութիւն յուսանել զԱստուծաքինս, մեղադրելի տգիտութիւն հաւատալեաց, պաշտօն վարձկանական, կրօն բանդագուշեալ, հաւատք առանց սիրոյ, կեղծ բարեպաշտութիւն արտաքին առանց ներքին սրբութեան, ծիսապաշտութիւն որ զարտաքին ծէս ինչ կատարելով զուրկ 'ի ներքին զգացմանէ՝ համարի վճարել Աստուծոյ. եւ այլ նմանք.

Հ. Ո՞րդ բաժանի կրօնն ըստ ենթակային.

Պ. Երեք ազգք են կրօնից ըստ ենթակային, այն է՝ Մտացական, Զգայական եւ Գործական.

Խ. Ասա ինձ — զի՞նչ է կրօնն մտացական, զի՞նչ զգայականն եւ զի՞նչ գործականն.

Պ. Մտացական կրօն է, որով ոմանք 'ի մարդկանէ զկրօն եւ զաստուածպաշտութիւն իւրեանց հաստատեն միայն 'ի կարծեցեալ ուղիղ ճանաչմունս եւ 'ի դատողութիւնս զԱստուծոյ, եւ զամենայն այլազգ դատողս համարին մոլորեալս։

Զգայական ասի կրօնն, որ դնի 'ի պատկերակերպութիւնս երեւակայութեան, 'ի սաստիկ զգացմունս, եւ 'ի կեղծեալ միաւորութեան իւրեանց ընդ Աստուծոյ յայսմ աշխարհիս. Իսկ

Գործական է կրօնն այն, որ բովանդակ հա-

տալով 'ի գործս և յարարս բարեպաշտականս, և լինի կամ լոկ արտաքին կերպարանօք, որ է կեղծելն· և կամ ուղիղ դատողութբ, որք պարզէն գովելի և հարկաւոր է ամ մարդոյ·

Հ. Ո՞րպէս բաժանի կրօնն ըստ առարկային։

Պ. Կրօնն նկատմամբ Աստուծոյ իւրոյ բաժանի 'ի Միաստուածեան, որ զմի Ա̃ծ միայն պաշտէ, (որ կարէ լինել կամ ճշմարիտ՝ որպիսի է Քրիստոնէից· կամ սուտ՝ որպիսի է ոմանց կռապաշտից, որք 'ի միջի բազում ածոց իւրեանց զմի դնէին մեծ և առաջին ամենեցուն)· և 'ի Բազմաստուածեան, որ զբազում ածս այլ և այլ տեսակաւ պաշտէ, որպիսի է՝ կռապաշտութիւն բազմացեղ, տարրապաշտութիւն, անասնապաշտութիւն, աստեղապաշտութիւն, մարդապաշտութիւն· դիւապաշտութիւն, մանիքէութիւն՝ որ զերկուս սկզբունս իրաց դնէ, զբարի և զչար· ևն։

Հ. Ո՞րպէս բաժանի կրօնն ըստ աղբերացն։

Պ. Կրօնն՝ ըստ Աղբերացն յորոց առնու զճանաչմունըս զԱ̃յ և զԱ̃ծայնոց բաժանի 'ի Բնական և 'ի Գերբնական։

Հ. Ո՞րն է բնականն և ո՞րն գերբնականն։

Պ. Բնական Կրօն այն է, որով մարդն ինքնին դատողութեամբ և միօք իւրովք 'ի ձեռն լինելու- արարածոց կարէ գտանել զճշմարտութիւնս զԱ̃յ որպիսի էր կրօնն հեթանոս փիլիսոփայից 'ի հնումն։ Իսկ

Գերբնական կամ Յայտնական կրօն է այն, յորում զճշմարտութիւնս և զճանաչմունս զԱ̃յ առնու մարդն 'ի յայտնութենէն Ա̃յ· այսպէս էր, նախ՝

Կրօնն Նահապետաց յԱդամայ ց Մովսէս կեցելոց. երկրորդ՝ Կրօնն Մովսիսական կամ Հրէական, որ տեւեաց 'ի Մովսիսէ ց Քրիստոս. և երրորդ. Կրօնն Քրիստոնէական, որ սկսեալ 'ի Քրիստոսէ՝ տեւելոց է ցկատարած աշխարհի։

Հ. Ո՞ւր գտանին ճշմարտութիւնք Աստուածայայտ Կրօնի։

Պ. Ի միայն շտեմարան, ուր ամբարեալ կան երկնային ճշմարտութիւնք, է մատեանն, յորում բովանդակին պատգամք Քրիստոսի և Առաքելոց նորա, այլ և Մարգարէից և Նահապետաց, որք յԱստուծոյ ընկալեալք և 'ի Հոգւոյն Սրբոյ կրթեալք՝ խօսեցան և գրեցին զԱստուածավայել ճշմարտութիւնս յայլ և այլ ժամանակս, որոց գումարքն 'ի մի մատեան հաւաքեալ՝ կոչեցաւ Աստուածաշունչ Գիրք, Սուրբ Գիրք, յորում և յայտնապէս ասի թէ՝ գրողք նորա 'ի Հոգւոյն Սրբոյ շարժեցեալ խօսեցան և գրեցին (22. 23. 24. 25.)։

## Է. Յատկութիւնք Քրիստոնէական Կրօնի։

Հ. Քանի՞ են յատկութիւնք Քրիստոնէական կրօնի։

Պ. Գլխաւոր յատկութիւնք այդր կրօնի են երեք, այսինքն՝ Աստուածայնութիւն, Մշտնջենաւորութիւն և Ընդհանրութիւն։

Հ. Ի՞ւ հաստատի Աստուածային լինելն այսր կրօնի։

Պ. Աստուածային լինելն Քրիստոնէական կրօնի ապացուցանի. նախ՝ զի թէ հաւատալի և թէ գործելի ճշմարտութիւնք նորին են՝ սուրբ, մաքուր, Աստուածավայել և համաձայն ուղիղ բանականութեան մարդոյ։ Երկրորդ՝ զի Աստուած ետ 'ի հաստատել զկրօնս զայս արար զբազմադիմի ճշմարիտ

հրաշս և զսքանչելիս ձեռամբ քարոզչաց և դաւանողաց նորին, որպիսի են այնք՝ զորս զՔրիստոսէ և զառաքելոց պատմէ նոր Կտակարանն 'ի բազում տեղիս (26. 27. 28. 29. 30. 31. 32.) և յայտ է թէ՝ Ա՟ծ ոչ արդեօք ներգործէր ըզհրաշս առ'ի հաստատել զսուտ կրօն ինչ։ Երրորդ՝ զի Քրիստոս հիմնադիրն այսր կրօնի՝ արար զբազում կանխաձայն գուշակութիւնս և մարգարէութիւնս զապագայ իրաց և գործոց, որք լցան իրաւապէս յիւրում ժամանակի (33. 34. 35). և գիտելն զապագայս, մանաւանդ զազատ գործս մարդոյ, յատուկ է միայն Ա՟յ։

Հ. Ասա ինձ — ի՞ւ հաստատի մշտնջենաւոր լինելն Քրիստոնէական կրօնի։

Պ. Մշտնջենաւոր լինելն այսր կրօնի հաստատի թէ 'ի պատգամաց Սուրբ Գրոց (36. 37.). և թէ 'ի փորձոյ, զի չկնի այսչափ դարուց և յետ լուսաւորելոյ պէսպէս ազգաց՝ գիտուե՟ց և արուեստից, ոչ ուրեք յայտնեցաւ կրօն ինչ լաւագոյն քան զայս։

Հ. Ո՞րով ցուցանի ընդհանրութիւն Քրիստոնէական կրօնի։

Պ. Ընդհանրութիւն այսր կրօնի ցուցանի թէ 'ի յատկանշաց նորին, որպիսի են՝ Ազդուութիւն, որով մարթացաւ 'ի սուղ ժամանակի կործանել զբազմաժամանակեայ կռապաշտութիւնս զանազան ազգաց, դարձուցանել զանթիւ ժողովուրդս 'ի ճանաչել զՃշմարիտն Ա՟ծ, և փոխել զանառակ պիղծ վարս հեթանոսաց 'ի հրեշտակային սրբութիւն. և Ամրապինդ հաստատութիւն 'ի դա-

ւանօղս իւր, զի սարսափելի չարչարանօք ան-
Թիւ հալածչաց ոչ կարացին տկարացուցանել
զ՚Քրիստոնեայս յուրանալ զայս կրօն, որպ՟ պատմեն
վարք անհամար սրբոց մարտիրոսաց.— և Թէ
վկայութի՟ Ն.Ճ (38. 39. 40.)։ (Բայց Թէ ար-
գեամբք ոչ է տարածեալ Քրիստոնէութի՟ յամ՟
մանր մասունս աշխարհի, և յամ՟ ազգս և ՚ի լե-
զուս, այդ ոչ է առ յանցանաց կրօնին, այլ դա-
ւանողաց և քարոզչացն. որոց վարք ոչ համա-
ձայնելով դաւանութե՟ն՝ փոխանակ շինութեան
բարի օրինակօք՝ գայթակղութի՟ տան անհաւա-
տից)։

## Բ. Մասունք Կրօնագիտութեան։

Հ. Քանի՞ են մասունք Կրօնագիտութե՟ն։
Պ. Որովհետև առարկայ այսր գիտութե՟ է կրօնն, և
՚ի կրօնի երկու ինչ պարունակին իբրև նիւթ,
այն է՝ Հաւատալի և Գործելի Ճշմարտութիւնք.
յայսմանէ և ուսումն Կրօնի բաժանի յերկուս
մասունս, որոց առաջինն կոչի՝ Հաւատագիտական,
և երկրորդն Բարոյագիտական։

# ՅՕԴՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

## Յաղագս Հաւատոյ

Խ. Ասա ինձ 'ի լուր — Զո՞րպիսի կրօն ունիս դու։

Պ. Ես ունիմ զԳերբնական Կրօնն Քրիստոնէական ըստ Ուղղափառ դաւանութեան Առաքելական Եկեղեցւոյ Լուսաւորչական Հայոց։

Հ. Որո՞վ արդեօք յայտ է քեզ, թէ ունիս զԿրօնն Քրիստոնէական։

Պ. Այնու. զի կրեմ 'ի հոգւոջ իմում զճշմարիտ և զուղիղ Հաւատն Քրիստոսի, ուսեալ եմ և ճանաչեմ զա̃մ հաւատալի առարկայս, հաւանիմ և ընդունիմ զայն ա̃մ; և զբոլոր վստահութի̃ իմ դնեմ յարդիւնս Յիսուսի Քրիստոսի, որով և կոչիմ Քրիստոնեայ։

Հ. Զի՞նչ է Հաւատն։

Պ. Հաւատն կամ Հաւատալն է՝ ներգործութի̃ մտաց, որ բացորոշ ճանաչէ և ստոյգ լինել դատի զա̃մ ճշմարտութի̃ս, որք զԱ̃յ և զԱ̃ծայնոց յայտնեալ կան 'ի Հին և 'ի Նոր Կտակարանս Ա̃ծաշունչ Գրոց (41. 42. 43. 44. 45. 46.)։

Հ. Զի՞նչ են հաւատալի առարկայք։

Պ. Հաւատալի Առարկայք են՝ այն ա̃մ անսուտ ճշմարտութի̃ք 'ի Սուրբ Գիրս աւանդեալք, որք ստորագրեն մեզ զԷութի̃ն Ա̃յ, զԱ̃նձինսն, ըզ-Յատկութի̃ս և զայլ կատարելութի̃ս և զվե-րաբերութի̃ս նորա առ ազգ մարդկային։

Հ. Յումմէ՞ պարտիմք ուսանիլ զայնս։

Պ. Զայն ա̃մ առանց սխալանաց և Ուղղափառ մը-

տօք ուսուցանէ մեզ յԱ՟ծաշունչ Մատենէն՝ Մայրն մեր Առաքելական Սուրբ Եկեղեցին հայաստանեայց միաբանեալ ընդ Ծայրագոյն Անկախ Պատրիարգ Կաթուղիկոսին Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի։ Իսկ զհամառօտ բովանդակութիւն հաւատալեաց ուսուցանէ Սուրբ Եկեղեցին հայոց՝ քարոզելով ՚ի հանգանակին հաւատոյ։

Խ. Ասա աստ ՚ի լուր իմ զհանգանակն հաւատոյ։

Պ. Հաւատամք ՚ի մի Ա՟Ծ ՚ի հայրն ամենակալ՝ յարարիչն երկնի և երկրի՝ երևելեաց և աներևութից. և ՚ի մի Տէր Յ՟Ս Ք՟Ս յՈրդին Ա՟Յ ծնեալն յԱ՟Յ հօրէ միածին՝ ո՟՝ յէութենէ հօր. Ա՟Ծ յԱ՟Յ Լոյս ՚ի լուսոյ, Ա՟Ծ ճշմարիտ՝ յԱ՟Յ ճշմարտէ, ծնունդ և ոչ արարած. նոյն ինքն ՚ի բնութէ հօր. որով ա՟մ ինչ եղև յերկինս և ՚ի վ՟ր երկրի երևելիք և աներևոյթք, որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութե՟՝ իջեալ ՚ի յերկնից մարմնացաւ՝ մարդացաւ՝ ծնաւ կատարելապէս ՚ի Մարիամայ սրբոյ կուսէն հոգւովն Սրբով, որով էառ մարմին՝ հոգի և միտք և զա՟մ՝ որ ինչ է ՚ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք. չարչարեալ՝ խաչեալ՝ թաղեալ՝ յերրորդ աւուր յարուցեալ՝ ելեալ ՚ի յերկինս նովին մարմնով՝ նստաւ ընդ աջմէ հօր. գալոց է նովին մարմնովն և փառօք հօր ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութե՟ն ոչ գոյ վախճան։

Հաւատամք և ՚ի Սուրբ հոգին յանեղն և ՚ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և ՚ի մարգարէս և յաւետարանս, որ էջն ՚ի յորդանան՝ քա-

ողեաց զառաքեալսն՝ և բնակեցաւ ՚ի սուրբսն. Հաւատամք և ՚ի մի միայն՝ ընդհանրական և առաքելական Եկեղեցի. ՚ի մի մկրտութիւն՝ յապաշխարութիւն՝ ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց. ՚ի յարութիւն մեռելոց. ՚ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց. յարքայութիւն երկնից, և ՚ի կեանսն յաւիտենականս։

Հ. Ասա ինձ բացորոշ կարգաւ — քանի՞ են նիւթք կամ անդամք Հաւատոյ յայդմ Հանգանակի։

Պ. Գլխաւոր անդամք Հաւատալի Առարկային յայսմ են Ութ սոքին, 1. Գոյութիւն և Միութիւն Աստուծոյ, 2. Երրորդութիւն Անձանց նորին, 3. Մարդեղութիւն Որդւոյն Աստուծոյ 4. Երկրորդ գալուստ նորա, 5. Աստուածութիւն Հոգւոյն Սրբոյ, 6. Հաճութիւնք Կամացն Աստուծոյ 7. Եկեղեցի Քրիստոսի Եօթն Սուրբ Խորհրդոց և պատուիրանաց իւրոց, և 8. Վերջինք մարդոյ։

## Դաս Ա.

### Գոյութիւն և Միութիւն Աստուծոյ.

Հ. Զի՞նչ է Աստուած, և զիա՞րդ սահմանի։

Պ. ԱՍՏՈՒԱԾ է էութիւն կամ էակ ինքնագոյ և յաւիտենական, յանհունս իմացական, ամենակատարեալ, ամենահարկաւոր, աղբիւր ամենայն բարութեանց, ստեղծող, կառավարիչ և Տէր ընդհանուր տիեզերաց։

Հ. Զիա՞րդ հնար է ապացուցանել, թէ՝ գո՞յ Աստուած.

Պ. Զգոյութիւն Աստուծոյ հնար է ապացուցանել ոչն

փաստիւք. — Նախ՝ քննելով զարարչութիւն անձանց մերոց և բովանդակ ազգի մարդկան. զի առաջին մարդն, յորմէ սկսաւ սերիլ ծննդեամբ և յառաջագոյիլ ազգ մարդկան, էառ զսկիզբն գոլոյ. և յայտ է թէ՝ չէր ինքն պատճառ իւրումն գոյացութեան, վասն զի որ ինչ ոչ գտանի յէութեան՝ ոչ կարէ լինիլ և 'ի ներգործութեան (ստեղծանելոյ զինքն). ապա անհնարին էր նմա առնուլ զսկիզբն գոյութեան իւրոյ յինքենէ։ Հարկ է ուրեմն խոստովանիլ, թէ՝ գոյ առաջին սկզբնապատճառ ոք ամենակատար, ամենակարող, ինքնեղ և անստեղծեալ. որ այն ինքն է Ա.Ծ. յորմէ առաք զգոյութիւն և՛ մեք, և՛ ա՟մ եղականք 'ի տիեզերս ողջոյն։ Երկրորդ՝ նկատելով զեղելուն աշխարհի, որ է պատահական ինչ, և կարէր ունիլ կամ չունիլ զգոյութիւն և զայսպիսի գեղեցկութիւն. ուրեմն հարկ է՝ զի գտցի այլ ոմն էակ ամենիմաստ, ամենագէտ և ամենազօր, որ յիւրում իշխանութեան ունիցի առնել զգոյութիւն աշխարհի և կարգել 'ի նմին զայնպիսի կատարելութիւն։ Երրորդ՝ զննելով զշարժմունս և ըզգործողութիւնս ա՟մ արարածոց. Չորրորդ՝ միաձայն խոստովանութեամբ ա՟մ ազգաց, թէ գիտնոց, և թէ՝ տգիտաց յա՟մ ժամանակս և յա՟մ տեղիս 'ի սկզբանէ աշխարհի մինչև ցայսօր։ Հինգերորդ՝ վկայութեամբ Ա.ծաշունչ գրոց հին և նոր կտակարանաց, յորս ա՟մ ուրեք քարոզի գոյութիւն Ա.Յ։ Վեցերորդ՝ դատաստանաւ խղճմտանաց մերոց, որ 'ի գործել մեր զբարի ինչ՝ մխիթարէ զմեզ, իսկ 'ի գործել զչարիս՝ յանդիմա-

նէ և տանջէ։ Եօթներորդ՝ բնաւոր ցանկութիւն սրտի մերոյ առ ծայրագոյն բարի ոմն. զի մարդ զարդարեալ գոլով ազատ անձնիշխանութեամբ՝ 'ի խնդիր երջանկութեան դեգերի յայսմ աշխարհի. և առ այս՝ հարկաւ պարտի լինել ոմն բարոյական օրէնսդիր, դատաւոր և վարձատրիչ, որ է նոյն ինքն Աստուած։ Ութերորդ՝ զօրութեամբ ճշմարիտ սքանչելեաց և հրաշից՝ ձեռամբ Քրիստոսի և այլոց գործելոց, զի առ հրաշագործութիւն հարկաւ պահանջի ամենակարողութիւն, ուրեմն և Աստուածութիւն։

Հ. Քանի՞ անձք գոն։

Պ. Մի միայն է Ճշմարիտ Աստուած՝ արարիչ երևելեաց և աներևութից, վարձատու բարեգործաց և պատժօղ չարագործաց. վասն զի բազմութիւն անձոց յայտնի հակառակ է ուղիղ բանականութեան. զի թէ լինէին երկու կամ բազում անձք 'ի միմեանց զանազանք, յայնժամ և ոչ մին 'ի նոցունց լինէր ամենակատարեալ. վասն որոյ և միութիւն կամ մի լինելն է բուն իսկութիւն ճշմարտին Աստուծոյ։

Հ. Զի՞նչ են ստորոգելիք Աստուծոյ։

Պ. Ստորոգելիք կամ յատկութիւն կոչին այնպիսի կատարելութիւնք Աստուծոյ, որք ըստ եղանակի տկար իմացման մերոյ՝ հոսին յԱստուածային յանսահման էութենէ անտի, որք և բաժանին 'ի Բացարձակս, որպիսի են Պարզութիւն, Անչափութիւն, Յաւիտենականութիւն, Անկախութիւն, Բարութիւն, Ամենուրեքութիւն. ևն. և Յարաբերականս, որպիսի են՝ Ամենագիտութիւն, Սէր կամ Մարդասիրութիւն, Ողորմածութիւն, Համբերութիւն Սրբութիւն, Արդարութիւն, ևն։

## Դաս Ը.

### Երրորդութիւն Անձանց Աստուծոյ

Հ. Քանի՞ են Անձինք յԱծ, և զիա՞րդ կոչին։

Պ. Թէպէտ Ած Մի է Բնութեամբ և Էութբ, սակայն գոն ՚ի նմա երեք անձինք՝ զանազանեալք ՚ի միմեանց, որք կոչին՝ ՀԱՅՐ, ՈՐԴԻ, և ՀՈԳԻ ՍՈՒՐԲ, որ հաւասարապէս ունին զմի և նոյն զէութիւն Ածային, զի Հայր է Ճշմարիտ Ած, Որդին է Ճշմարիտ Ած, և Հոգին Սուրբ է Ճշմարիտ Ած. սակայն ոչ են երեք ածք, այլ Մի Ած և Տէր՝ Արարիչ ամ արարածոց։

Հ. Զիա՞րդ ապացուցանի, թէ՝ գոն երեք անձինք յԱծ։

Պ. Ոչ բանականութեամբ, այլ վկայութեամբ Սբ Գրոց ապացուցանի խորհուրդ Ամենասուրբ Երրորդութեն. զի

՚Ի Հին Կտակարանին ասի „ Եւ ասէ Տէր Աստուած, ահա Ադամ եղև իբրև զմի ՚ի մէնջ (Ծննդոց. Գ. 22). — Բանիւ Տեառն երկինք հաստատեցան, և Հոգւով բերանոյ նորա ամ զօրութիւնք նոցա (Սաղմ. ԼԲ. 6). — Ես ընդ ձեզ եմ՝ ասէ Տէր Ամենակալ. և Բանն զոր ուխտեցի ընդ ձեզ, և Հոգին իմ որ կայ ՚ի միջի ձերում (Անգէա. Բ. 5. 6.)։ Իսկ

՚Ի Նոր Կտակարանին Քրիստոս հրամայեաց մկրտել յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. — ՚Ի մկրտիլ անդ Քսի՝ ձայնն Հօր լսելի

եղև, Որդին (Քրիստոս) կայր 'ի յորդանան, և Հոգին սուրբ էջ աղաւնակերպ. — և սուրբն Պօղոս մաղթէ կորնթացւոց ,, շնորհք Տեառն մերոյ Յսի Քսի, և սէրն ԱՅ (Հօր), հաղորդութիւն Հոգւոյն Սրբոյ, ընդ ձեզ ամենեսին (Բ. Կորն. Ժգ. 13.)։

Հ. Որո՞վ զանազանին երեք անձինքդ յիրերաց։

Պ. Առանձնութեամբք իւրեանց. Եթէ զի Հայր ո՛չ է ծնեալ և ո՛չ բղխեալ յայլոց, այլ ինքն ծնանի 'ի յաւիտենից զորդին և բղխէ զհոգին սուրբ. — Որդին ծնեալ է 'ի հօրէ. — Իսկ հոգին սուրբ բղխեալ և ելեալ է նոյնպէս 'ի հօրէ ըստ վկայելոյ Քսի ԱՅ մերոյ։

Հ. Որո՞վ փաստիւք ապացուցանի թէ՝ Հայր իցէ ԱԾ։

Պ. ԶԱԾութին Հօրն ապացուցանեն. Նախ՝ Անուանք ԱՅ միայնոյ պատշաճեալք. Երկրորդ՝ Ստորոգելիք միում Ճշմարտին ԱՅ յատկացեալք. Երրորդ՝ Գործողութիւնք թէ ներքինք և թէ արտաքինք Ճշմարտի ԱԾայինք. և չորրորդ՝ Պաշտօն յարարածոց միայնոյ ԱՅ ընծայելի։ Լի են յԱԾաշունչ գիրս վկայութիւնք որ զայս ամ քարոզեն (յորոց զմին ընթերցի՛ր 47.)։

Հ. Որո՞վ փաստիւք ապացուցանի թէ՝ Որդին իցէ ԱԾ։

Պ. ԶԱԾութին Որդւոյն ապացուցանեն՝ Նախ՝ ԱԾավայելուչ անուանք նմա ընծայեալք, զի 'ի Սբ գիրս կոչի նա՝ Մեծ ԱԾ և փրկիչ (48. 49.). 'ի վերայ ամենեցուն ԱԾ օրհնեալ (50). Տէր փառաց (51). Պատկեր աներևութին ԱՅ (52).

Լոյս փառաց և նկարագիր էութեան Հօր (53). Ճշմարիտ Ա՛ծ և Կեանք յաւիտենական (54). Որդի միածին. առ 'ի Հօրէ. միածին Որդի որ 'ի ծոց Հօր (55). Որդի անդրանիկ. Հրեշտակաց գերազանց. հաւասար Հօր Ա՛ծ (56. 57. 58.)։
Երկրորդ՝ ստորոգելիք Ճշմարտին Աստուծոյ պատշաճեալք. որք և նմին ինքեան Որդւոյն ընծային. որպիսի են՝ Յաւիտենականութիւն (59. 60. 61.). Ամենակարողութիւն (62. 63.). Ամենուրեքութիւն (64.). Ամենագիտութիւն. (65. 66. 67.). Անխաբ Ճշմարտութ՛ի. (68. 69. 70.)։
Երրորդ՝ գործողութիւնք յԱ՛ծային զօրութենէ բղխեալք, որք ընծային Որդւոյն, որպիսի են՝ Ստեղծանել զաշխարհս (71.). Պահպանել և կառավարել զտիեզերս (72.). Զմեռեալս յարուցանել (73. 74.). Ճշմարիտ հրաշս գործել զորս վկայեն Աւետարանիչք 'ի բազում տեղիս. Հիմնել, պահպանել և փրկել զեկեղեցին Ա՛ծ (75. 76. 77.). Դատել զտիեզերս (78.). Նստիլ ընդ աջմէ Հօր Ա՛ծ (79.). Քննել զծածուկս սրտից գաղտնեաց (80.)։
Չորրորդ՝ առնուլն Որդւոյ յարարածոց զԱ՛ծավայել պաշտօն (81. 82. 83. 84.)։

## Հատուած. Գ.

### Մարդեղութ՛ի Որդւոյն Ա՛ծ, և յարաբերութիւնք նորին։

Հ. Սուրբ գիրք զի՞նչ այլ ևս ընծայեն Որդւոյն Ա՛ծ։
Պ. Ընծայեն նմա զՄարդեղութ՛ի, զՇնորհնութիւն, զՓրկագործութ՛ի, և զԵրկրորդ Գալուստ։

Հ. Զի՞նչ է մարդեղութիւն Որդւոյն Ա՟յ։

Պ. Մարդեղութիւն է ներգործութիւն, ըստ որոյ Որդին Ա՟ծ էառ զմարդկային բնութիւն մեր յարգանդի կուսին Մարիամու և միաւորեաց ընդ անձին և բնութեան իւրոյ անխառն և անշփոթ միաւորութեամբ, և եղև մարդ ճշմարիտ ՚ի կուսէն ծնեալ. որոյ յատուկ անուն եղաւ՝ ՅԻՍՈՒՍ որ է Փրկիչ. կոչեցաւ և՝ ՔՐԻՍՏՈՍ, այսինքն՝ Օծեալ կամ Մեսիա (Ղուկաս. ա. 31. Յովհ. ա. 41.)։

Հ. Քանի՞ անձինք, և քանի՞ բնութիւնք են ՚ի Յ՟ս Ք՟ս։

Պ. Մի միայն է անձն ՚ի Քրիստոս, և այն Ա՟ծային և ոչ մարդկային. իսկ բնութիւնք ՚ի նմա են Ա՟ծային և մարդկային, բայց անշփոթ և անբաժան միաւորեալք ՚ի միում անձին բանին. ըստ որում թէ՝ Ա՟ծային և թէ՝ մարդկային բնութիւնք ոչ կորուսին զիւրեանց յատկութիւնս և զտարբերութիւնս, և ոչ խառնեալ շփոթեցաւ մին ՚ի միւսն, այլ երկաքանչիւրն ևս կան և մնան ամբողջ. և այսպիսի սքանչելի միաւորութեամբ Քրիստոս Տէրն մեր է՝ կատարեալ Ա՟ծ և կատարեալ Մարդ, որպէս դաւանին սուրբ Հարքն Եկեղեցւոյս մերոյ։

Հ. Քանի՞ կամք և քանի՞ ներգործութիւնք են ՚ի Ք՟ս Յ՟ս։

Պ. Որովհետև Յիսուս Քրիստոս է կատարեալ Ա՟ծ և կատարեալ մարդ, ապա հարկաւ ունի նա թէ՛ զԱ՟ծային կամս և զներգործութիւնս, և թէ՛ զմարդկայինս։ Զայս ուղղափառութիւն յայտ յանդիման դաւանի և քարոզէ Եկեղեցին Հայոց ՚ի Հաւատապատում գիրս իւր։

Հ. Զի՞նչ և ո՞յք են տնօրէնութիւնք Որդւոյն Ա՟յ։

Պ. Տնօրէնութիւնք են պէսպէս խորհուրդք մարդե-

ղուէ նորա յընթացս կենացն. որպիսի են՝ Յղութիւն, Ծնունդն, Մկրտութիւն, Քարոզութիւն, Հրաշագործութիւնք, Այլակերպութիւն, Չարչարանք, Մահ, Յարութիւն, Համբարձումն, և Նստիլն ընդ աջմէ Հօր, զորս դաւանիմք 'ի Հանգանակի մերում:

Հ. Զի՞նչ է փրկագործութիւն Որդւոյն Ա՟յ:

Պ. Փրկագործութիւնն է այն պաշտօն նորա, որով եղեալ միջնորդ հաշտեցուցիչ 'ի մէջ Աստուծոյ մարդկային ազգի բարկացելոյ և մարդոյ մահուչափ մեղօք յԱստուծոյ օտարացելոյ՝ փրկեաց և ազատեաց զազգ մարդկան 'ի բարկութենէն Ա՟յ, 'ի մեղաց, 'ի պատժոյ և 'ի դատապարտութենէն դժոխոց: Եւ վասն այսր կոչեցաւ Քրիստոս՝ Քահանայ, Մարգարէ և Թագաւոր. վասն զի ըստ որում Ճշմարիտ Քահանայապետ նոր օրինացս՝ ճիշդ օրինապահութ՟բ և պատարագաւ մարմնոյ և արեան իւրոյ՝ փոխանակ մեր Աստուածային արդարութեանն վճարեաց, և վասն փրկութ՟ն ա՟մ մարդկան աղօթս և բարեխօսութիւնս առ Հայրն Ա՟յ մատոյց. — ըստ որում Մարգարէ՝ զկամս և զպատուիրանս Ա՟յ մեզ մեկնաբանեաց՝ գործեաց զզանազան հրաշս և յայտնեաց հրապարակաւ ազգի ազգի կանխաձայնութիւնս. — Իսկ ըստ որում Թագաւոր՝ եղև Տէր ա՟մ երկնաւորաց, և երկրաւորաց, Գլուխ և կառավար Եկեղեցւոյ իւրում Սրբոյ. վասնորոյ և ծայրագոյն մեծվայելչութ՟բ զա՟մ ինչ 'ի կարգի բնութեան՝ շնորհաց և փառաց ուղղէ և տնօրինէ 'ի փառս Հօր իւրոյ և յօգուտ ընտրելոց հաւատացելոց (85. 86. 87. 88. 89. 90. 91. 92. 93):

Հ. Ո՞րք ՚ի վեր էառ Քրիստոս զայդոսիկ երիս պաշտօնսդ։

Պ. Զպաշտօն Քահանայութեան և Մարգարէութեան կատարեաց Քրիստոս ՚ի Վիճակի Ունայնացուցման. իսկ զպաշտօն Թագաւորութեան ՚ի Վիճակի Բարձրութեան։

Հ. Որպիսի՞ ինչ էր վիճակն ունայնացուցման Քրիստոսի։

Պ. Վիճակ ունայնացուցման ասի այն վիճակ կենացն Քրիստոսի, յորում զփառս Աստուածութեան ոչ ՚ի վեր էառ նա, այլ ծառայական կերպիւ մարդոյ զգառն չարչարանս և զմահ յանձին կալաւ վասն փրկութեան մերոյ. և այս վիճակ նորա տևեաց ՚ի Յղութենէն մինչև ցԹաղումն ՚ի գերեզմանի (94.)։

Հ. Զի՞նչ է վիճակն բարձրութեան Քրիստոսի։

Պ. Վիճակ բարձրութեան կոչի այն, յորում Քրիստոս ՚ի բաց եդեալ զծառայական կերպարան և զամենայն տկարութիւն մարդկութեան՝ սկսաւ վարել զԱստուածային մեծվայելչութիւն իւր. որոյ աստիճանքն են՝ Իջումն նորա ՚ի դժոխս, Յարութիւն ՚ի մեռելոց, Համբառնալն յերկինս և Նստիլն ընդ աջմէ Հօր յաթոռ փառաց իւրոց։

Հ. Զի՞նչ օգուտ եղև մեզ ՚ի մարդեղութենէն Քրիստոսի։

Պ. Յիսուս Քրիստոս եկն յաշխարհս առ ՚ի փրկել զմեղաւորս, զոր լրացոյց նա չորիւք. Ա) Ուսուցանելով մեզ զամենայն ճշմարտութիւնս զԱստուծոյ և զԱստուածայնոց. Բ) Բարի օրինակաւ անարատ վարուց և կենաց իւրոց. Գ) Մահուամբ և հեղմամբ արեան իւրոյ. Դ) Արդիւնաւորելով վասն մեր զամենայն շնորհս Հոգւոյն Սրբոյ հարկաւորս փրկութեան մերոյ (95. 96. 97. 98. 99.)։

Հ. Առ ի՞նչ պարտաւոր եմք մեք Քրիստոսի վասն փրկագործութեան նորա։

Պ. Որովհետեւ Քրիստոս ազատեաց զմեզ 'ի մեղաց եւ 'ի դժոխոց. վասն այսորիկ ամ՟ քրիստոնեայ մահուչափ մեղօք պարտապան է. Նախ՝ ճանաչել զնա, հաւատալ եւ դաւանել զնա եւ զուսումն նորա, եւ ոչի՛նչ օրինակաւ եւ ո՛չ երբեք ուրանալ զհաւատս նորա (100. 101. 102). Երկրորդ՝ յարգել եւ պատուել զնա ծայրագոյն մեծարանօք, զի է համագոյակից Հօր եւ միջնորդ Ա՟Յ եւ մարդկան (103. 104). Երրորդ՝ յետ Հօրն Ա՟Յ զյոյս եւ զվստահութի՟ն իւր դնել 'ի նա (105. 106. 107.). Չորրորդ՝ սիրել զնա 'ի բոլոր սրտէ եւ եւ յա՟մ զօրութ՟է ընդ պահպանութ՟բ պատուիրանաց նորա (108. 109. 110. 111.). Հինգերորդ՝ նմանիլ վարուց եւ առաքինութեանց նորա (112. 113.). Վեցերորդ՝ հնազանդել հրամանաց նորա եւ գործով կատարել զպատուիրանս նորա (114. 115. 116.).

## Հատուած Գ.

### Երկրորդ Գալուստ Որդւոյն Աստուծոյ.

Հ. Ասա ինձ — Ե՞րբ պարտի լինիլ երկրորդ Գալուստ Որդւոյն Աստուծոյ.

Պ. Երկրորդ Գալուստ Որդւոյն Ա՟Յ պարտի լինիլ 'ի վախճանի աշխարհիս, զորոյ զժամն կամ զժամանակն ո՛չ ոք գիտէ, բայց միայն Հայրն Ա՟Ծ, որ յերկինս է (117.).

Հ. Արդ ի՞նչ վախճան ունի լինել երկրորդ գալուստ Որդւոյն Աստուծոյ, և ո՞յք են նշանք այնր գալստեան։

Պ. Երկրորդ գալուստ Յիսուսի Քրիստոսի է առ ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս և հատուցանել իւրաքանչիւր ումեք ըստ գործոց իւրոց զվարձս կամ զպատիժ։ Այլ վասն նշանաց և եղանակի Գալստեան նորա հարկ է ընթեռնուլ (՚ի Մատթ. Իդ. յ2—ց39. և Ղուկաս. Իա. ՚ի5—ց36.) զբուն բանս նորին ինքեան Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ խօսեցելոյ ՚ի նմանէ վասն այսր առ աշակերտսն իւր։

## Դաս Ե.

## Աստուածութիւն Հոգւոյն Սրբոյ։

Հ. Որո՞վ փաստիւք ապացուցանի, թէ՝ Հոգին Սուրբ իցէ ճշմարիտ Աստուած։

Պ. Աստուածութիւն Հոգւոյն Սրբոյ ապացուցանի նովիմբք, զի՝ Նախ՝ Սուրբ գիրք ընծայեն նմա զանունն Աստուած։ Երկրորդ՝ ընծայեն նմա Աստուածավայել ստորոգելիս. որպիսի են Ամենակարողութիւն, Ամենագիտութիւն, Անսահմանութիւն, Նախագուշակութիւն։ Երրորդ՝ ընծային նմա գործողութիւնք միայնում Աստուծոյ պատշաճեալք. այսպիսի են՝ Ստեղծանել, պահպանել, Հրաշս գործել, Առաքել և օծանել զՄեսիայն որ է Քրիստոս, Կառավարել զԵկեղեցին և զպաշտօնեայս նորա, Սրբել՝ լուսաւորել և արդարացուցանել զհաւատացեալս։

Չորրորդ՝ ընծայել նմա պաշտօն Ա̃ծավայել յա-
րարածոց: Արդ այս ամ̃ յայտնի հաստատեն, թէ՝
Հոգին Սուրբ է որիշ անձն և Ճշմարիտ Ա̃ծ
հաւասար Հօր և Որդւոյ (118. 119. 120. 121.
122. 123. 124. 125. 126. 127. 128. 129. 130.
131. 132. 133. 134. 135. 136. 137.):

Հ. Յումմէ՞ ելանէ կամ բղխի անձն Հոգւոյն Սրբոյ:

Պ. Քրիստոս Տէրն մեր պարզ բանիւ ուսուցանէ,
թէ՝ Հոգին սուրբ ՚ի Հօրէ ելանէ (138.). և
ամ̃ հաւատապատում գրեանք Հայոց Եկեղե-
ցւոյն այդպէս քարոզեն ամ̃ ուրեք. ապա և մեզ
պարտ է այդպէս հաւատալ՝ հետևելով Աւետա-
րանին Քրիստոսի և սրբոյ Հարց եկեղեցւոյ
մերոյ:

Հ. Քանի՞ են պարգևք և պտուղք Հոգւոյն Սըր-
բոյ:

Պ. Պարգևք Հոգւոյն Սրբոյ ՚ի սուրբ գիրս կոչին
այս եօթն առաքինութիւնք՝ Իմաստութիւն,
Հանճար, Խորհուրդ, Զօրութիւն, Գիտու-
թիւն, Ա̃ծպաշտութիւն և Երկիւղ: Իսկ
Պտուղք Հոգւոյն Սրբոյ անուանին երկոտասան
այսոքիկ՝ Սէր, Խնդութիւն, Խաղաղութ̃ն, Եր-
կայնմտութիւն (Համբերութիւն), Քաղցրութ̃ն,
Բարութիւն, Հաւատարմութիւն, Հեզութ̃ն,
Ժուժկալութիւն (Համեստութիւն և Ողջա-
խոհութիւն). (Եսայ. ժա. 1. 2. 3. — Գաղատ.
ե. 22. 23.

## Դաս Ժ.

### Հաճութիւնք կամացն Ա.Յ.

Հ. Զի՞նչ են հաճութիւնք կամացն Ա.յ։

Պ. Հաճութիւնք կամացն Ա.յ են վճիռք և արտաքին ներգործութիւնք Ա.ծային կամաց, որք սահմանեն զգոյութիւն, զեղանակ և զայլ հանգամանս արարածոց (ըստ պյնմ՝ 139.)։ Այս հաճութիւնք կոչին ևս՝ Հրաման, Խորհուրդ, Յառաջադրութիւն և Կանխագիտութիւն Աստուծոյ, և այլ նմանք։

Հ. Քանի՞ք են հաճութիւնք կամացն Ա.յ։

Պ. Յինքեան յԱ.ծ նկատեալ՝ մի միայն է կամք և վճիռ նորա, բայց ըստ մերոյս իմացուածոյ՝ բաժանին յայլ և այլ տեսակս, որոց գլխաւորքն են Ստեղծագործութիւն աշխարհի, հրեշտակաց և մարդկան, Նախախնամութիւն և Շնորհաբաշխութիւն։

Հ. Զի՞նչ է ստեղծագործութիւն աշխարհի։

Պ. Ստեղծագործութիւն աշխարհի է արտաքին գործողութիւն Երեքանձնեայ Ա.ծութեան, որ յոչնչէ գոյացոյց զաշխարհս և զամ էակս 'ի միջոցի վեց աւուրց՝ 'ի ցոյց մեծվայելչութեան փառաց իւրոց և յօգուտ մարդկայինս ազգի։

Հ. Զի՞նչ են հրեշտակք։

Պ. Հրեշտակք են ստեղծեալ ոգիք, աննիւթք, լրացեալք, իմացականք և ազատականք, կարգեալք 'ի ծառայութիւն Ա.յ, որոց գոյութիւն հաստատի 'ի Սուրբ գրոց։ Բաժանին սոքա 'ի բարի հրեշ-

տակս, և 'ի չարս, որք ասին ես՝ դևք, և դըխաւոր նոցա՝ սատանայ։

Հ. Զի՞նչ է մարդն։

Պ. Մարդն է կենդանի բաղադրեալ յիմացական յանմահ հոգւոյ և 'ի զգայական մարմնոյ, և ստեղծեալ յԱ՟յ 'ի պատկեր նորա առ 'ի ծառայել նմա պատուիրանապահութեամբ յայսմ աշխարհի և 'ի վայելել ընա 'ի հանդերձեալ կեանս 'ի յաւիտեան (140. 141.)։

Հ. Զի՞նչ է պատկերն Աստուծոյ, ըստ որոյ ստեղծեալ ասի մարդն։

Պ. Պատկեր և նմանութիւն Ա՟յ 'ի մարդս իմացեալ լինին լուսաւոր գիտութիւն և իմաստութիւն մտաց, և սրբութիւն կամ անմեղութիւն կամաց, զորս ամ՟ մարդ պարտի ստանալ յայսմ աշխարհի. զի նմանեսցի Ա՟յ Առաքինութեամբք և Գիտութեամբք (142. 143. 144. 145.)։

Հ. Զի՞նչ է նախախնամութիւն Աստուծոյ։

Պ. Նախախնամութիւնն է ներգործութիւն Ա՟ծային կամաց, որով զէութիւն և զգոյութիւն ամ՟ արարածոց պահպանէ, ներգործութեանց նոցին գործակից լինի, և զամենայն էակս առ վախճան նոցին ուղղելով կառավարէ՝ 'ի փառս իւր և յօգուտ ամենայն մարդկան, մանաւանդ արդարոց. ըստ այսմ՝ նախախնամութեամբ Աստուծոյ իմանին երեակ ներգործութիւնք նորին՝ Պահպանութիւնն, Գործակցութիւնն և Կառավարութիւնն (146. 147. 148. 149. 150. և յայլ բազում տեղիս)։

Հ. Զի՞նչ է շնորհաբաշխութիւն Աստուծոյ։

Պ. Շնորհաբաշխութիւնն է արտաքին ներգործութիւն, ըստ որոյ Աստուած յանսահման սիրոյ իւրմէ շարժեալ զպարգեւս և զշնորհս բաժանէ և ընծայէ ամենայն մարդկան՝ 'ի ճանաչումն և 'ի պաշտօն իւր կոչելով զնոսա, առաքինական գործոց նոցա նպաստելով, 'ի մեղաց արդարացուցանելով, և զիւրաքանչիւրոք յետ մահուան ըստ արժանեացն վարձատրելով (151. 152. 153. 154.)։

Հ. Բառն՝ Շնորհք՝ զի՞նչ նշանակէ ճշդիւ։

Պ. Շնորհքն է ներգործութիւն կամ յօժարութիւն և կամք Աստուծոյ, որով նա սիրելով զամենայն մարդիկ՝ հաղորդէ նոցա գերբնապէս կամ պատճառէ 'ի միտս և 'ի կամս նոցա զամենայն բարութիւնս իւր, որպիսիք են՝ ճանաչել և դաւանիլ զհաւատս յԱստուած և 'ի Քրիստոս, փոխել զչար վարս 'ի բարիս, գործել զառաքինութիւնս, փախչիլ 'ի մեղաց, հանապազորդել 'ի հաւատս և 'ի բարեգործութիւնս, և այլն (155. 156. 157. 158.)։

Հ. Քանի՞ են միջոցք ընդունելոյ յԱստուծոյ զՇնորհս։

Պ. Են չորս այսոքիկ, 1. զղջումն 'ի մեղաց՝ որ բառնայ զարգելս շնորհաց, 2. խոնարհութիւն որ տրամադրէ և յարմարաւոր կացուցանէ, 3. աղօթք՝ որ հայցէ և առնու, 4. արիութիւն՝ որ 'ի գործ դնէ և յարգէ զընկալեալ շնորհս. յորս հարկ է յաւելուլ և զորդիական երկիւղ չկորուսանելոյ զԱստուածային Շնորհսն, և զգործածութիւն սուրբ Խորհրդոց եկեղեցւոյ։

## Հատուած Ա.

### Եկեղեցի Քրիստոսի ընդ Սրբ. Խորհրդոց և պատուիրանաց իւրոց։

### Ա. Զանուն, Նիւթ և Կերպ Եկեղեցւոյ։

Հ. Զի՞նչ է եկեղեցին։

Պ. Եկեղեցին (ըստ ձևոյ նշանակութեան իւրում) է ժողովն, ընկերութիւն կամ բազմութիւն այն, որ դաւանի զՀաւատն Քրիստոնէական և միանայ Ուղղափառ Հաւատով և Ճշմարիտ սիրով ընդ Ա.Ծ. կամ՝ որ նոյն է, գումարն Ճշմարտապէս հաւատացող Քրիստոնէից, զորս Հայրն Ա.Ծ. շարժեալ ՚ի մարդասիրութենէ իւրմէ հաւաքեաց ՚ի ձեռն քարոզութեան Աւետարանին և միաւորեաց ընդ գլխոյն՝ Քրիստոսի, յորմէ Քրիստոնեայք միջնորդութեամբ լրոյ Ա.Ծոյն պատգամաց, սուրբ խորհրդոց և արժանաւոր պաշտօնէից ստանան զհոգևոր կեանս և զշարժումն, սրբին և արդարանան և հանդերձեալ փառացն արժանի լինին (159. 160. 161. 162.)։ Եւ կամ (ըստ անյատուկ նշանակութեան) է Ժողովարանն հաւատացելոց, ուր հաւաքին քրիստոնեայք ՚ի պաշտօն Ա.Ծոյ, որ ըստ մեզ ասի եւս՝ Տաճար կամ Տուն Ա.Ծոյ (163.)։

Հ. Ո՞ր է նիւթ եկեղեցւոյ, կամ ո՞յք են անդամք և մասունք եկեղեցւոյ։

Պ. Նիւթ եկեղեցւոյ կամ բաղադրիչ մասունք և ճշմարիտ անդամք եկեղեցւոյ են միայն Ուղղա-

փառ Քրիստոնեայք, որք անթերի ընդունին զնոյն հաւատալի Ճշմարտութիւն Սուրբ գրոյ՝ առանց յաւելլոյ և յապաւելոյ ինն, և կենդանի հաւատով և մաքուր վարուք բաղադրեն զՃշմարիտ եկեղեցին Քի. Իսկ անզեղջ մեղաւորք, չար և մոլի քրիստոնեայք, հերետիկոսք և անհնազանդ հերձեալք են չորացեալ անդամք Եկեղեցւոյ:

Հ. Զի՞նչ է կերպն եկեղեցւոյ:

Պ. Որովհետև Եկեղեցին է ընկերութիւն մարդկան, և նոյն ընկերութիւն փակէ յինքեան զմիաբանութի. վասն այսորիկ

Կերպ Եկեղեցւոյ է միաբանութիւն կամ դաշնակցութիւն հաւատացելոց 'ի մի միայն նպատակ պաշտելոյ զԱծ Քրիստոնէական Կրօնիւ.

## Բ. Բաժանումն Եկեղեցւոյ

Հ. Զիա՞րդ բաժանի Եկեղեցին Քսի.

Պ. Եկեղեցին կամ ժողովն Քրիստոնէից նկատմամբ նիւթոյն և կերպին զանազանի յայլ և այլ վիճակս. և 'Նխ՝ ըստ ժամանակի կենաց հաւատացողաց բաժանի յեկեղեցի Հին օրինաց՝ յառաջ քան զՔսի 'ի նա հաւատայելոց, և յեկեղեցի 'Նոր Օրինաց, որ զկնի գալստեանն Քսի 'ի նա հաւատացին և հաւատան յայլ և այլ ժամանակս և 'ի դարս: Երկրորդ՝ ըստ տարածութեան նկատեալ բաժանի եկեղեցին յԸնդհանրական, որք են Քրիստոնեայք նոյն ժամանակի, նոյն ազգի և նոյն տեղւոյ, և 'ի Մասնական, որ է ժողով

միոյ ազգի, միոյ տէրութեան կամ միոյ քաղաքի, ևն. Երրորդ՝ ըստ տեղւոյ հաւաքմանն բաժանի 'ի Յաղթական եկեղեցի՝ որ է գումարն կամ ընկերութիւն ննջեցեալ սրբոց և երանելեաց յերկինս, և 'ի Զինուորեալ եկեղեցի՝ որ է ժողով կենդանի Քրիստոնէից յաշխարհի աստ. Նաև դարձեալ ըստ այլ և այլ տեղեաց կամ քաղաքաց բաժանի՝ որպ՝ յեկեղեցի Հայաստանի, Յունաստանի, Ռուսաստանի, Երուսաղէմայ, Արևելեան, Արևմտեան, ևն. Չորրորդ՝ ըստ որպիսութեան հաւատալեացն բաժանի յեկեղեցի Ուղղափառական, որ դաւանի զուղիղ հաւատս յԱ՟ծաշունչ գիրս բովանդակեալ, որպիսի է մեր Հայաստանեայց Եկեղեցի, և յեկեղեցի Հերետիկոսական, որ կրճատէ կամ ուրանայ զճշմարտութիւն ինչ հաւատոյ 'ի սուրբ գիրս պարունակեալ, որպիսի են՝ ժողովք Արիոսականաց, Նեստորականաց, Եւտիքականաց, և այլոց նմանեաց. Գտանին և այլ բաժանմունք եկեղեցւոյ, որպ՝ յԱներևոյթ և յԵրևելի, 'ի Մաքուր և յԱնմաքուր.

### Գ. Պատճառ Եկեղեցւոյ.

Աշ. Ցոյց ինձ զպատճառն եկեղեցւոյ.

Վ. Առաջնական Պատճառ Եկեղեցւոյ է Ա՟ծ, որ շարժեալ յանբաւ բարութենէ իւրմէ՝ կոչէ, հաւաքէ և 'ի մի ընկերութիւն կապէ զճշմարիտ երկրպագուս իւր, զի հոգւով և ճշմարտութեամբ պաշտեսցեն զնա յայսմ աշխարհի. Իսկ Գործիական Պատճառ նորին են՝ Քարոզիչք Ա՟ծային

Ճշմարտութեանց, որպէս էին Մարգարէք և Առաքեալք, և այժմ են՝ բարենախանձ ուսուցիչք և քարոզիչ վարդապետք։

## Դ. Յատկութիւնք Եկեղեցւոյ

Հ. Զինչ և քանի՞ են յատկութիւնք եկեղեցւոյ։
Պ. Յատկութիւնք կամ նշանք Եկեղեցւոյ կոչին կատարելութիւնք կամ գերազանցութիւնք ինչ, զորս պարտի ունիլ իւրաքանչիւր ուղղափառ Եկեղեցի. և են նոքին չորս՝ Միութիւն, Սրբութիւն, Կաթուղիկէութիւն և Առաքելականութիւն։
Խ. Բացայայտեա ինձ մի առ մի զչորեսին յատկութիւնս եկեղեցւոյ։
Պ. Միութիւն Եկեղեցւոյ է ներքին, հոգևոր կամ բարոյական միաբանութիւն անդամոց կամ մասանց նորին, որոյ վասն աղօթեաց և Քրիստոս առ Հայր իւր (164. 165. 166.)։
Սրբութիւն Եկեղեցւոյ պարտի լինել թէ՛ ի հաւատս և թէ՛ ի վարս անդամոց նորին. — սրբութիւն Հաւատոյ կոչի Ուղղափառութիւն, և սրբութիւն Վարուց ասի՝ Առաքինութիւն կամ Բարեգործութիւն (167. 168.)։
Կաթուղիկէութիւն կամ Ընդհանրութիւն Եկեղեցւոյ է. նախ՝ նկատմամբ թէ ժամանակաց և թէ տեղեաց. իբր զի յԱդամայ և այսր, ևս և ցկատարած աշխարհի յամ ժամանակս և յամ տեղիս եղեն և լինելոց են ճշմարիտ Աստուածպաշտք (169. 170.)։ Երկրորդ՝ նկատմամբ ազգութեան. վասն զի այդ ընկերութիւն ընդունի զամ մարդիկ յոր ազ-

գէ և լեզուէ լինիցին, և ոչ զոք արտաքսէ յիւրմ ծոցոյ Սրբոյ՝ բանն Հաւատոյն, զի դաւանի զնա Ճշմարտութիւն յԱստուածաշունչ գիրս բովանդակեալ։ Առաքելականութիւն Սրբոյ Եկեղեցւոյ է այն, զի ոչ միայն շինեալ է 'ի վերայ հիման, քարոզութեան կամ վարդապետութեան՝ Առաքելոց. այլ և զի այժմ ևս անարատ պահէ զհաւատս նոցա, ուր եթէ եկեղեցի ինչ յաւելլու օտար ինչ 'ի բանս Առաքելոց կամ կրճատէ զհարազատս, ոչ է համարելի առաքելական (171.)։

Հ. Արդե՞օք չորեքին նշանքդ պատշաճին ճշդիւ Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյն։

Պ. Լուսաւորչակրօն Եկեղեցին Հայաստանեայց, որոյ գլուխ է Սրբազնակատար Կաթուղիկոսն Մայր Աթոռոյն Ամենայն Հայոց Սրբոյ Էջմիածնի, լիապէս ունի և պահէ զքառեակ նըշանսդ եկեղեցւոյ. վասն զի

Նախ՝ հաւատայ 'ի Մի Աստուած և յԵրրորդութիւն նորա, ընդունի զՄի Աստուածաշունչ մատեան իբր զկանոն հաւատոյ, զհանգանակն և զսահմանս սբ ժողովոց, զեօթն խորհուրդս եկեղեցւոյ, և զայլ հաւատալիս. 'ի վերայ միոյ հիման՝ Քրիստոսի և Առաքելոց նորա է կառուցեալ, Միում գլխոյ՝ Քրիստոսի հնազանդի, յոր և յուսայ. միով ճշմարիտ սուրբ սիրով սիրէ զնա Քրիստոնեայս՝ յինչ ազգէ և իցեն, ըստ որում վասն նոցա աղօթէ առ Աստուած (տես 'ի ժամանագիրն 'ի զանազան տեղիս). Եւս և բազմութիւնք անդամոց նորա թէ ընդ միմեանս և թէ ընդ երևելի գլխոյ իւրեանց՝ Կաթուղիկոսին Էջմիածնի՝ կարի.քաջ միաբանին յամի (Մ՛նուէ)։

Երկրորդ՝ հաւատ նորա, է Սուրբ և Ուղղափառ, և ա͞մ բարոյական պատուիրանք նորա, քարոզք, խրատք, սահմանք Ժողովոց և եկեղեցական բարեկարգութիւնք են սուրբ, մաքուր և համաձայն Ա͞ծաշունչ պատգամաց (Ս[illegible]).

Երրորդ՝ սկսեալ յառաքելոցն Թադէոսէ և ՚ի Բարթողիմէոսէ անընդհատ տևէ մինչև ցայսօր ՚ի մէջ անհամար պարագայ Թըշնամեաց իւրոյ. ընդունի ՚ի ծոց իւր զա͞մ մարդիկ յինչ ազգէ և իցեն. է հնագոյն և նախաստեղծ անդամ նորածին Եկեղեցւոյն Քրի͞ս. և ընկալնու առանց բացառութեն զա͞մ Ճանաչելի և գործելի Ճշմարտութիւնս Ա͞ծաշունչ գրոց (Կ[illegible]):

Չորրորդ՝ շինեցաւ ՚ի վերայ հիման քարոզութե. Առաքելոցն Թադէոսի և Բարթուղիմէոսի. պահեաց և պահէ զառաքելական ուղղափառ հաւատս՝ համաձայն գրոց առաքելոց. և գտաւ միշտ ՚ի նմա անմիջահատ յաջորդութեն Եպիսկոպոսաց ՚ի Թադէոսէ և ՚ի Բարթուղիմէոսէ ձեռնադրելոց անընդհատ շարունակութեամբ մինչև ցայժմեան Կաթուղիկոսն (Ա[illegible]).

Հ. Արդեօ՞ք Եկեղեցին Լուսաւորչական Հայոց իցէ՞ ինքնագլուխ և անկախ զայլոց:

Պ. Ըստ արժանահաւատ պատմական Ճշմարտութեց՝ Հայաստանեայցս Եկեղեցի ամիւ է Ինքնագլուխ, և չունի ինչ կախումն յայլոց. այլ է Քրիստոսահիմն՝ անդրանիկ և նախածնունդ քան զեկեղեցիս այլ ա͞մ ազգաց. վ͞ն զի զառաջին հիմն նորին եդ

նոյն ինքն Քրիստոս Տէրն մեր՝ առաքելով զնամակ և զպատկեր իւր առ Թագաւորն մեր Աբգար և խոստանալով նմա յղել զաշակերտ իւր առ նա (Խորենաց. Բ. 32.)։ Յետ համբարձմանն նորա՝ Թովմաս մին յերկոտասանից ըստ հրամայելոյն Քսի առաքեաց զեղբայր իւր զԹադէոս (անդ. 33.)։ որ զԹագաւորն մեր և զամ Հայաստան լուսաւորելով՝ հաստատեաց զեկեղեցի մեր։ Զկնի սորա հասին Բարդուղիմէոս, Յուդա Թադէոս և Սիմոն Կանանացի յերկոտասանից անտի, այլ և Մատթէոս յեօթանասնից, որք ամենեքեան յԵրուսաղէմէ եկին ՚ի Հայաստան. յորոց և իմանի թէ մերս Եկեղեցւոյ մի. միայն ծնօղ և մայր է Առաքելական եկեղեցին Երուսաղէմի, յորմէ ըստ պատուիրանին Քսի ունէին սկսանիլ և ծնանիլ այլ ամ եկեղեցիք (172. 173. 174.)։

## Ե. Գլուխ Եկեղեցւոյ։

Հ. Ո՞վ է գլուխ եկեղեցւոյ։

Պ. Ճշմարիտ և մի միայն Գլուխ Եկեղեցւոյ է նոյն ինքն Քրիստոս Տէրն մեր ըստ անսուտ և անժխտելի վկայութեանց Ածաշունչ տառից, որ ՚ի միջոյ Քրիստոնէից զոմանս ընտրէ և առնու իւր գործակիցս, պաշտօնեայս և սպասաւորս և նոքօք կառավարէ զբազմութիւն հաւատացելոց։ Յատկութիւնք այսր երևելի գլխոյ են. նախ՝ զի հեղու յանդամս իւր զհոգևոր կեանս, զզգացմունս և զշարժմունս. երկրորդ՝ զի միայնակ ուղղէ

վարէ և բարեկարգէ զանդամսն ա՟մ։ երրորդ՝ զի անբաժանելի եղանակաւ կցեալ և յօդեալ է ընդ ա՟մ և իւրաքանչիւր անդամն իւր. չորրորդ՝ զի պաշտպանէ զա՟մ անդամսն յամենատեսակ փորձութեանց և 'ի վտանգից. և հինգերորդ՝ զի ըստ մարդկային բնութեան համատեսակ է անդամոց իւրոց։ Վասն այսորիկ Ս՟բ գիրք ոչ ուրեք և ոչ երբէք գլուխ կոչեն զոք յԱռաքելոց կա՟մ 'ի յաջորդաց նոցա յեպիսկոպոսաց. այլ ամենեքին են անդամք եկեղեցւոյ մի քան զմի պատուաւորք. զի ոչ ամենայն անդամք զնոյն գործ ունին (175. 176. 177. 178. 179. 180. 181. 182.)։

## Զ. Սրբապաշտութիւն Եկեղեցւոյ։

Հ. Զի՞նչ է սրբապաշտութիւնն եկեղեցւոյ։

Պ. Սրբապաշտութիւնն է հրապարակական սուրբ սպասաւորութիւն՝ յԱ՟յ սահմանեալ և օրինաւոր կոչմամբ արժանաւոր անձանց յանձնեալ, որք պարտին յընկերութենէ Քրիստոնէից կամ յեկեղեցւոջ զպատգամս Ա՟յ քարոզել, զսուրբ խորհուրդս մատակարարել, և զկրթութիւն բարուց յամենեսին պահպանել՝ 'ի փառս Ա՟յ և վասն փրկութեան մարդկան։

Հ. 'Ի սուրբ գիրս զիա՞րդ կոչին անձինք զայդ սրբբազան պաշտօն կատարողք.

Պ. 'Ի հին և 'ի նոր Կտակարանս զանազան այլաբանեալ կոչմունք ընծային նոցա վասն գերազանցութեան այսր պաշտաման, յորոց նշանաւորքն են անուանքս՝ Քահանայ, Տեսանօղ, Այր Ա՟յ,

Հրեշտակ կամ պատգամաւոր Ա՜Յ, Դէտ, Պահապան, Իշխող (տեղւոյն Ա՜Յ), Ճարտարապետ, Հովիւ, Հայր, Տեսուչ՝ Վերակացու՝ Վերատեսուչ՝ Եպիսկոպոս, Երէց, Սարկաւագ՝ Պաշտօնեայ՝ Ծառայ՝ Սպասաւոր, Վարդապետ՝ Ուսուցիչ՝ Քարոզիչ, Առաջնորդ՝ Ուղղեցոյց՝ Կառավար՝ Գլխաւոր՝ Գպետ, Աղ երկրի՝ Լոյս աշխարհի՝ Աշտանակ, Մշակ այգւոյ և հնձոց, Տնտես՝ Հազարապետ, և այլ նմանք։ Իսկ գումարն կամ բոլորն այսց պաշտօնէից կոչի Եկեղեցի Ուսուցիչ կամ աշակերտող (183.)։

Հ. Ո՞յք և քանի՞ են տրամադրութիւնք յընդհանուրս սրբապաշտութեան։

Պ. Կարի հարկաւոր Տրամադրութիւնք ընդհանուրս կամ յենթակայս այսր Սրբազան Պաշտօնի, (որք պարտին լինել միայն մկրտեալ արք և ոչ երբէք կանայք) են ութ այսոքիկ՝ 1. Կոչումն Ա՜ծային, որ լինի կամ անմիջական, և կամ ՚ի ձեռն օրինաւոր ընտրողութեան այլոց անդամոց եկեղեցւոյ. 2. Սրբութիւն վարուց. 3. Բաւական Գիտութիւն. 4. Ոգի հովուական. 5. Կանոնաւոր անարատութիւն. 6. Ժողովական ընտրողութիւն. 7. Ատենական փորձողութիւն, և 8. Հանդիսական ձեռնադրութիւն։

Հ. Որպիսի՞ սրբութիւն պահանջի ՚ի պաշտօնեայս եկեղեցւոյ։

Պ. Ամենեւին հարկաւո՛ր է, զի ձեռնադրելին՝ և առաւել ձեռնադրեալն՝ իցէ ուղղափառ հաւատով, և զի կամ զանմեղութիւն մկրտութեան անկորուստ պահեալ իցէ, և կամ զանցեալ մեղս

Ճշմարիտ ապաշխարութեամբ ջնջեալ յամ մեղանչական ունակութեանց և 'ի չար սովորութեանց զերծեալ, և յամ առաքինութիւս առաւել քան զաշխարհականս արմատացեալ և հաստատեալ իցէ. Եկեղեցական անձանց՝ թէ որքան հարկաւոր իցէ Սրբութիւն վարուց, յայտնի ցուցանեն հրամանք՝ սպառնալիք և պատիժք Ա͞Յ նշանակեալք 'ի զանազան տեղիս Ա͞Ծաշունչ Սուրբ Գրոց։

Հ. Որդեօք պաշտօնէից եկեղեցւոյ հարկաւո՞ր է ուսումն գիտութեանց.

Պ. Ծայրագոյն հարկաւորութիւն գիտութեան յեկեղեցականս ապացուցանեն. Նախ՝ հրամանք և սպառնալիք Ա͞Յ 'ի Սուրբ գիրս (184. 185. 186. 137.)։ Երկրորդ՝ կոչմունք պաշտամանց նոցա պարտաւորս կացուցանեն զնոսա յուսանիլ զազգի ազգի գիտութիւնս, որպիսի են՝ Քերականութիւն, Ճարտասանութիւն, Կրօնագիտութիւն, Բարոյագիտութիւն, Դաւանաճառ Ա͞Ծաբանութիւն, Եկեղեցական պատմութիւն, և այլ նմանք, առանց որոց բնաւ իսկ չէ հնար 'ի գլուխ հանել զվերոգրեալ պարտաւորութիւնս։ Երրորդ՝ քաջ հաստատէ և պատմութիւն ազգիս, յորում տեսանի, զի 'ի պատճառս անուսումնութեան եկեղեցականաց մերոց և վասն չքարոզելոյ զբանն Ա͞Յ՝ ոմանք 'ի համազգի քրիստոնէից մերս Հայաստանեայց եկեղեցւոյ փոխեցան 'ի դաւանութիւն այլոց քրիստոնեայ ազգաց, և բազումք ես 'ի կրօնս տաճկաց և պարսից. զորոց զարիւնն 'ի ձեռաց առաջնորդաց ունի պահանջել Ա͞Ծ 'ի դատաստանի (188.).

Հ. Օ՛ր ինչ է ոգին հովուական։

Պ. Հովուական ոգի կամ սէր յեկեղեցական անձինս՝ իմացեալ լինի հակամիտութիւն կամ բերումն ինչ տնկեալ յԱյ, որով չափահաս մարդն քաղցրութեամբ միտեալ լինի և ձգի առ եկեղեցական պաշտօն և վիճակ, ոչ միայն իբրև յիմն ինչ հաճոյական և ախորժելի, այլ և իբրու յարդիւնաբեր ինչ հոգւոյ իւրոյ և ընկերացն, այն է՝ դիտելով յամենայնի՝ ծառայել Այ և եկեղեցւոյ նորա, հոգալ զփրկութիւն եղբարցն, և առաջնորդել նոցա ՚ի կեանս յաւիտենականս՝ օրինակաւ և քարոզութբ իւրով։ Կերպարանք այսր ոգւոյ նկարին ՚ի բանս Քրիստոսի (189.), յորս զանազանին ճշմարիտ հովիւ, վարձկան, օտար, գող, աւազակ, գայլ։ Ապս քննեսցէ քահանայացուն նախ զանձն, թէ զո՞րց ՚ի սոցունց զոգին զգայցէ յինքեան, և ապա մատիցէ՝ յանձին կալցէ, կամ հրաժարեսցի (190.)։

Հ. Օ՛ր ինչ է կանոնական անարատութիւն։

Պ. Կանոնական անարատութիւն է թէութիւն ինչ յեկեղեցւոյ սահմանեալ, զի ըստ հոգւոյ և մարմնոյ արատաւոր և պակասաւոր անձինք մի բարձրասցին յեկեղեցական սպասաւորութիւն, որով ունի անպատիւ լինել Սուրբ Կարգն (191. 192.)։

Հ. Օ՛ր ինչ է ժողովական ընտրողութիւն։

Պ. Ժողովական ընտրողութիւն է ածատուր իրաւունք, ըստ որոյ բազմաթիւ անդամքն եկեղեցւոյ, այս՝ ժողովուրդն՝ հասարակաց հաւանութեամբ ընտրեն ՚ի միջոյ իւրեանց զոմն արժանաւոր անձն, և առաջի առնեն Եպիսկոպոսին ՚ի քննել և ՚ի

ձեռնադրել 'ի սպասաւորութիւն իւրեանց (193. 194.)։

Հ. Ո՞րն է ատենական փորձողութիւն

Պ. Ատենական փորձողութիւնն է զգուշաւոր մանրքննութիւն, զոր հրապարակաւ առնէ Եպիսկոպոսն յատենի իւրում՝ առ 'ի ճանաչել թէ՝ նուիրեալն 'ի ժողովրդենէ արդեօ՞ք իցէ՞ արժանի այսր սրբազան պաշտաման ամ իրօք (195. 196.)։

Հ. Ո՞րն է հանդիսական ձեռնադրութիւն։

Պ. Հանդիսական ձեռնադրութիւնն է խորհրդական արարողութիւն, որով Եպիսկոպոսն հրապարակաւ յայտ առնէ բազմութեան ժողովրդեանն ըստ օրինաց կոչումն և զփորձաւորութիւն ձեռնադրելի անձին, զոր ապա կոչմամբ Հոգւոյն Սրբոյ՝ աղօթիւք և ձեռն դնելով՝ յաշխարհական գործոց զատանէ, և տայ նմա զհոգևոր կարողութիւն առ 'ի մատակարարել զսուրբ խորհուրդս, 'ի հովուել և 'ի շինել զմարմինն (զժողովուրդն) Քսի (197.)։

Հ. Քանի՞ են գլխաւորաբար ազգք պաշտամանց եկեղեցական սպասաւորաց։

Պ. Քառեակ է պաշտօն սպասաւորաց եկեղեցւոյ 'ի Քսէ յանձնեալ նոցա, այ՝ նախ՝ քարոզել և ուսուցանել ժողովրդեանն զամ բանս և զհրամանս Ա.Ծ վասն փրկութեան մարդկան՝ բովանդակեալս յԱ.Ծաշունչ Մատենի. երկրորդ՝ սուրբ և անարատ վարուք տալ ընկերաց զօրինակ բարի և զշինութի. երրորդ՝ արժանաւոր պատրաստութեամբ մատակարարել ժողովրդեան զխորհուրդս եկեղեցւոյ. և չորրորդ՝ խրատել և դաստիարակել զնոսա յառաքինի վարս (198. 199. 200.)։

Հ. Արդեօ՛ք հասարակ ժողովրդն ևս պարտաւոր է ընթեռնուլ ինքնին և ուսանիլ զբանն Աստուածաշունչ գրոց։

Պ. Այո՛ ամենայն իրօք, զի Յիսուս Տէրն մեր հրամայեաց ժողովրդեանն, թէ՝ քննեցէք զգիրս և տեսէք (201.). և պատճառ մոլորութեան նոցա՝ ասաց՝ լինիլ տգիտութեան գրոց (202.). և սուրբ առաքեալք նորա ևս հրամայեցին ամենայն ժողովրդեանն ընթեռնուլ և ուսանիլ զԱստուածաշունչ Գիրս (203. 204. 205.)։

## Է. Խորհուրդք Եկեղեցւոյ։

Հ. Զի՞նչ և քանի՞ են խորհուրդք եկեղեցւոյ։

Պ. Խորհուրդք Եկեղեցւոյ են սրբազան ծէսք և արարողութիւնք՝ ի Քրիստոսէ և յԱռաքելոց սահմանեալք, յորս Աստուած միջնորդութեամբ զգալի նիւթոց և նշանակաց պարգեւէ զերկնաւոր շնորհս իւր և զզօրութիւն արժանապէս տրամադրելոց և ընդունողաց, և են եօթն այսոքիկ. Մկրտութիւն, Դրոշմ, Ապաշխարութիւն, Հաղորդութիւն, Քահանայութիւն, Պսակ և վերջին Օծումն, յորոց չորք առաջինքն հարկաւո՛ր են յոյժ ամենայն քրիստոնէի. իսկ յետին երեքն չեն հարկաւոր ամենեցուն, այլ ՚ի կամս իւրաքանչիւրոց թողեալ է առնուլ կամ չառնուլ զայնս։

Հ. Զի՞նչ է մկրտութիւնն։

Պ. Մկրտութիւնն է խորհրդական գործողութիւն, յորում չափահաս կամ մանուկ հաւատացեալն լուացեալ լինի ջրով յանուն Հօր և Որդւոյ և

Հոգւոյն սրբոյ, որով ըստ հոգւոյն ծնանի 'ի նոր կեանս և առնու յԱ․Յ շնորհս լինելոյ անդամ Քրիստոսի և եկեղեցւոյ նորա։ Նիւթ այսր Սրրբազան արարողութե՛ն է ջուրն բնական. կերպ՝ է կոչումն երից անձանցն Ա․Յ կամ բանք 'ի Քսէ հրամայեալք. պաշտօնեայն՝ է քահանայն կամ եպիսկոպոսն. իսկ լուացումն լինի երրակի՝ ընկղմամբ 'ի ջուրն, հեղմամբ և սրսկմամբ ջրոյն (206. 207. 208.)։

Հ. Զի՞նչ է դրոշմն։

Պ. Դրոշմն է ծէս խորհրդաւոր, յորում մկրտեալն խաչաձև օծեալ սուրբ միւռոնաւ 'ի ճակատն և յայլ անդամն՝ առնու զներքին օծումն Հոգւոյն սրբոյ, որով և հոգին զօրանայ շնորհօք և հաստատի 'ի հաւատս և 'ի սէրն առ Ա․Ծ։

Նիւթ այսր խորհրդական արարողութե՛ն է սուրբ իւղն միւռոնի. կերպ՝ է խաչաձև օծումն և բանքըն աղօթից յօծանելն. և պաշտօնեայն՝ է քահանայն կամ եպիսկոպոսն (209. 210. 211.)։

Հ. Զի՞նչ է ապաշխարութ՛ին։

Պ. Ապաշխարութ՛ին է խորհրդական արարողութ՛ին, յորում մեղուցեալ և զղջացեալ քրիստոնեայն խոստովան լինի Ա․Յ՝ առաջի քահանայի նորա զմեղս իւր, և ընդ յայտարարութե՛ն թողութե՛ն բանիւ քահանային՝ առնու յԱստուծոյ զթողութիւն մեղաց՝ ըստ հաւատոյ իւրում և տրամադրութ՛ե։ Վասն որոյ իբր նիւթ սորա համարի՝ խոստովանութիւնն բերանոյ և հայցելն զարձակումն. կերպ՝ են բանք արձակման քահանային. պաշտօնեայն՝ է եպիսկոպոսն կամ քահանայն. իսկ

էական մասունքն են երեք՝ Զղջումն, Դար-ձումն և Հաւատոք (212. 213. 214.)։

Հ. Զի՞նչ է զղջումն։

Պ. Զղջումն է գերբնական և ճշմարիտ ցաւ սրտի, որով մեղաւորն մտօք ձանձնայէ, և կամօք ատէ և զզուի յամենայն մեղաց իւրոց՝ դնելով զհաստատ յառաջադրութիւն չմեղանչելոյ յապագայն և ոչինչ օրինակաւ։ Ներքին և արտաքին նշանք ճշմարիտ զղջման են սոքին՝ Յետս կալ 'ի սովորական մեղաց, Որոնել զդեղ մեղաց, Խոստովանիլ զմեղս իւր Ա՟Յ՝ առաջի քահանայի նորա, Արտասուք յաչս, Բուրձ զգենուլ, Բաղխել զկուրծս, Պատառել զհանդերձս, Պահել 'ի կերակրոց, Հատուցանել զրկելոց, եւն (215. 216. 217. 218. 219. 220. 221. 222. 223.)։

Հ. Զի՞նչ է դարձումն։

Պ. Դարձումն է գործադիր շարժումն կամաց, որով մեղաւորն ատելով զամենայն անօրէնութիւնս՝ դադարէ 'ի չար սովորութեանց և յետս կայ իսպառ յամենայն մեղանչական գործոց. հատանէ զառիթս և զորոգայթս մեղաց և սկիզբն առնէ գործել զառաքինութիւնս (224. 225. 226. 227. 228.)։

Հ. Ո՞յք շարժառիթք, որք յորդորեն զմեղաւորն 'ի զղջումն և 'ի դարձումն։

Պ. Զօրեղ շարժառիթք զղջման և դարձման են սոքին՝ անարգանք առ Ա՟ծային մեծվայելչութիւն, զազ-րութիւն մեղաց, խայթ խղճի մտաց, կորուստ հաւատոյ և ամենայն առաքինութեանց, զրկումն 'ի մխիթարութենէ Հոգւոյն սրբոյ՝ 'ի շնորհաց

և ՚ի սիրոյն Ա․Յ, ծանրութի՟ պէսպէս ժամանակաւոր պատժոց, դայթակղութի՟ տուեալ տկար եղբարց, սաստկու՟ Ածային դատաստանի, զրրկել ՚ի յաւիտենական կենաց, անկանիլ ընդ զարհուրելի պատժովք դժոխոց, և այլ նմանք։

Հ. Զի՞նչ է հաւատքն յապաշխարողս։

Պ. Սրբարար **հաւատ յապաշխարողս** է շնորհք Հոգւոյն սրբոյ, որով զղջացեալ մեղաւորն զխոստմունս Ա․Յ և զարդիւնս Քրիստոսի ճանաչէ, ընդունի և անձին սեպհականէ որդիական վստահութեամբ, որով և արդարանայ (229․ 230․ 231․ 232․)։

Հ. Զի՞նչ է հաղորդութիւնն։

Պ. **Հաղորդութիւնն** է սրբազան գործողութի՟, յորում ընդ կերպարանօք հացի ճաշակեմք զմարմինն Քրիստոսի, և ընդ կերպարանօք գինւոյ ըմպեմք զարիւնն Քրիստոսի, վասն Թողութեան մեղաց մերոց և ժառանգելոյ զկեանսն յաւիտենից։

Ուստի նիւթ այսր խորհրդոյ՝ են հացն և գինին, կերպ՝ են բանք քահանային, պաշտօնեայ են եպիսկոպոսք և քահանայք, և ընդունակ՝ են ա՟մ զղջացեալ և խոստովանեալ քրիստոնեայք (233․ 234․ 235․)։

Հ. Զիա՞րդ պարտիմք հաղորդիլ մարմնոյ և արեան Քրիստոսի։

Պ. **Արժանաւոր պատրաստութեամբ**, առ որ պահանջի· նախ՝ զերծ լինել ՚ի մահացու մեղաց ՚ի ձեռն նախընթաց զղջման և խոստովանու՟․ երկրորդ՝ ճշմարիտ հաւատ, բորբոքեալ սէր և ծայրագոյն յարգութի՟ մատչելոյ ՚ի սուրբ հաղորդութիւնն։

երրորդ՝ յետ հաղորդելոյն աղօթել ևս առ Ա՛ծ, գոհանալ զնմանէ և խոստանալ պահել զպատուիրանս նորա (236.)։

Հ. Ո՞րք և քանի՞ցս պարտիմք հաղորդիլ. և յի՞նչ օգտէ մեզ հաղորդութի՛ւն։

Պ. Հաղորդութի՛ւն յարժանապէս ընդունօղս յաւելու զշնորհս Ա՛յ, արժանի առնէ թողութե մեղաց, միաւորէ ընդ Ք՛սի, տայ հոգևոր սնունդ և զարգացումն ՚ի բարիս, պահպանէ յապագայ մեղաց, և փառաւորէ զմարմինս ՚ի յարութեան։ Վասն որոյ քանիցս անգամ տեսանէ մարդս զինքն կարօտ այսց պտղոց հաղորդութե՝ անխափան պարտի հաղորդիլ, զի զօրասցի հոգւովն. բայց ըստ պատուիրանի Եկեղեցւոյս մերոյ սրբոյ պարտիմք հաղորդիլ ՚ի հինգ մեծ տօնս եկեղեցւոյ կամ ՚ի տարւաւորս, կամ գոնէ ՚ի ծննդեանն Ք՛սի և ՚ի զատկին։ Այսպէս պարտական է քրիստոնեայն հաղորդիլ ՚ի պէսպէս դիպուածս, յորս առաջի կայցէ նմա ծանր կամ թեթև վտանգ մահուան (237.)։

Հ. Զի՞նչ է քահանայութի՛ւն։

Պ. Քահանայութի՛ւն է սրբազան արարողութի՛, յորում անձն արժանաւոր՝ դրութեամբ ձեռաց և աղօթիւք Եպիսկոպոսին առնու զհոգևոր կարողութի՛ պաշտելոյ յեկեղեցւոջ, մատակարարելոյ զսուրբ խորհուրդս, ևն։

Վասն որոյ նիւթ սորա՝ է սուրբ իւղն օծութե և ձեռնադրութիւն եպիսկոպոսին, և կերպ՝ են բանք աղօթից ՚ի ձեռնադրելն (238. 239. 240.)։

Հ. Զի՞նչ է պսակն։

Պ. Պսակն կամ Ամուսնութիւն է ծէս խորհրդաւոր, յորում այր և կին ազատ հաւանութեամբ իւրեանց՝ աղօթիւք և օրհնութեամբ քահանային՝ լծակցին ՚ի պատկեր հոգևոր միաւորութեան Քրիստոսի ընդ Եկեղեցւոյ առ ՚ի ծնանիլ զաւակ և ՚ի սնուցանել զնոսա ՚ի Քրիստոնէականն կրօնի (241. 242.)։

Հ. Զի՞նչ է վերջին օծումն, և ե՞րբ պաշտէ Եկեղեցի մեր զայս խորհուրդ։

Պ. Վերջին Օծումն է խորհրդական արարողութիւն, յորում քահանայն իւղով օծանելով և ձեռն դնելով աղօթէ ՚ի վերայ հիւանդին, զի ընկալցի յԱստուծոյ զառողջութիւն մարմնոյ և զթողութիւն մեղաց։ Սոյն նիւթ՝ է սուրբ իւղն օծութեան և դրութիւն ձեռաց, և կերպ՝ են մաղթանք և բանք աղօթից (243. 244.)։ Եւ կատարէ Հայաստանեայցս եկեղեցի զայս խորհրդաւոր արարողութիւն գրեթէ ՚ի վերայ ամենայն հիւանդաց (ըստ նշանակելոյ ամենայն մաշտոցագրոց)․ սակայն գործածութիւն իւղոյն կանխաւ խափանեալ է առ մեզ վասն բանաւոր պատճառաց։

## Բ. Պատուիրանք Եկեղեցւոյ,

Հ. Զի՞նչ են պատուիրանք եկեղեցւոյ և ո՞յք։

Պ. Պատուիրանք Եկեղեցւոյ են եղանակք աստուածպաշտութեան ՚ի մասնաւոր դիպուածս կենաց, զորս պարտին ամենայն ժողովրդականք երկիւղածութեամբ պահպանել, զի առաջնորդեն զնոսա ՚ի հոգևոր կա-

տարերուն, յորոց և երևելիքն են՝ 1. Խոստովանիլ զա̃մ մեղս իւր Ք.Յ առաջի քահանայի իմաստնոյ գոնէ միանգամ ՚ի տարին, 2. Հաղորդիլ մարմնոյ և արեանն Քսի, 3. Պահել ծոմ և պահս յա̃մ հրամայեալ աւուրս, որք են՝ աղուհացք մեծի պահոց, շաբաթապահք և երկու աւուրք յիւրաքանչիւր եօթնեկի, 4. Տեսանել զամբողջ պատարագ յա̃մ կիւրակէս, և յայնպիսի տօնս յորս պահի կիւրակէ, 5. Զտասանորդս ընծայտալ եկեղեցւոյ և սպասաւորաց նորին, 6. Ո՛չ պսակիլ ընդ մերձաւոր արենակիցս մինչև ցեօթն աստիճան, և 7. Չառնել հարսանիս և պսակ յարգելեալ աւուրս:

Հ. Զի՞նչ են առաքինի վարք:

Պ. Առաքինի վարք են արտաքին գործողութիւնք կանոնաւորեալ բարուց մարդոյ, որք կարգին համաձայն օրինաց կամ պատուիրանաց Ք.Յ և լուսաւոր բանականութե̃ կամ բանի (245.):

## Հատուած. Ը.

## Վերջինք Մարդոյ:

Հ. Զի՞նչ են վերջինք մարդոյ, և քանի՞:

Պ. Վերջինք մարդոյ են ապագայ վիճակք, որք մնան մարդոյ ՚ի վերջանալ այսր կենաց. և են հինգ այսոքիկ՝ Մահ, Յարութի̃ մեռելոյ, Դատաստան յետին, Երանութի̃ յաւիտենական և Թշուառութի̃ մշտնջենաւոր:

Հ. Զի՞նչ է մահն:

Պ. Մահն ժամանակ է անջատման հոգւոյ մարդոյ 'ի մարմնոյն, որոյ ժամանակն և եղանակն անյայտ է մեզ (246. 247.)։

Հ. Զկնի մահուան զի՞նչ պատահէ մարմնոյն, և զի՞նչ հոգւոյն։

Պ. Մարմին մարդոյ ըստ Աստուածային վճռոյ յետ մահուանն դառնայ և փոխի 'ի հող, յորմէ յետ ժամանակաց յառնելոց է և միաւորելոց ընդ հոգւոյ իւրում (248.)։ իսկ Հոգին որովհետև ոչ դառնայ 'ի չքութիւն, այլ պահէ զէութիւն և զգայութիւն իւր յանվախճան յաւիտեանս և մնայ անմահ (249. 250. 251. 252.)՝ կայ մնայ յետ այնորիկ դատաստան ըստ արժանւոյն։ Եթէ ամենևին սուրբ է և արդար՝ արժանանայ տեսութեան Աստուծոյ յարքայութեան նորին 'ի յաւիտենական երանութեան. իսկ եթէ անզեղջ է 'ի մեղս՝ մատնի 'ի տանջանս 'ի յաւիտենից թշուառութեան (253. 254. 255. 256. 257.)։

Հ. Զի՞նչ է յարութիւն մեռելոց։

Պ. Յարութիւն մեռելոց է ներգործութիւն Աստուածային, որով զնոյն մարմինս ամենայն մարդկան յերկրէ յարուցանէ և ընդ հոգւոց նոցին միաւորէ՝ առ 'ի հրապարակաւ դատել զնոսա և հատուցանել իւրաքանչիւրոցն զկատարեալ երանութիւն կամ զթշուառութիւն ըստ արժանեաց նոցա՝ 'ի ցոյց արդարութեան իւրոյ (258. 259. 260.)։

Հ. Զի՞նչ է դատաստանն վերջին։

Պ. Վերջին դատաստանն է Աստուածային ներգործութիւն, ըստ որոյ Աստուածամարդն Յիսուս Քրիստոս երևելի կերպարանօք յայտնեալ 'ի վախճանի աշխարհիս՝ զամենայն

մարդկն կացուցանել ունի յատենի իւրում, զհա-ւատս և զգործս նոցա դատել և հատուցանել ըստ արդարութեան և ըստ մեղաց (261. 262. 263.)։

Հ. Զի՞նչ է երանութիւն յաւիտենական։

Պ. Երանութիւն յաւիտենական է նոր և անճառելի վիճակ յապագայ կեանս, յորում Ա՟Ծ զարդարս և զսուրբս հաղորդս առնէ տեսութեան իւրում՝ երջանկացուցանելով զնոսա յաւիտեանս անպա-տում փառօք ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։ Այս անմահական վիճակ ՚ի սակս անմահ գերազան-ցութեանց իւրոց ՚ի սուրբ գիրս փոխաբերութբ անուանի՝ Արքայութիւն, Թագաւորութիւն, Կեանք յաւիտենական, Երջանկութիւն, Երանութիւն, Պսակ անթառամ փառաց, և այլ նմանք. Իսկ տեղին կամ վայրն սրբոց կոչի՝ Երկինք, Դրախտ, Գոգ Աբրահամու, Նոր Երուսաղէմ, Լեառն Սիոն, Քաղաք Ա՟Յ, և այլ սոյնպիսիք (264. 265. 266. 267.)։

Հ. Ո՞յք են աստիճանք կամ սահմանք երանութեան սրբոց։

Պ. Թէպէտ և երանութիւն սրբոց անըմբռնելի է մտաց մարդոյ. սակայն յայնցանէ, զորս Ա՟Ծա-շունչ մատեանն յայտ առնէ, քաղելով գտանի, զի երջանկութիւն արդարոց այնք են, թէ՝ կեան ընդ Ա՟Յ. ընկերանան կամ կենակցին միշտ ընդ նմա. ըստ չափու արժանեաց իւրեանց պայծառ ճանաչեն մտօք կամ տեսանեն զԱ՟Ծ՝ զանսահ-ման կատարելութիւնս նորա և զխորս ամենայն ճշմարտութեանց. անհամեմատ ծայրագոյն բո-ցով սրտի և կամաց սիրեն զԱ՟Ծ և անլոյծ կա-

պանօք միասրտութեան յարին ՚ի նա. մարմինք նոցա փառաւորին զանազան սքանչելի ձիրուք, որոց գլխաւորք են՝ անապականութիւն կամ անմահութիւն, անկրելութիւն կամ առողջութիւն, նրբութիւն և թեթևութիւն, գեղեցկութիւն, պայծառութիւն և արեգակնակերպ լուսափայլութիւն, յանքաւս զուարճանան կենակցութեամբ հրեշտակաց՝ ազատեալք յամենայն թշուառութեց և՛ ՚ի չարչարանաց մարմնոյ և աշխարհիս (268. 269. 270. 271. 272. 273. 274.):

Հ. Ո՞ր է թշուառութիւն մշտնջենաւոր:

Պ. Թշուառութիւն մշտնջենաւոր կամ սատակումն յաւիտենական է վիճակ ինչ ապագայ կենաց, յորում են մ թերք ամ աղետից՝ տանջանաց և չարեաց, զոր արդար դատաստանաւն Աստուծոյ կրել ունին յաւիտեան հոգւով և մարմնով ամ անզեղջ մեղաւորք և անհաւատք:

Այս դառն զարհուրելի վիճակ ասի ՚ի Սուրբ գիրս՝ կորուստ, սատակումն, մահ երկրորդ, տանջանք յաւիտենական, դատաստան, դատապարտութիւն, նեղութիւն, անձկութիւն, անպիտանութիւն, անարգութիւն, խոտումն և այլն:

Իսկ վայրն դատապարտելոց անուանի՝ դժոխք, գեհեն, տեղի տանջանաց, հուր յաւիտենական, վիհ խաւարին, լիճ հրոյ, անդունդ, գուբ, ևն:

Եւ աստիճանք այսր թշուառութեան են՝ իսպառ բաժանումն ՚ի տեսութենէն Աստուծոյ, կորուստ անճառելի երանութեան, զարհուրելի տանջանք հոգւոյ և մարմնոյ, խայթ խղճի մտաց կամ որդն անմահ, ամօթ, խաւար, ողբ, կրճու-

մըն ատամանց, ընկերութ՟ դիւաց, հուր, ծծումբ, և յաւիտենականութ՟ին այն ա՟մ տանջանաց. Թէպէտ և են յայնմ թոյլ կամ սաստիկ աստիճանք ըստ չափու մեղաց իւրաքանչիւրոյն (275. 276. 277. 278. 279. 280. 281. 282.)։

# ՅՕԴՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ։

## Յաղագս Բարուց։

Հ. Զի՞նչ է բարքն։

Պ. ԲԱՐՔ կամ բարոյք անուանին կարողութիւնք և ներգործութիւնք մարդկային հոգւոյ, այնք են՝ դատողութիւնք, կամեցողութիւնք, զգացմունք և կիրք, կարգեալք համաձայն կամ հակառակ օրինաց Ա.Յ և լուսաւոր բանականութեան և ընկալեալք զբարութեան կամ զչարութեան։ Իսկ բարուց հետեւակ արտաքին գործողութիւնք կոչին՝ Վարք կամ վարումն (283.)։

Հ. Որո՞վք գլխաւորի ուսումն Բարուց կամ Բարոյագիտութեան։

Պ. Յայսմ գիտութեան արժան է գլխաւորաբար ուսանիլ. 1. զՆերգործութիւնս հոգւոյ. 2. զՕրէնս որոց պարտին համաձայնիլ ներգործութիւնք. 3. զԱռարկայս ներգործութեանց. և 4. զՊտուղս օրինապահ ներգործութեանց։

### Հատած Ա.

### Ներգործութիւնք մարդկային հոգւոյ։

Հ. Ո՞յք են հոգևոր ներգործութիւնք։

Պ. Ներգործութիւնք կամ կարողութիւնք հոգւոյ յայսմ գիտութեան են՝ Դատողութիւն մտաց, Կամեցումն, Բնատուր Դրդիռ, Զգայական բաղձանք և Կիրք։

## Ա. Դատողութիւն մտաց։

Հ. Զի՞նչ է դատողութիւն մտաց։

Պ. Դատողութիւն է ներգործութիւն մտաց, որ զառնելի գործն հայեցմամբ օրինացն Ա՜յ և իւր՝ կշռէ՝ քննէ և դատէ, և ապա հրամայէ սիրոյ կարողութեանց առնել զայն կամ չառնել։ Ի սուրբ գիրս կոչի սա՝ Միտք, Խիղճ մտաց, Սիրտ, Հոգի ևն։

Խ. Ասա ինձ — զորպիսի՞ անուանս առնու այս գործառութիւն ըստ պէսպէս համգամանաց իւրոց։

Պ. Այս դատողութիւն գործոց կամ խիղճն մտաց նախ՝ կոչի Նախընթաց, երբ դատէ զապագայ առնելի գործն. Զուգընթաց, որ դատէ զներկայ գործն ՚ի գործելն անդ. և Վերջընթաց, երբ զանցեալ գործն ՚ի կշիռ դնէ։ Երկրորդ՝ ասի Պայծառ, թէ որոշ ծանուցէ զօրէնս, զգործն և զյարաբերութիւն նոցին յիրեարս. և Մթին, յորժամ ոչ մարթի բացորոշ ճանաչել զդոսին. Հսկող կոչի, եթէ աշխոյժ և արի է ՚ի քննել, և Նինջեալ, երբ անփոյթ է ՚ի դատել. իսկ եթէ իսպառ դադարեալ է ՚ի զննութենէ՝ կոչի Մեռեալ։ Երրորդ՝ Ուղիղ է, թէ անսխալ ճանաչէ զօրէնս և զգործն և զկապակցութիւն նոցին. և Մոլար, յորժամ սխալի ՚ի ճանաչման դոցին. ուստի՝ որովհետև ողորմելի է վիճակ մոլորախիղճ մարդոյ, պարտի ջան դնել ՚ի փարատել զտգիտութիւն իւր և ՚ի ստանալ զուղիղ դատողութիւն յազատիլ ՚ի մեղաց. Չորրորդ՝ կոչի Ստոյգ, եթէ դատաստան նորին հիմնեալ է ՚ի փաստս ա-

մենեւին ճշմարիտս. Հաւանական, թէ փաստքն լինին միայն ճշմարտանման. և Երկբայական, եթէ կային երկուստեք փաստք որովք մնայ դատողն ՚ի կախ անվճիռ, յորում դիպուածի չէ արժան հետևիլ այնմ. Հինգերորդ՝ անուանի Կարի. երբ արդարացուցանէ զգործն պահպանութեամբ օրինացն Ա՟յ. և Ք՟սի, յորժամ ցուցանէ զգործն լեալ հակառակ օրինաց. որով և յանդիմանէ և տանջէ զգործօղն, յորմէ և կոչի՝ Խայթ, Խայթոց կամ Խածուած խղճի.

Հ. Ո՞յք են միջոցք պահելոյ ուղղոյն խղճի մտաց.

Պ. Ամփոփին համօրէն մետասան այսոքիկ, այն է՝ զի քրիստոնեայն 1. աշխատ լիցի քաջ ուսանել զօրէնս Ա՟յ, զի տգիտութիւն է մայր ամ՟ մեղաց և թշուառութեանց. 2. յետ ճանաչելոյ զայնս հետևեսցի գործով կատարել առանց ծուլութեան և աշխարհասիրութեան. 3. զհնազանդութիւն և զսէրն առ Ա՟Ծ արասցէ գլխաւոր շարժառիթ օրինապահութեան իւրոյ. 4. յընթացս աւուրն յամ՟ ժամու յիշեսցէ զպատգամն „յԱ՟յ երկիր և զպատուիրանս նորա պահեա, զի այս է մարդն ամենեւին (Ժողով. ԺԲ. 13.). 5. յուշ ածցէ անդադար զգլն և զօգուտ բարի խղճի մտաց. 6. յաճախ խորհեսցէ զշարժառիթս առաքինագործութեանց. 7. ՚ի զարթնուլն ՚ի քնոյ դիցէ հաստատ յառաջադրութի չմեղանչելոյ յայնմ աւուր. 8. յերեկոյին յառաջ քան զննջելն քննեսցէ զխիղճն, և թէ մեղուցեալ իցէ յայնմ աւուր՝ զղջասցի՝ ապաշաւեսցէ և ինքնին դիցէ անձին ապաշխարանս ինչ ՚ի հատուցանել Ա՟յ ըստ կարեացն. 9. ստասցէ զարթնութի

հոգւոյ (284. 285.)։ 10. միշտ աղօթեսցէ և խնդրեսցէ յԱ՛յ զշնորհս չանկանելոյ 'ի փորձութիւն. և 11. գոնէ գործեսցէ ուղղել զմոլութիւնս և զպակասութիւնս իւր, և ստանալ զնոցին դիմադրեալ առաքինութիւնս։ Օգտակար միջոցս 'ի գործ դնելով և զգին բարի խղճմտանաց խորհելով՝ պարտի ամ՛ քրիստոնեայ հեռանալ 'ի չար և 'ի մեղանչական խղճէ մտաց, որ թէ որքան զարհուրելի թշուառութիւն իցէ և է, և որչափ վնասաբեր՝ ցուցանեն օրինակք զանազան անձանց 'ի սուրբ գիրս, որպիսիք են՝ Ադամ և Եւայ, Կայէն, եղբարքն Յովսեփայ, Անտիոք, Յուդայ մատնիչ, և այլք բազումք (236. 287. 288. 289. 290.)։

Հ. Որ է գին և օգուտ բարի խղճի մտաց։

Պ. Մեծ է գին և օգուտ 'ի բարի խղճէ մտաց յառաջ եկեալ, զի բերէ մեզ պարծանս և հանգստութիւն սրտի, զմխիթարութիւն 'ի ձախորդութիւնս, զուրախութիւն 'ի սոսկալի ժամու մահուան, զհամարձակութիւն առ Աստուած յաղօթս և յամ՛ պէտս, ևս և զուղղափառ հաւատս (291. 292. 293. 294. 295.)։

## Ր. Կամեցողութիւն։

Հ. Զի՞նչ է կամեցումն.

Պ. Կամքն է կարողութիւն հոգւոյ, որ ըստ երևեցուցանելոյ նմա մտաց զիր ինչ կամ գործ իբր բարի կամ չար՝ ելանէ 'ի ներգործութիւն և ձգի 'ի միանալ ընդ նմա կամ խորշել յայնմանէ։ Այս երևեցուցումն բարւոյ և չարի անուանի՝ Շարժառիթ հոգւոյ։

Խ· Մեկնեա ինձ զառաջինն զինչութիւն և զքանիութիւն շարժառթից հոգւոյ։

Պ· Շարժառիթ ասին այն ամ զգացմունք, որ ըզ-բաղձողական կարողութիւն հոգւոյ հանեն ՚ի ներգործութիւն՝ բացորոշելով զայնս ձգել յայս կամ յայն առարկայ· այլ այսպիսի զգացմունք երբ մտածին իբր պատճառ որոշիչ զբաղձողական կարողութիւնս՝ անուանին Խթան, որ կամ ՚ի բանականութենէ առաջարկի և ասի Աբիթ, որ յարգէ և մեծարէ զսրբութիւն և զարդարութիւն օրինաց Այ և ուղիղ բանականութեան, կամ ՚ի ըզգայականութենէ ծագի և կոչի Մղանք· իսկ յորժամ մտածին իբր հեշտացուցիչ օգտաբեր ինչ գործելի ՚ի մարդոյ՝ անուանին Վախճան կամ Նպատակ· Այն ինչ՝ որոյ միջնորդութեամբ ընտացեալ լինի վախճանն՝ կոչի Միջոց։

Հ· Զիա՞րդ բաժանին ներգործութիւնք կամաց։

Պ· Ներգործութիւնք կամաց բաժանին ՚ի Բնական, որ չեն յիշխանութենէ գործողին, որպիսի են գործք մանկանց, խելացնորից եւն· և յԱզատական, երբ մարդն բանական դատողութեամբ և անբռնի գործէ, որ լինի կամ բարի ՚ի համաձայնիլ ընդ օրինաց Այ և մտաց· կամ չար ՚ի հակառակիլն։ Այս բարի և չար որակութիւն գործոց՝ կոչի Բարոյականութիւն նորուն։

Գ· Բնատուր գրգիռ։ Դ· Զգայական
բաղձանք։ Ե· Կիրք։

Հ· Զի՞նչ են գրգիռ, բաղձանք և կիրք։

Պ· Գրգիռ ասին հակամիտութիւնք կամ բերմունք ինչ

՚ի բնութենէ ՚ի մեզ անկեալք, որոց գլխաւորք են՝ Անձնասիրութիւն և Օգտասիրութիւն, որ ինքնին չեն չար և մեղանչական, այլ բարեկարգելի են ՚ի լուսաւոր բանականութենէ։

Բաղձանք են բուռն շարժմունք հոգւոյ՝ ծագեալք ՚ի սաստկութենէ յօժարութեանց կամ ընդդիմութեանց, որպիսի են՝ ուրախութիւն, տրտմութիւն, բարկութիւն, նախանձայուզութիւն, և այլն. որք ՚ի բնէ անմեղ են և հարկաւոր իսկ ՚ի բազում դէպս։

Ախտք են սաստիկ և մեղանչական հակամիտութիւնք հոգւոյ առ չար ինչ, որպէս՝ ատելութիւն, ագահութիւն, արբեցողութիւն, բղջախոհութիւն, և այլն. որք զբազում վնասակար հետևութիւնս ձգեն զհետ. զի խաւարեցուցանեն զմիտս և տան թիւր դատել, զկամս ձգեն ՚ի սիրել միայն զոր ինքեանք կամին, զրկեն զմարդն յայլոց անմեղ ուրախութեանց, նուազեն զբարոյական ազատութիւն, յոլովակի վնասեն մարմնոյ՝ առողջութեան՝ հարստութեան՝ համբաւոյ՝ պաշտաման, և այլն. զրկեն ՚ի յաւիտենական երանութենէ և առնեն զմարդն ծառայ ինքեանց, որով և թշուառ գլխովին։

## Դաս Ի.

### Օրէնք Կանոնաւորիչք Ներգործութեանց հոգւոյ։

Հ. Ո՞ր ինչ են օրէնք ներգործութեանց հոգւոյ։

Պ. Օրէնք ներգործութեանց, որք և կոչին՝ Օրէնք բարուց, է վճիռ և դատողութիւն մտաց առաջադրեալ ՚ի դատաւորէ իբր կանոն, որում ըստ բանական

էակք միշտ պարտակա՛ն են համաձայնել զբարս իւրեանց։

Հ. Ո՞վ է օրէնսդիր բարուց։

Պ. Առաջին և գերագոյն օրէնսդիր է միայն Ա՛ծ, որ անպարագիր իմաստութ՛բ իւրով սահմանեալ զանփոփոխ կանոնս բարուց՝ անջինջ ՚ի բնութ տպաւորեաց ՚ի միտս ամ՛ մարդկան. որով վարեցան մարդիկ յԱ՛դամայ ցՄ՛ովսէս կեցեալք. յետ որոյ ՚ի յաճախել չարութե մարդկան և ՚ի չլսել նոցա օրինաց մտաց՝ ՚ի ձեռն նախամարգարէին Մ՛ովսիսի և այլոց մարգարէից, մանաւանդ Որդւոյ իւրոյ Յ՛սի Ք՛սի հետ զհետէ հրապարակեաց զայլ բազում օրէնս բարուց։ Այսուհետև իմացեալ լինի թէ՝ յետ Ա՛յ և Յ՛սի Ք՛սի՝ երկրորդ օրէնսդիր բարուց է միտք իւրաքանչիւր մարդոյ կամ խիղճ մտաց (296. 297.)։

Հ. Ո՞ւ հաստատի, թէ՝ միտքն է օրէնսդիր, և թէ մարդս պարտի հնազանդիլ օրինաց նորա։

Պ. Ապացուցանի այդ. նախ՝ ՚ի սահմանելոյն Ա՛յ, որ տպաւորեաց ՚ի հոգւոջ մարդոյ զբնական օրէնս. երկրորդ՝ ՚ի հրամանաց Ք՛սի և Առաքելոց նորա, որք բազում անգամ պատուիրեցին՝ յամի ՚ի կիր առնուլ զլուսաւոր բանականութի և զառողջ դատողութի մտաց, գտանել զճշմարտութի յամ իրս, և հեռանալ ՚ի տգիտութե (298. 299. 300.)։

Հ. Արդեօք գո՞յ առաջին և արմատական օրէնք մի բարուց։

Պ. Առաջին օրէնք բարուց կամ բարոյական ներգործութեանց է այս բան „ Միշտ գործեա՛ համա-

ձայն առողջ դատողութեան մտացդ կամ լուսաւոր բանականութեանդ ||, որով զայն յայտ առնէ թէ՝ մարդս իբրև մտաւոր էակ՝ միշտ պարտի հետևւիլ ուղիղ և անսխալ դատողութեան մտաց իւրոց, որ այն ինքն է՝ Խիղճն՝ սքանչելի պատկեր Ա.ծութեան ՚ի մարդն։

Հ. Կա՞ն այլ ևս օրէնք բարոյ բաց ՚ի դմանէ։

Պ. Հռչակաւոր են Տասն Պատուիրանք Ա.յ, որք են անսխալ կանոնք բարոյ ՚ի ներքուստ տպաւորեալք ՚ի միտս ամ մարդկան, և արտաքուստ ևս հրապարակեալք ձեռամբ Մովսիսի մարգարէի. և այս ՚ի Քնէ հաստատեալք և վերածեալք յերկուս օրէնս. այն է՝ „ ՚ի սիրել զԱ.ծ և զընկերն ևս իբրև զանձն (301.)։

Հ. Ո՞յք են տասն պատուիրանք Ա.յ։

Պ. Ա՛ն այսոքիկ. 1. Ես եմ Տէր Ա.ծ քո, և մի ունիցիս քեզ զայլ ած բաց յինէն, 2. Մի արասցես դու քեզ կուռս և ոչ իւիք նմանութեամբ, 3. Մի առնուցուս զանուն Ա.յ քո ՚ի վերայ սնոտեաց, 4. Յիշեա՛ սրբել զօր շաբաթուն, այ՝ զկիւրակէս, 5. Պատուեա՛ զհայր քո և զմայր, 6. Մի սպանաներ, 7. Մի շնար, 8. Մի գողանար, 9. Մի սուտ վկայեր զընկերէ քումէ, և 10. Մի ցանկանար կնոջ ընկերի քո և մի ամ ընչից նորա։

Հ. Զո՞ր առաքինութիս հրամայէ և զո՞ր մեղս արգելու առաջին պատուիրանն։

Պ. Ա.) Առաջին՝ Ես եմ Տէր Ա.ծ քո, հրամայէ մեզ չորս ինչ, այ՝ ճանաչել զնա, հաւատալ և յուսալ ՚ի նա, սիրել զնա և երկնչել ՚ի նմանէ

վասն անսահման կատարելութեանց նորա։ Իսկ ա-սելովն՝ Մի՛ ունիցիս քեզ զայլ ած բաց յինէն, արգելու մեզ չգործել զմեղս անածութեան, կռա-պաշտութեան, թերահաւատութեան, ուրացութեան, յուսա-հատութեան, գաղջութեան, եւն։

Հ. Զի՞նչ հրամայէ կամ զի՞նչ արգելու երկրորդ պատուիրանն։

Պ. Բ.) Արգելու մեզ այս պատուիրան զնիւթապաշ-տութիւն, զաւելապաշտութիւն, զկախարդութիւն, զթովչութիւն, զհմայութիւն, զկեղծաւոր ածպաշտութիւն, զսուտ պաշ-տօնասիրութիւն, զծիսապաշտութիւն, եւն. եւ հրամայէ ունել զառաքինութիւնս դոցին դիմադրեալս։

Հ. Զի՞նչ հրամայէ եւ զի՞նչ արգելու երրորդ պա-տուիրանն։

Պ. Գ.) Հրամայէ մեզ նախ՝ բազում երկիւղիւ եւ ջերմեռանդութեամբ վարել զամենասուրբ անունն Աս-տուծոյ՝ ի խօսիլն մեր, ի քարոզելն, յընթերցա-նելն, յաղօթելն, յուխտելն, ի դաւանելն, ի լսելն, ի մտածելն, եւ ամ ուրեք։ Երկրորդ՝ ա-ղօթել եւ խնդրել յԱյ զամ բարիս յամ կարիս մեր։ Երրորդ՝ զանուն եւ զանսահման կատարե-լութիւն նորա բանիւ եւ լեզուաւ գովաբանել եւ հռչակել։ Չորրորդ՝ գոհանալ զնմանէ եւ շնոր-հակալ լինել վասն ամ հոգեւոր եւ մարմնաւոր բարերարութեանց նորա առ մեզ եւ առ ընկերս մեր։ Իսկ արգելու մեզ զհակառակս դոցին, որպիսիք են՝ վարել զանունն Այ առանց ջերմեռանդութեան եւ պատուոյ, հայհոյել զԱծ՝ զսուրբս եւ զայլ մար-դիկ, անիծանել, չարիս մաղթել Այ կամ Ածայ-նոց, երդնուլ սուտ կամ առանց հարկի, յիշոց

տալ, կեղծաւորել յաղօթս, զբանս սուրբ գրոց յիշել վայրապար կամ՝ ՚ի թիւր միտս մեկնել, խօսիլ կամ ծիծաղիլ յեկեղեցւոջ, ևն։

Հ. Զի՞նչ հրամայէ կմ արգելու չորրորդ պատուիրանն։

Պ. Պ..) Հրամայէ սուրբ պահել զաւուրս Կիւրակէից և այլոց հանդիսաւոր տօնից, որ լինի, նախ՝ առանց ամ ծուլութեան հաւաքելով ՚ի Սուրբ Եկեղեցին և անդ ՚ի միասին հրապարակաւ պաշտելով զԱծ և աղօթելով առ Նա ջերմեռանդութեամբ։ Երկրորդ՝ յարգութբ և հեզութեամբ լսելով և ընդունելով զքարոզս և զԱծային պատգամս, ևս և հաղորդելով մարմնոյ և արեան Տեառն։ Երրորդ՝ զօրն ողջոյն պարապելով ՚ի բարի գործս, իբր՝ ընթեռնուլ զԱծաշունչ և զայլ հոգևոր գրեանս, յիշել զԱծ, քննել զխղճմտանս իւր, ցաւիլ ՚ի վերայ մեղաց իւրոց, դնել զբարի դիտաւորութիւնս, բարիս առնել ընկերաց և եղբարց մերոց, որպիսիք են՝ տալ ողորմութիւն աղքատաց, խրատել զմոլորեալս, ուսուցանել տգիտաց զհարկաւորս փրկութեան, յայց ելանել բանտարկելոց և հիւանդաց, զգեցուցանել զմերկս, և այլ նմանք։ Չորրորդ՝ հեռանալով յամ չար և ՚ի մեղանչական գործոց, որպիսիք են մանաւանդ, արբեցութիւն, պղծութիւն, անկարգ զբօսանք, թէատրօնք, և այլ զանազան մեղք, որք թէպէտ յամ աւուրս, բայց առաւելապէս՝ յաւուրս Կիւրակէից ծանր են և գարշելի։ Հինգերորդ՝ դադարելով յամ մարմնական և ՚ի ծառայական գործոց, իբր՝ ՚ի գնելոյ, ՚ի վաճա-

ուելոյ, 'ի գործելոյ զերկիր կամ զայլ արհեստական գործս, եւն։

Հ. Զի՞նչ հրամայէ կամ արգելու հինգերորդ պատուիրանն։

Պ. Ա.) Յայսմ պատուիրանի նախ՝ բառիւս՝ Պատուեա՝ խնամի սիրել, հնազանդիլ, ծառայել սրտիւ, բանիւ և գործով, յարգել և ոչինչ օրինակաւ վշտացուցանել և անարգել զմեծաւորս։ Երկրորդ՝ բառիքս՝ Հայր և Մայր՝ իմանին մարմնաւոր ծնօղքն, հոգևոր հարք, վարդապետք, եկեղեցական հովիւք, խոստովանահարք, սնուցիչք, որբախնամք, Թագաւորք իշխանք, և ամ̃ մեծաւորք, որք առաջնորդեն մեզ 'ի հոգևոր կմ̃ 'ի մարմնական բարիս։ Երրորդ՝ սովին պարտաւորին ոչ միայն մարմնաւոր որդիք, այլ և հասարակ ժողովուրդք, հպատակք, որբք, աշակերտք, ծառայք, գերիք, և այլն։

Եւ ամենեցուն արգելու այս պատուիրան զանհնազանդութիւն, զօրինազանցութիւն, զապստամբութիւն, զապերախտութիւն և զայլ նման մեղս։

Հ. Զի՞նչ հրամայէ և զի՞նչ արգելու վեցերորդ պատուիրանն։

Պ. Ա.) Արգելու մեզ ոչ սպանանել ոչ զհոգի և ոչ զմարմին, ոչ զմերս և ոչ զընկերացն, ոչ ցանկանալ և ոչ նպաստել մահուան այլոց կամ իւր, ոչ անդամատել զինքն կամ զայլս, ոչ գանել և կամ վիրաւորել։ Նախ՝ գործով, հրով, սրով, թունով, և այլն։ Երկրորդ՝ բանիւ, որպիսի են՝ անէծք, մատնութիւն, վատանունութիւն, կագ, կռիւ, նախատինք, եւն։ Երրորդ՝ ներքին և արտաքին շարժ-

մամբ, ատելութք, բարկութք, դանելով, վըրէժխնդրութք, ևն. Նաև հրամայէ ամիւ նպաստել ընկերին, զի հոգևոր և մարմնաւոր կեանք նորա աճեսցի և անսասան մնասցէ.

Հ. Զի՞նչ հրամայէ կամ արգելու եօթներորդ պատուիրանն։

Պ. Ա.) Այլին, նախ՝ հրամայէ մաքրութի և ողջախոհութիւն թէ ՚ի կուսական և թէ յամուսնական վիճակի, յորում կողակիցք պարտին սըրբութեամբ ճանաչել իւրաքանչիւր զիւր ամսին և ոչ զայլոց։ Երկրորդ՝ արգելեալ լինի ամ մարդոյ որ և իցէ պղծութի գործոց՝ լեզուի և սրտի, որպիսի են՝ շնութի, պոռնկութի, հարճապահութի, ազգապղծութի, արուագիտութի, պագշոտութիւն, գրկածութի, շօշափմունք, հայեցուածք, գիճութի, զազիր խօսակցութիք և երգք, չար մտածմունք, ցանկութի սրտի, և այլ ամենայն այսպիսի գարշութիք, ևս և ամ չար միջոցք և լուցկիք, որք ածեն յայդպիսի մեղս որպիսիք են՝ արբեցութի, որկրամոլութի, դատարկութի, պիղծ պատկերք և մատեանք, մոլորեցուցիչ ընկերք, ևն.

Հ. Զի՞նչ արգելու կամ հրամայէ ութերորդ պատուիրանն.

Պ. Բ.) Արգելեալ լինին ամենակերպ անիրաւ ըստացութիք, գողութիք և յափշտակութիք ընչից այլոց, մարդագողութիք, անիրաւ դաշնադրութիւնք, անօրէն վաշխառուութիք, արծաթսիրութի, ուշտութի, շռայլութի, խաբէութիք ՚ի վաճառականութ, խարդախութիք ՚ի չափս և ՚ի կըշիռս, չհատուցանել զպարտս, զրկել զաշքատս,

հատանել զվարձս մշակաց և ծառայից, չդարձուցանել զաւանդն, զգրաւն, զխոստացեալն, ըզգտեալ իրս, եւն։ Այլ հրամայի պահել զարդարութիւն ամենայն ուրեք յայսմ ամենայնի։

Հ. Զի՞նչ արգելու կամ հրամայէ իններորդ պատուիրանն։

Պ. (Թ.) Արգեալ լինի ամենայն ստախօսութի՟. նախ՝ ՚ի դատաստանի, յորում ամենայն մասունք կամ՝ անդամք, ո՟· դատաւորք, վկայք, ամբաստանօղք, պաշտպանք և յանցաւորք պարտին փախչիլ յամ՟ ստութենէ. Երկրորդ՝ արտաքոյ դատաստանի ամ՟ մարդոյ պատուէր դնի ամենեւին վասն եղբօրն կամ ընկերին չխօսիլ սուտ որ և իցէ օրինակաւ, որպիսիք են՝ չարախօսութի՟, վատահամբաւութի՟, նախատինք, երգիծանք, քսութի՟, բանակռուութի՟, բամբասանք, յանդուգն դատողութի՟, լեզուագարութիւն, գովել զանարժանս, մատնել զգաղտնի խորհուրդս ը՟ աչս դատել զընկերն, եւն։ Այլ հրամայեալ լինի ամենեցուն ճշմարտախօսութի՟ յամ՟ տեղիս և յամ՟ ժամանակի մինչ է՝ խօսիլ այո՛ այո՛, և ո՛չն՝ ո՛չ, ուղիղ վարել զլեզուն, զպիտանին խօսել, ՚ի բարին մեկնել զբանս և ըզգործս ընկերին ՚ի շինութիւն նոցա, եղբայրաբար յանդիմանել զյանցաւորս ըստ հրամանին Քրիստոսի, եւն։

Հ. Զի՞նչ հրամայէ կամ արգելու տասներորդ պատուիրանն։

Պ. (Ժ.) Այս պատուիրան հրամայէ մեզ նախ՝ ս՟բ պահել՝ ո՛չ միայն զմարմին, այլ և զհոգի մեր, հեռանալով, ո՛չ միայն յարտաքին մեղանչական

գործոց, այլ և 'ի ներքին ցանկութենէ սրտի և 'ի չար խորհրդոց, ոչ նախանձիլ ընդ ներքին և ընդ արտաքին բարիս այլոց, ոչ յափշտակել ինչ յընկերաց, այլ շատանալ ընդ վիճակ մեր գոհութ̃ համդերձ առ Ա․Ծ, եւ․ Երկրորդ՝ ջանալ 'ի ստանալ զսկզբնական արդարութիւն և զհոգևոր արիութիւն յաղթելոյ մարմնոյ յանձին. Եւ արգելու ունել կամս վնասելոյ ընկերին յամենայն դէպս խոկ, որ է հակառակ ամենայնիւ պատուիրանի ընկերութեան, որ հրամայէ ճշմարտիւ սիրել և բարիս առնել եղբարց մերոց։

Հ․ Որի՞րդ բաժանին այսոքիկ տասն պատուիրանք ընդհանրապէս.

Պ․ Բաժանին նոքին յերկուս, յԱ-ստ-ուա-ծա-սի-րու-թի-ւն, որ աւանդի 'ի չորս առաջին պատուիրանսն և յԸ-նկե-րա-սի-րու-թի-ւն, որ 'ի վեց վերջինսն. ուստի և գծագրեալ էին այնոքիկ մատամբն Ա․Ծ յերկուս տախտակս քարեղէնս (302)։

Հ․ Կա՞ն այլ ևս օրէնսդիրք մարդկային գործոց.

Պ․ Բաց յասացելոցդ կան ևս արտաքին օրինադիրք, որք ունին յԱ․Ծ իշխանութիւն դնելոյ օրէնս և պատուիրանս. և զգործս մեր զարտաքին՝ գործեալս համաձայն կամ հակառակ օրինաց՝ դատելոյ, վարձատրելոյ և պատժելոյ, որք բաժանին յԵկեղեցականս և յԱշխարհականս (303. 304. 305. 306.)։

## Հատուած. Գ.

### Առարկայք Ներգործութեանց հոգւոյ.

Հ. Զիա՞րդ կոչին գործք յօրինաց հրամայեալք, և զիա՞րդ բաժանին նոքին։

Պ. Ներգործութիւնք յօրինաց հրամայեալք՝ կոչին Պաշտօն կամ Պաշտամունք մարդոյ, որք և նկատմամբ առարկայիցն բաժանին յերիս ցեղս, այն է՝ 1. պաշտօն առ Ա՟ծ, 2. պաշտօն առ Անձն իւր, և 3. պաշտօն առ Ընկերն (307.)։

### Ա.

### Աստուածապաշտութիւն։

Հ. Զի՞նչ է պաշտօնն մարդոյ առ Ա՟ծ,

Պ. Պաշտօնն առ Աստուած կամ պաշտելն զԱստուած է այնպիսի գործողութիւն, զոր կատարէ մարդ՝ առարկայ և շարժառիթ ունելով զնոյն միայն զԱ՟ծ իբր զծայրագոյն վախճան Ամենակատար և Ամենասուրբ՝ առ ՚ի յարգել և ՚ի փառաւորել զանսահման արժանաւորութիւնս նորա և զկատարելութիւնս։

Հ. Քանի՞ եղանակաւ լինի պաշտելն զԱ՟ծ. կամ քանի՞ծն է այդպիսի պաշտօն։

Պ. Պաշտելն զԱ՟ծ գլխաւորաբար լինի երրակի, այս՝ Գործելով, որ է արդեամբք կատարել զամենայն պատուիրանս Ա՟յ և զհրամայեալ առաքինութիւնս կարևորս Քրիստոնէական կատարելութեան. Սիրելով, այն է՝ սիրալիր ուրախութեամբ համբերել ամ՟ վշտաց, նեղութեանց և խաչակրութեանց, զորս առաքէ ՚ի

մեզ ԱԾ թէ 'ի պատիժ մեղաց մերոց և թէ 'ի փորձել զսէր մեր առնա. և Ա՛չ գործելով, որ լինի հրաժարելով յամ չար և 'ի մեղանչական գործոց, որովք վշտանայ ԱԾ։ Իսկ 'ի մասնաւորի՝ ամ ցեղք ԱԾպաշտութե բաժանին 'ի Ներքինքն, զորս մարթ է միայն հոգւով՝ մտօք և կամօք առանձնակի կատարել, որպիսիք են՝ Ճանաչել զԱԾ, Հաւատալ 'ի նա, Յուսալ, Սիրել, Երախտագէտ լինել, Երկնչիլ, Հնազանդիլ, Ապաստանալ, և Նմանիլ. և Արտաքինք, զորս ոչ հոգւով եթ, այլ և գործակցութ մարմնոյ և զգայարանաց կատարեն, կամ առանձին և կամ հրապարակաւ, որոց գլխաւորքն են՝ Գովել զԱԾ, Խոստովանիլ, Երկրպագանել, Աղօթել, Տօնել, Երդնուլ, և Նախանձայոյզ լինել Հաւատոյ (Յայտնանէ՝ 1. Ճանաչելն զԱԾ և 2. հաւատալըն 'ի նա՝ մեկնեցան 'ի նախընթաց յօդուածն, ուր և հարկ տեսանել)։

### 3. Յուսոյ և Վստահութեան յԱստուած։

Հ. Զի՞նչ է յոյսն և վստահութին յԱԾ։

Պ. ՅՈՅՍՆ է ստոյգ ակնկալութի ընդունելոյ յԱյ զամենայն Ճշմարիտ բարիս և զյաւիտենական երանութի. իսկ Վստահութին է սաստկագոյն և կատարելագոյն աստիճան յուսոյ, որոց հիմն են անսուտ խոստմունք Այ, ամենակարողութիւն նորա, իմաստութին և բարութին (308.)

Հ. Ո՞յք են շարժառիթք յուսալոյ վստահանալոյ յԱԾ։

Պ. Այդպիսի շարժառիթք համարին սոքին, այն է՝

զի 1. յոյսն է ազդու միջոց և գործի զօրացուցանելոյ և կատարելագործելոյ զայլ ամ՟ առաքինութիս, 2. 'ի նոյն պարտաւորէն զմեզ Հաւատք մեր և Խոստմունք Ա՟Յ և 3. զայնս հրամայէ մեզ Ա՟Ծ բազում ուրեք յԱ՟Ծաշունչ գիրս.

Հ. Ո՞յք են ներգործութիւնք յուսոյ.

Պ. Ներգործութիւնք յուսոյ են՝ զի 1. շարժէ զմեզ յուղղել զմոլի վարս մեր, 2. բարեկարգէ զսէր երկրաւոր բարեաց, 3. ոգևորէ զմեզ 'ի չար փորձութիս, 4. մխիթարէ 'ի խաչակրութիս և տայ զօրութի 'ի ձախող դէպս, 5. հաճոյ առնէ զմեզ Ա՟Յ և մարդկան, 6. խաղաղէ և հանգուցանէ զմիտս և զհոգի մեր, և 7. բերկրեցուցանէ զմեզ 'ի ժամու մահուան.

Հ. Ո՞յք են միջոցք հաստատելոյ զՅոյս մեր և զվստահութի յԱ՟Ծ.

Պ. Այնպիսի միջոցք են՝ 1. հեռացուցանել զխափանարարս նոցին, որք են՝ մեղսալից խղճմտանք, որ զինքն անարժան համարի շնորհացն Ա՟Յ, երկբայութի զնախախնամութէն նորա, օրինակ տառապանաց արդարոց, յաջողութի մեղաւորաց, ևն, 2. գուն գործել մաքուր պահել զխիղճ մտացն, 3. ջան դնել ստանալ զպայծառագոյն ճանաչումն զԱ՟Յ և զկատարելութեց նորա, 4. սովոր յուշածել զպաշտպանութիս Ա՟Յ, զորոց զփորձ առին սուրբք և զանազան երևելի անձինք, 5. յուշածել զնպաստս՝ զորս մեք ընկալնումք յԱ՟Յ բ՟զմ անգամ 'ի կեանս մեր, ճանաչել զտկարութիս մեր և զանպտղութի աւելորդ հոգացողութեց, և 6. հանապազորդել յաղօթս, որ է ընկեր և զօրացուցիչ յուսոյ, ևն։

## 4. Սիրել զԱ՟ծ.

Հ. Օ՞րն է սէրն Ա՟յ։

Պ. Սէրն Ա՟յ է զգայումն հոգւոյ, որ յարգէ զԱ՟ծ, հրճուի նովաւ, զամ՟ ինչ զիւր յԱ՟ծ ուղղէ, զկամս նորա ցանկայ լնուլ և յամ՟ի նմա հաճոյանալ գուն գործէ (309.)։

Հ. Ո՞յք են նշանք ճշմարիտ Ա՟ծասիրի։

Պ. Այս բանական սէր եթէ գուցէ 'ի սրտի ուրուք՝ մատնէ զինքն հետագայ նշանակօքս, որք են՝ 1. վառեալ ցանկութ՟ խորհելոյ, հրճուելոյ և խօսակցելոյ զԱ՟յ և զԱ՟ծայնոյ, 2. ազդու աշխատանք 'ի գլուխ հանելոյ զամ՟ հաճոյս Ա՟յ, 3. պատրաստութ՟ սրտի համբերելոյ ամ՟ խաչից և նեղութեց վասն սիրոյ նորա, 4. ծայրագոյն խնդութ՟ փառացն Ա՟յ և ջանք առաւել քան զառաւել փառաւորելոյ զնա, 5. տրտմութ՟ վասն անարգանացն Ա՟յ 'ի մէնջ կամ յայլոց, 6. ծայրագոյն բաղձանք միանալոյ ընդ Ա՟յ և վայելելոյ զնա դէմ յանդիման։

Հ. Ո՞յք են շարժառիթք սիրելոյ զԱ՟ծ։

Պ. Այդպիսիք են՝ զի 1. այս է առաջին պատուիրանն հրամայեալ յԱ՟յ և յուղիղ բանականութ՟ մերմէ, 2. այս սէր է էութ՟ և հիմն այլ ամ՟ առաքինութեց մերոց, 3. միաւորէ զմեզ կատարելապէս ընդ Ա՟յ աստ և 'ի հանդերձելումն, 4. տայ մեզ զանդորրութ՟ և զխաղաղութ՟ հոգւոյ և 'ի ձախող դէպս անգամ, 5. սիրոյ խոստացեալ են մեծամեծ վարձք հոգւոյ և մարմնոյ, 6. առ 'ի սիրել զԱ՟ծ ստիպեն զմեզ անսահման գերազան-

ցունք և կատարելութիւնք նորա, 7. 'ի նոյն շարժեն զմեզ անճառ սէր նորա ցուցեալ առ մեզ յարարչութեան, 'ի պահպանութեան, 'ի խնամարկութեան և 'ի փրկագործութեան, 8. անհամար հոգևոր և մարմնաւոր բարերարութիւնք և շնորհք, զորս հանապազօր ընդունիմք 'ի ձեռանէ նորա, 9. անսուտ խոստմունք անկշռելի բարեաց և երջանկութեան յԱրքայութեան երկնից, և 10. ոչ գոյ բաց յԱստուծոյ այլ ինչ էակ ամենասուրբ և ամենաբարի, որ արժանի լիցի այսպիսի բանական ճշմարիտ սիրոյ.

Հ. Ո՞յք են յատկութիւնք Աստուածսիրութեան.

Պ. Որակութիւնք կամ յատկութիւնք ճշմարիտ Աստուածսիրութեան են՝ զի 1. լիցի մաքուր, այն է՝ զի առաջին հիմն սիրոյ մերոյ իցէ նոյն ինքն Աստուած, 2. իցէ ճշմարիտ և անկեղծ՝ բանիւք և արդեամբք պսակեալ, 3. իցէ նախադասեալ ևս և քան զկեանս մեր, 4. լիցի պտղաբեր և գործունեայ, և 5. իցէ հաստատարմատ հիմնացեալ այնպէս՝ զի և ոչ մի ինչ իրօք դայթակղեսցի.

Հ. Ո՞յք են միջոցք առաւել քան զառաւել բորբոքելոյ զսէր մեր առ Աստուած.

Պ. Այսոքիկ են՝ 1. ստէպ յուշ ածել զայս գեղեցիկ վճիռ ,, Աստուած սէր է (Ա. Յովհ. Դ. 16.) ||, 2. յամենայն առաւօտու 'ի միտ ածել զպատուիրանն ,, Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ (Մատթ. Իբ. 37.) ||, 3. ստէպ քննել և կշռել զօրինակս զԱստուածսիրողաց, 4. հեռանալ յամենայն մեղաց, որք հակառակին սիրոյն Աստուծոյ, 5. զմտաւ ածել զանթիւ բարիս՝ խոստացեալս Աստուածասիրաց, և 6 առ-

թիւ Ա՟ծսիրութե՟ առնել զայլ բարեգործութիւնս, որպիսիք են՝ աղօթք, պահք, ողորմութիւն, եւն.

Հ. Զիա՞րդ անուանի աստիճան Ա՟ծսիրութեան.

Պ. Այն աստիճան կոչի՝ Ջերմեռանդութիւն, որ է առմենապատրաստ յօժարութիւն կամաց, ընդ որոյ մարդն աշխոյժ նկատողութեամբ Ա՟ծային կատարելութեանց եւ հիացմամբ անսահման մեծվայելչութե՟ նորա՝ նուիրէ զինքն յամ՝ ազգս ծառայութե՟ Ա՟Յ (310 311. 312.).

5. Երախտագէտ լինել առ Ա՟Ծ.

Հ. Զի՞նչ է Երախտագիտութիւն.

Պ. ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ առ Ա՟Ծ է այն առաքինութիւն՝ ծնեալ ՚ի ճշմարիտ Ա՟ծսիրութենէ անտի, որով ՚ի ճանաչելն զընկալեալ բարիս եւ զշնորհս՝ ջան գործեմք ըստ կարեաց փոխարինել գործով կամ սրտիւ.

Հ. Զիա՞րդ պարտաւորէ զմեզ այս առաքինութիւն.

Պ. Զի 1. հանապազ մատուսցուք Ա՟Յ զշնորհակալութիւն վասն բիւրապատիկ բարերարութեանց նորա առ մեզ, 2. հռչակեսցուք առաջի այլոց զբարութիւն Ա՟Յ, 3. ՚ի բարիսն ՚ի կիր արկցուք զպարգեւս նորա, 4. ծանիցուք ընկալեալ յԱ՟Յ զամ բարութիւն ե՛ հոգեւոր ե՛ մարմնաւոր, 5. առաքինաբար խոստովան լիցուք զանարժանութիւն մեր, 6. ուրախ լիցուք ընդ պարգեւս Ա՟Յ՝ մե՛զ եւ ընկերաց մերոց ընծայեալս, վասն այնց առաւել եւս սիրեսցուք զԱ՟Ծ, եւ ՚ի ժամանակս ձախորդութեանց

մի՛ տժգոհասցուք զնմանէ, 7. յայսմ երախտագի-տութե՛ան անընդհատ հանապազորդեսցուք ցվախճան կենաց, և ՚ի գովել առթին ակներև ցուցցուք ամենեցուն, և 3. յայսմ առթի շարժեսցուք առ եռանդագին պահպանութի՟ պատուիրանացն Աստուծոյ

Հ. Ո՞յք են շարժառիթք, որք յորդորեն զմեզ առ ՚ի լինել երախտագէտ առ Ա՟Ծ.

Պ. Են 1. ուղիղ դատողութի՟ զ յատկութի՟ այսր առաքինութե՟, իբր զի Ճանաչել զերախտիս է բնական իսկ անկեալ յԱ՟րարչէն ՚ի սիրտս մեր կենդանեաց և անասնոց, յորս առաւելուն շունք, և այլք ամենք. 2. զի հաճոյական է յոյժ Ա՟Յ և մարդկան, զորս և բարի օրինակք շինէ, 3. ընդունակ առնէ զմարդն նորանոր պարգևաց, որպէս ընդ հակառակն՝ ապերախտութին կապէ զձեռս բարերարին, և 4. զի Սուրբ գիրք հրամայեն մեզ երախտագէտ լինել առ Ա՟Ծ.

Հ. Ո՞յք են միջոցք յանձին բերելոյ զայս առաքինութիւն.

Պ. Այդոքիկ են՝ 1. յաճախ ածել Թէ՝ որ ինչ գիպի մեզ յայսմ աշխարհի, ամե՟ն յառաջ գայ ՚ի ձեռանէն Ա՟Յ, 2. քաջ Ճանաչել՝ զի մեր բարութի՟ք և պարգևք ՚ի մեզ՝ ձրի տուեալ են յԱ՟Յ առանց մեր արժանաւորութե՟ մերոյ, 3. ուշի ուշով կշռել զմեծութի՟ և զբազմութի՟ պարգևացն Ա՟Յ, 4. Ճանաչել զանարժանութի՟ մեր և զբազմապատիկ ապերախտութի՟՝ ցուցեալ բազում անգամ Բարձրեալ Բարերարին մերում; 5. խորհիլ միշտ զօրինակս երախտագէտ անձանց, 6. աղօթել հա-

նապաղ, և 7. կշռել զգարշումն ապերախտութեան, որ է մոլումն հակառակ երախտագիտութեան, և ծը-նանի 'ի տգիտութենէ, 'ի հպարտութենէ, յանկրօնութենէ և 'ի յաջողութենէ կարծեցեալ բաղդին, յո՞յր սակս և Ա՟ծաշունչ գիրք հրամայեն փախչել յայնմանէ։

## 6. Երկնչիլ յԱ՟ստուծոյ.

Հ. Զի՞նչ է երկիւղն։

Պ. ԵՐԿԻՒՂՆ յԱ՟Յ՝ է սրբազան ինչ յարգումն և մեծարանք առ Ա՟ծ, որ տայ մեզ զգուշութիւն անձնապահ լինելոյ յայն ամ՟ գործողութեանց, որք անհաճոյ են նմա, հակառակ սուրբ օրինաց նո-րա (երկիւղ որդիական), և ընդ իւրեանս բերեն զպատիժ հոգևոր և մարմնաւոր (երկիւղ ծառա-յական)։

Հ. Ո՞յք են շարժառիթք, որք յորդորեն զԱ՟ծասէրս յերկնչիլ։

Պ. Ա՟յնոքիկ են՝ զի 1. Ա՟ծ ինքն հրամայէ մեզ ու-նել զորդիական երկիւղ առ նա, 2. երկիւղ Տ՟ն է ճշմարիտ իմաստութիւն, 3. առանց երկիւղի կոր-ծանին ամ՟ առաքինութիւնք և փոխին 'ի մոլութիւն. 4. լնու այն զհոգիս մեր ծայրապատար խնդութեամբ, 5. 'ի սոյն պարտաւորէ զմեզ ծայրագոյն գերա-զանցութիւն Ա՟յ, 6. շարժեն զմեզ երկնչիլ յԱ՟յ՝ սրբութիւն օրինաց նորա, երախտագիտութիւն մեր և ճշմարիտ խոհեմութիւն, 7. նման երկիւղածացն Ա՟յ մեծամեծ վարձատրութիւնք և յաւիտենական երա-նութիւն, և 8. որք ոչ երկնչին յԱ՟յ՝ գտանին 'ի վերջին թշուառութեան, որով և թաւալին յամ

մեղս և յաւիտենական դատապարտութեան արժանանամ։

Հ. Ո՞յք են միջոցք ստանալոյ զերկիւղն Ա՟Յ։

Պ. Այդպիսիք են՝ 1. քաջ 'ի միտ առնուլ զվերոյգրեալ շարժառիթս, 2. լաւ ճանաչել զկախումն մեր և զվերաբերումն առ Ա՟Ծ, 3. զմտաւ ածել զանսպառ բարիսն ծնեալս յերկիւղէ Տ՟ն, 4 յուշ ածել զամենուրեք ներկայութիւն Ա՟Յ, 5. հեռանալ յանկրօն և 'ի լիրբ ընկերաց, և 6. ստէպ աղօթել։

## 7. Հնազանդիլ Ա՟Յ։

Հ. Ո՞ինչ է հնազանդութիւն։

Պ. ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ է ենթարկել զկամս մեր 'ի ներքոյ Ա՟Ծային կամաց, այն է՝ ջանք կատարելոյ զամ՟ հրամայեալսն Ա՟Յ, և խորշելոյ յայնմ ամ՟է՝ որ արգելեալն է 'ի նորմանէ։

Հ. Ո՞ինչ ինչ են հարկաւոր ամ՟ քրիստոնէի առ 'ի լնուլ զայս պարտաւորութիւն։

Պ. Հարկաւո՛ր են, զի 1. գիտասցեն զամ՟ պատուիրանս Ա՟Յ, զխոստմունս և զսպառնալիս նորա, ևն, 2. զուն գործեսցեն քաղցրախորժ առնել ինքեանց զօրէնս Ա՟Ծայինս, 3. յամ՟ի միտ դիցեն անձանց իւրեանց և հանգամանաց գործոց իւրեանց, զորս և համաձայն օրինաց Ա՟Յ 'ի գլուխ հանցեն, և 4. հնազանդեսցին Ա՟Յ թէպէտ և ոչինչ օգուտ կամ վարձ յուսասցին։

Հ. Ո՞յք են շարժառիթք այսր առաքինութ՟ն։

Պ. Յատկութիւնք նորին են, զի լիցի 1. դիւրապատրաստ առանց ծուլութեան և խուսափմանց, 2. մաքուր, այս է՝ վասն սիրոյն Ա՟յ և հրամանաց նորին, 3. ընդհանուր և տարածեալ առ ամ՟ պատուիրանս Ա՟յ, և 4. անփոփոխ և մշտնջենաւոր վասն զի չիք վայրկեան, յորում մարթ իցէ մեզ չհնազանդիլ Ա՟ստուծոյ։

Հ. Որք են շարժառիթք հնազանդելոյ Ա՟յ։

Պ. Են 1. լրումն Ա՟ծային կամաց, որ պատուիրէ և պահանջէ 'ի մէնջ զայն, 2. զի սա է միմիայն և անսխալ նշան սիրելոյ մեր զԱ՟ծ, 3. Ա՟ծ է ծայրագոյն և բացարձակ Տէր, Օրէնսդիր, Պահապան և Դատաւոր մեր, և 4. սովիմք արժանի լինիմք մեք առաւելագոյն շնորհաց Ա՟յ։

Հ. Որք են միջոցք ստանալոյ զայս առաքինութիւն հնազանդութե՟։

Պ. Են այսոքիկ. 1. Ճանաչել թէ՝ քրիստոնեայք անհրաժարելի կապանօք պարտաւորեալ են պահել զօրէնս Ա՟յ, 2. ստէպ յուշ ածել զպարտաւորութիւն զայս և զբարիս յայնմանէ ծագեալս, 3. Ճանաչել զտկարութիւնս մեր և յուսալից հաւատով կոչել զԱ՟ստուած յօգնութիւն, 4. յաճախակի նորոգել զյառաջադրութիւն հնազանդելոյ Ա՟ստուծոյ, 5. յաղթել ամ՟ մարմնաւոր ցանկութեանց և Ճանաչել զքաղցրութիւն պատուիրանաց Տեառն, և 6. աղօթիւք ստէպ հայցել յԱ՟ստուծոյ զշնորհս հնազանդութեան։

Ց. Հաստատալ Աստուծոյ.

Հ. Օ՞րինչ է շատացումն.
Պ. ՇԱՏԱՑՈՒՄՆ կամ հանդչել յԱծ է ունել
զհոգի իւր միշտ հանդարտ և բաւական՝ հաւա-
տալով առոյգ, թէ՝ ամ ինչ որ պատահի մեզ
յայսմ աշխարհի՝ յառաջ գայ ի Նախախնամ
ձեռացն ԱՅ, յորմէ միշտ բարին և կատարելա-
գոյնն ընծայի մեզ և լնանի կամք նորա ի մեզ.
վասն այսորիկ Ամ Քրիստոնեայ պարտի՝ 1. բա-
րոյք հաւատալ թէ՝ և ոչ մի ինչ պատահի խո-
քեան առանց կամելոյն և թոյլտուութեան Աստուծոյ,
2. թէ՝ տուեալ լինի մեզ այն ինչ, որ յարմար
և օգտակար է վիճակի մերում, 3. շատանալ և
գոհ լինել վիճակաւ իւրով, և 4. ի դիպել ինչ
ձախորդութեան մի տրտնջել զԱծ կամ զմարդկա-
նէ, այլ զբովանդակ յոյս իւր և զելս գործոյն
յանձնել յԱծ.
Խ. Ասա ինձ զշահաբերութիւնս շատանալոյ Աստուծով կամ
հանդչելոյ յԱծ.
Պ. Այսպիսիք են՝ 1. մտածել թէ՝ Ած գոլով բա-
րեգործ Տէր ամ արարածոց՝ բաշխանէ զպար-
գևս իւր ըստ հաճոյից իւրոց՝ ում և որչափ
կամի, 2. գիտել առաւել, թէ՝ մարդս ինքնին
միայնակ ոչինչ մարթի արդիւնաւորել, 3. հաւա-
տալ թէ խնամատարն ԱՅ ճանաչէ զկարիս մեր
լաւագոյն քան զմեզ, 4. յուշ ածել զօրինակս սրբոց,
որ գոհ և շատացեալ էին Աստուծով, և 5. բա-
պահել անվրդով խաղաղութիւն սրտի կատարածի
որ և իցէ դիպուածոց.

Խ. Ասա ինձ մի առ մի և ըստ կարգի ստանալոյ զառաքինութիւնս զայս։

Պ. Այսոքիկ են՝ 1. Ճանաչել զա՟մ ինչ գալ յԱ՟Յ յօգուտ մեր, 2. Ճնշել և կրճատել զաւելորդ ցանկութիւնս մեր, 3. զատանել զճշմարիտ հարկաւորութիւնս 'ի կեղծ և յաւելորդ բարեաց, 4. չընծայել անձին զյարգ կամ զարժանաւորութի առաւել քան զչափն, 5. կշռել թէ՝ յայսմ աշխարհի անհնար է ազատիլ յա՟մ չարեաց և 'ի փորձութեց, և 6. յուշ ածել զանպատմելի պսակս և զվարձս պատրաստեալս մեզ յԱ՟րքայութեն Ա՟Յ յանվախճան յաւիտեանս։

Խ. Ասա ինձ — զի՞նչ ինչ հակառակին այսմ առաքինութե շատանալոյ յԱ՟Ծ։

Պ. Այսմ առաքինութե հակառակին՝ 1. Անբաւականութիւն հոգւոյ, որ ոչ շատանայ տեսչութե՟ն Ա՟Յ և նախախնամութե՟ն՝ ծնեալ գոլով նորին 'ի տգիտութէ, 'ի նախանձուէ, յանկարգ անձնասիրութէ, յերկրասիրութէ, 'ի տգիտութէ Ա՟ծայնոց, և այլն, 2. Անյագուն, որ ոչինչ բարեօք աշխարհիս շատանայ, 3. Տժգոհութի՟ն և բամբասանք ընդդէմ Ա՟Յ, 4. Չար նախանձ, որ երջանկութեց այլոց ոչ կարէ տանել, 5. Յանդուգն դատողու՟ն զեղանակէ կառավարութեն Ա՟Յ, և 6. Անհամբերութի՟ն և յուսահատու՟ն։

Խ. Օ՞ր այլ ինչ հարկաւոր է գիտել աստանօր։

Պ. Արժան է գիտել, թէ՝ այս առաքինութի շատանալոյ յԱ՟Ծ ոչ արգելու մեզ՝ տրտմիլ ուրեք երբեք ը՟ն ձախողակ դիպուածս, աղօթել առ Ա՟Ծ, խնդրել 'ի նմանէ զազատութի 'ի խաչից, հոգ-

տանել հարկաւորաց, 'ի գործ ածել զմարդկային միջոցս և զսոցին նմանս։

### 9. Նմանիլ Աստուծոյ ըստ կարի։

Հ. Զի՞նչ է նմանութիւն ընդ Աստուծոյ։

Պ. ԱՍՏՈՒԱԾԱՆՄԱՆՈՒԹԻՒՆՆ է ջանք և եռանդն զա՛մ գործողութիւնս մեր յանկելոյ գաղափարի ներգործութեանց Ա՛յ և բարոյական կատարելութեանց նորա ըստ մարթելւոյ։

Հ. Ո՞յք են շարժառիթք սորին։

Պ. Շարժառիթք նմանելոյ Ա՛յ են, 1. զի մարդս ստեղծեալ է ըստ պատկերի և ըստ նմանութեան Ա՛յ, զոր կորուսեալ մեզ պարտի վերստին ստանալ, 2. քրիստոնեայն գոլով որդի Ա՛յ՝ պարտաւոր է զնմանութիւն հօր իւրոյ յանձին իւրում կերպարանել, 3. վասն զի քրիստոնեայք են աշակերտք Ք՛սի, հարկ է նոցա նմանել վարդապետի իւրեանց, 4. 'ի նոյն շարժէ զմեզ օրինակն ծայրագոյն կատարելութեան Ա՛յ, և գերազանցութիւն նմանակցութեան ընդ նմա, 5. Ճշմարիտ Ա՛ծսիրութիւն հարկաւ տայ մեզ նմանիլ Ա՛յ, վասն զի յաննմանս չիք սէր, 6. անսահման ապագայ բարիք՝ խոստացեալք այնոցիկ, որք կերպարանակից են Որդւոյն Աստուծոյ, 7. հրամանն Աստուծոյ և ուղիղ բանականութիւնն, որք 'ի նոյն պարտաւորեն զմեզ, և 8. պատիժք ոչ նմանելոց Աստուծոյ, որք թողեալ զաղբիւրն սրբութեան առնուն ինքեանց յօրինակ զաշխարհ և զսատանայ։

Հ. Ո՞յք են միջոցք ստանալոյ զԱստուածանմանութեան առաքինութիւն։

Պ. Նոյնպիսի միջոցք են՝ 1. գուն գործել ճանաչել թէ՝ Աստուած զիա՞րդ դատէ՝ կամի և գործէ, 2. անջինջ դրոշմել ՚ի մտի, թէ՝ ամ գործք Աստուծոյ են կատարելագոյն օրինակ ներգործութեանց մերոց, 3. ճանաչել զգուշութեամբ, թէ՝ որո՞ց կատարելութեանց կամ գործոց Աստուծոյ պարտիմք և կարեմք նմանել, վասն զի բազում են գործք Աստուծոյ, որոց չէ մեզ հնար նմանել, և 4. յետ ճանաչելոյ զնմանելի օրինակն՝ աշխատ լինիլ ըստ կարեաց յանձին բերել զկերպարանս նոցին։

## 10. Գովել զԱստուած։

Հ. Զի՞նչ է գովելն զԱստուած։

Պ. ԳՈՎԵԼ ԶԱՍՏՈՒԱԾ է ջերմեռանդն սրբտիւ քարոզել այլոց զանուն, զկատարելութիւնս և զգործս նորա բանիւ և լեզուաւ առանձին կամ հրապարակաւ. որոյ և շարժառիթք են, զի 1. գովութիւն անբաժան կից է ընդ սիրոյ, 2. զայն հրամայէ մեզ Աստուածաշունչ գիրն ՚ի բազում տեղիս, 3. այսու արտաքին գովութեամբ տածի և զարգանայ ներքին ջերմեռանդութիւն մեր, 4. սովին տուեալ լինի շինութիւն և բարի օրինակ ամ ընկերաց մերոց և՛ առաքինեաց և՛ մեղաւորաց, և 5. ՚ի սոյն յորդորեն զմեզ օրինակք հրեշտակաց և սրբոց Աստուծոյ։ Իսկ միջոցք են՝ 1. ճանաչել ճշդութեամբ զկատարելութիւնս և զգործս Աստուծոյ ՚ի կարգի բնութեան, շնորհաց և փառաց, 2. ունիլ ՚ի սրտի զարժանաւոր մե-

ծառայս զԱ՟յ և զԱ՟ծայնոց, 3. մի՛ շանց առնել քարոզել զփառս Ա՟յ, 4. մտադրութ՟ լսել ամենեցուն, որք գովաբանեն զԱ՟ծ, 5. գովել զԱ՟ծ ոչ լեզուաւ միայն, այլ առաւել գործելով և կրելով, և 6. զայս ամ՟ այնպէս յանկ ածել, զի ՚ի նոսին ոչ զմեր, այլ զփառս Ա՟յ միայն խընդրեսցուք։

Հ. Մոլութիւնք, որք ուղղակի կամ անուղղակի հակառակեն այսմ առաքինութեան, ո՞յք են։

Պ. Գլխաւորք յայդպիսի մոլութեանց են՝ 1. Արհամարհութի՟ և հայհոյութի՟ զԱ՟յ և զԱ՟ծայնոց կամ խորհրդով և կամ բանիւ, 2. Յանպատշաճս յիշումն Ա՟ծային անուան, որ յաճախ է ՚ի բերանս ռամկաց, 3. Նաղրածութի՟ որ և իցէ կրօնի, մանաւանդ քրիստոնէականին, 4. Սուտ երդումն և երդմնազանցութի՟, 5. Սեղանակապտութի՟, այն է, պղծել զսրբազան անձինս, զիրս կամ զտեղիս։ 6. Սիմոնականութի՟, որ է գնութ՟ կամ յօժարակամ վաճառել կամ գնել զիր ինչ եկեղեցական և հոգևոր, և 7. Դիւթութի՟ կամ կախարդութի՟, որ է միջնորդութ՟ սատանայի և անարգելով զԱ՟ծ գործել կամ ստանալ ինչ գեր քան զբնականն, Որպէս տեսակք են դիւթութեան, յորս կոչումն և գործակցութի՟ դիւաց ասի լինել, և ամենեքին են ծանր մեղք ընդդէմ Ա՟յ և գրեթէ միշտ դըժուարաբուժելի։

## 11. Դաւանել և խոստովանել զԱ՟ծ։

Հ. Ո՞ ինչ է խոստովանելն զԱ՟ծ։

Պ. ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆ կամ խոստովանութի՟

կրօնի իմացեալ լինի բացայայտել բանիւ առաջի այլոց զհաւատ իւր կամ զկրօնն ՚ի Քսի, ընդ որում թէ կցորդեալ լիցի և կորուստ կենաց վասն կրօնի, յայնժամ կոչի՝ Վկայութիւն կամ Մ՝արտիրոսութիւն (Յայտնի են Ճշմարտասիրաց ամենից շարժառիթք և միջոցք առաքինութեան այսորիկ)։

Խ. Ա՛սա ինձ զմոլութիւնս՝ խոստովանութեան հաւատոյ հակադրեալս.

Պ. Այնպիսի մոլութիւնք են՝ 1. Ուրանալ կամ արտաքուստ և կամ ՚ի ներքուստ զճշմարիտ կրօնն, կամ միանալ ընդ սուտ եկեղեցւոյ, 2. Հայհոյել և հալածել զճշմարիտ կրօնն և զդաւանօղս նորին, 3. Անտարբերութիւն, այն է՝ բառնալ զզանազանութիւն ճշմարիտ և սուտ կրօնի, 4. Մ՝արդահաճութիւն կեղծաւորիլ և յանձին բերել զնշանս սուտ կրօնի, և 5. Յանդուգն խոստովանութիւն, այն է՝ առանց հարկաւորութեան կամ փառասիրութեամբ և թեթևամտութեամբ դաւանել զճշմարիտ կրօնն յայնպիսի տեղիս և ՚ի ժամանակս, յորս ոչ հրամայէ սէրն Աստուծոյ և ընկերին։

## 12. Երկրպագանել Աստուծոյ.

Հ. Զի՞նչ է երկրպագութիւն։

Պ. ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ է ծայրագոյն պատիւն մեծարանաց առ Աստուած, և ենթարկութիւն կամ նուաստութիւն մերոյ առ նա. զոր ցուցանեմք կամ ՚ի ներքուստ միայն, որ՝ հոգւով և սրտիւ. կամ ներքուստ և արտաքուստ, այն է՝ ձայնիւ,

զերկիր համբուրելով, 'ի վերայ ծնգաց խոնարհելով յերկիր, զբազուկսն տարածելով, կամ այլովք ինչ նշանօք մատուցանելով Աստուծոյ յարգանս և մեծարանս, զոր հրամայեն ուղիղ բանականութիւն, Ճշմարիտ առաքինութիւն, և իսկութին քրիստոնէութե.

## 13. Աղօթել առ Ա.ծ.

Հ. Զի՞նչ է աղօթքն.

Պ. ԱՂՕԹԵԼ առ Ա.ծ և կոչել զնա յօգնութի՝ է Ճանաչել զամենակարողութի նորա, զկարօտութի և զպակասութի մեր և խնդրել 'ի նմանէ զբարիս հարկաւորս հոգւոյ և մարմնոյ. որոյ հնար է լինել կամ մտօք միայն (աղօթք մտաւոր), կամ մտօք և ձայնիւ (աղօթք ձայնաւոր) խնդրելով զբարիս կամ վասն իւր, և կամ վասն այլոց (բարեխօսութիւն):

Հ. Քանի՞ են յատկութիւնք կամ որպիսութիւնք աղօթից.

Պ. Հինգ այսոքիկ, այնք են՝ զի 1. լինիցի սուրբ, որ է՝ միայն զհոգևորս և զԱ.ծայինս խնդրել, 2. լիցէ խոնարհ, այն է՝ Ճանաչելով զտկարութի և զանարժանութի մեր՝ հեռի յամ մեծամտութէ, 3. կատարեսցի ջերմեռանդութբ և ուշադրութեամբ՝ առանց ցնդման խորհրդոց մտաց յիրս անպատշաձս, 4. լիցի անկեղծ՝ 'ի հոգւոյ յառաջացեալ և ընդ յուսոյ կապակցել, և 5. գործակից լիցուք Ա.յ և յանուն Ք.սի խնդրեսցուք:

Հ. Քանի՞ են շարժառիթք, որք պարտաւորեն զմեզ աղօթել.

Պ. Են վեց սոքին. 1. կատարելութիւնք Ա.յ, կարողութին,

բարութիւն, խնամութիւն, տէրութիւն և այլք, որոց կարօտիմք 'ի կեանս մեր, 2. անթիւ և հանապազօրեայ հարկաւորութիւնք և պակասութիւնք մեր, 3. հրաման Ա՟Ծային միշտ աղօթելոյ և խոստումն նորա առ 'ի լսել մեզ, 4. դիւրութիւն խղճի մտաց, ես և զուարճութիւն և մխիթարութիւն հոգւոյ՝ ծագեալ յարժանաւոր աղօթից, 5. օրինակն Ք՟սի և այլոց սրբոց, և 6. գոլն աղօթից զօրաւոր միջոց ընդունելոյ յԱ՟Յ զամ շնորհս և զառաքինութիւն, այլ և գործի յաղթելոյ փորձութեանց և նեղութեանց աշխարհիս։

Հ. Ո՞յք են միջոցք արժանապէս աղօթելոյ։

Պ. Այս. 1. զմտաւ ածել զվերոյիշեալ շարժառիթս, 2. ճանաչել զկարիս և զկարօտութիւնս մեր, 3. յուշ ածել զպտուղս աղօթից, 4. հաւատովլինել թէ՝ լսել ունի Ա՟Ծ աղօթից մերոց քաղցրութեամբ, 5. հեռանալ յընկերութենէ չարաց, 6. մաքուր ունել զխղճմտանս մեր 'ի մեղաց, և 7. յուշ ածել թէ Ք՟րիստոս և Հոգին սուրբ բարեխօս են վասն մեր և ուսուցանեն մեզ աղօթել։

Հ. Զի՞նչ է օգուտն կամ շահն յաղօթից։

Պ. Բազում են և պէսպէս օգուտք յաղօթելոյ, որոց գլխաւորքն են 1. այն՝ զի սրտիւ աղօթիւք հաստատին հաւատք մեր առ Ա՟Ծ, և առնուն ինքեանց ոյժ և զօրութիւն այլ ամ առաքինութիւնք։ 2. աղօթք յուշ ածեն մեզ զկատարելութիւնս Ա՟Յ, որով շարժիմք առաւել ևս ջերմեռանդն լինել առ նա, 3. 'ի միտ ածեն մեզ աղօթք զբազում ճշմարտութիւնս կրօնի, 4. քաջ առաջի առնեն մեզ զկախումն մեր զԱ՟Յ և զպէսպէս անկատարութիւնս,

որով ազատիմք 'ի հպարտութենէ, 5. տան մեզ ճա-նաչել զորպիսութիւն հոգւոյ և սրտի մերոյ, և 6. լնուն զմեզ կարևոր շնորհօք Ա՟յ.

Հ. Ո՞ր է տեղի կամ ժամանակ աղօթելոյ.

Պ. Չէ որոշեալ, այլ հրամայեալ է բարի քրիստո-նէից աղօթել առ Ա՟ծ հոգւով և մտօք յամ ժա-մանակի և յամ տեղւոջ. բայց սակայն հրամանաւ եկեղեցւոյ պատուիրեալ է՝ հաւաքելով յեկե-ղեցին աղօթել անդ 'ի միասին հրապարակաւ առ Ա՟ծ. Բաց յայսմանէ իւրաքանչիւր քրիս-տոնեայ պարտաւորի աղօթել յամ աւուր 'ի տան իւրում գոնէ կէս ժամ յառաւօտու և յե-րեկոյին.

Հ. Ո՞յք են մոլութիւնք, որք հակառակին աղօթից.

Պ. Մոլութիւնք այդպիսիք են՝ 1. ոչ աղօթել բոլորո-վին կամ հազիւ ուրեք, 2. յանդուգն հայցուած, որ խնդրէ յԱ՟յ զանարժանս, 3. տատանումն, որով ալեկոծին խորհուրդք մտաց յանպատշաճս կամ ընդ ստուգութիւն խոստմանցն Ա՟ստուծոյ, 4. գաղջութին յաղօթելն անդ, մանաւանդ եթէ ոչ ընկալցի ոք զխնդիրս իւր յԱ՟յ, և 5. աղօթք փարիսեցի, որ ուռուցեալ բարեգործութեամբք իւրովք մատչի առ Ա՟ծ, գուցէ և արհամարհելով զըն-կերս։

Խ. Թէ մարթ ինչ է, ցոյց ինձ զսովորական աղօթ-սըն եղեալս 'ի մերում լեզուի։

Պ. Սովորական ոճք աղօթելոյ 'ի լեզուիս Հայոց են՝ տէրունական աղօթքն՝ Հայր մեր. Հանգանակն հաւատոյ. հռչակաւոր աղօթք Ներսիսի Շնոր-հալւոյն՝ Հաւատով խոստովանիմ. երգքն՝ Ա՟ստուա-

ւոտ լուսոյ, փառք 'ի բարձունս. Սաղմոսարան Դաւթի. սքանչելի գիրքն աղօթից Գրիգորի Նարեկացւոյն, Ժամագիրք և նմանք.

14. Տօնել զԱ.ստուածայինս.

Հ. Զի՞նչ է տօնակատարութիւն:
Պ. ՏՕՆԵԼ զԱ.ծայինս նշանակէ սրբութեամբ և ջերմեռանդութեամբ յարգել զայն ամենայն ծէսս և արարողութիւնս եկեղեցւոյ, որք վերաբերին առ Ա.Ծ. որոյ վախճան է հաստատել զմեզ 'ի բարի գործս և շինութիւն տալ ընկերաց՝ շարժելով զնոսա 'ի ճշմարիտ Ա.ծպաշտութիւն.
Հ. Ո՞յք են յատկութիւնք առաքինութեանս.
Պ. Յատկութիւնք սորին են, զի 1. կատարեսցի պարկեշտութեամբ և ըստ կարգի, 2. իցէ համաձայն կանոնաց Քրիստոնէական կրօնի, 3. հեռի լինիցին այն ամենայն, որ շփոթեն զմիտս և ըզբարեկարգութիւն, 4. համաձայնեսցի օրինաց 'ի սուրբ գիրս մեզ առաջի եդելոց (313. 314. 315.), 5. կատարեսցի յարգութեամբ, և՝ ներքին և արտաքին պարկեշտութեամբ, որովհետև անպարկեշտ տնօրինութիւն է անարգանք Ա.Յ հակառակ նպատակի Ա.ծային տաճարաց, և անիրաւութիւն քրիստոնէական ընկերակցութեան, 6. լիցի մտադրութեամբ ըստ ամենայնի, ըստ որում լոկ մարմնական ներկայութիւն անընդունելի է Ա.Յ, և 7. լիցի եռանդեամբ սրտի, սուրբ յառաջադրութիս դնելով, ևն:
Խ. Ա.ամ լինի և [illegible] կատարելոյ զտօնս,

Պ. Տօնակատարութիւնք շարժականք են, զի 1. հրրամայէ մեզ նոյն ինքն Աստուած (316.), 2. տօնք են հարկաւոր միջոցք և գործիք պահելոյ և զարգացուցանելոյ զկրօնն, առանց որոյ տգիտութիւն տիրէ և ապականութիւն վարուց յաճախէ, 3. ներկայութիւն հաւատակից եղբարց, ընկերութիւն ածապաշտից, աղօթք, երգք, քարոզք, Թափօրք և այլ հոգևոր ծէսք՝ սաստիկ օրինակաւ ազդեն ՚ի միտս մարդոյ, որով և շինութիւն լինի ամենենեցուն ՚ի հոգևորս, և 4. են շաղկապ եղբայրսիրութեան, որով քրիստոնեայք կապին ընդ իրեարս իբր արարածք Աստուծոյ, իբր որդիք միոյ հօր, և փրկեալք միով Քրիստոսիւ առանց խտրութեան աղքատի և հարստի։

## 15. Երդնուլ յԱստուած:

Հ. Օ ի՞նչ է երդումն:

Պ. ԵՐԴՈՒՄՆ է կոչել զԱստուած ՚ի վկայ՝ առ ՚ի հաստատել զճշմարտութիւն ինչ, որ բաժանի ՚ի հաստատողական և ՚ի խոստացողականն, ՚ի հանդիսական և յառանձնական, ևն. որ թէպէտ ո՛չ էր հարկաւոր ըստ պատուիրանին Քրիստոսի, եթէ ամենայն քրիստոնեայք լինէին ճշմարտախօս, բայց որովհետև չարք խառնեալ են ընդ բարիս յամ ժամանակի, վասնայսորիկ ՚ի պահանջել հարկին քրիստոնեայն առ ՚ի ցոյց ճշմարտութեան իւրոյ կարէ երդնուլ, որոյ արժան և օրինաւոր լինելն հաստատի ՚ի բանից Աստուածաշունչ գրոց, ևս և յօրինակէ Քրիստոսի և առաքելոց նորա (317. 318. 319.):

Հ. Ո՞յք են յատկութիւնք երդման:

Պ. Նա՛ զի 1. լինիցի անուամբն Ա՛յ, որ է առա-
ջին ճշմարտութի՛, 2. իցէ մտադրութ՛բ և դիտաւո-
րութ՛բ, և ո՛չ առանց ուշադրութե՛ ըստ սովորութ՛բ,
3. հաստատական երդումն լինիցի յիրս ճշմարի-
տըս, իսկ խոստացողականն յիրս օրինաւորս. իբր
զի վասն ստութե՛ կամ վասն չար իրաց չէ եր-
բեք արժան երդնուլ, և 4. լիցի վասն ծանր
հարկաւորութեան և վասն ստիպող պատճառաց,
զի երդնուլն է ներգործութի՛ Ա՛ծային կրօնի,
զոր չէ արժան վասն սնոտեաց 'ի կիր առնուլ:

Խ. Ա՛սա ինձ — զի՞նչ ներհակէ ճշմարիտ երդման:

Պ. Գլխագրի այդմ Ստերդմութիւն. որով ստութիւն
բանից և գործոց ինչ հաստատի. կամ խոստա-
ցեալ լինի ինչ՝ զոր չկամի ոք կատարել:

Հ. Ո՞րպիսի մեղք է ստերդմութիւն:

Պ. Սա է մեղք մահու չափ, յորմէ ամենայն քրիս-
տոնեայ խորշել պարտի և հրաժարիլ. վասն զի
1. արգելեալ է 'ի Սուրբ գրոց (320.), 2. հա-
կառակ է մեծվայելչութեան Ա՛յ, է անարգութի՛
և չարաչար վարումն անուան նորա, 3. ստերդ-
մունք զրկեալ են յարքայութենէն Ա՛յ և յընկերութե՛
սրբոց (321.), 4. հակառակ է բարւոյն հասա-
րակաց և թշնամի երջանկութե՛ մարդկային ազ-
գի, վասն զի երդումն է հարկաւորագոյն միջոց
պահպանելոյ յամի զփոխադարձ հաւատարմութի՛
բանից. վասն որոյ 'ի յաճախել սուտ երդման
կործանի ամ՛ երջանկութի՛ մարդկային ընկերութե՛
և 5. ստերդումն մեղանչէ ընդդէմ դատաւորին և
Ա՛ծատուր իշխանութե՛ նո՛ր, զոր խաբէ՝ անարգելով
զարժանաւորութի՛ մարդկութե՛ յինքն և յընկերս:

Հ. Քանի՞ են միջոցք խորշելոյ 'ի սուտ երդմանէ։
Պ. Եօթն սոքին. 1. քաջ 'ի միտ առնուլ զծանրութիւն այսր մեղաց, 2. Ճանաչել զգերագոյն մեծվայելչութիւն Այ, 3. գուն գործել անկեղծ սիրել զընկերս. զի զոր սիրէ ոք՝ ո՛չ խաբէ զնա, 4. 'ի միտ առնուլ զունայնութիւն երկրաւոր բարեաց, զի մի առ սէր նոցա յանցանիցեմք ընդդէմ Այ, 5. յուշ ածել զչարաչար կատարած և զհետեւանս սուտ երդման, 6. կշռել, թէ ցորչափ չէ ուղղեալ այս չար սովորութիւն, ո՛չ գոյ մեզ յուսալ զթողութիւն նորին յԱյ, և 7. ստէպ զմտաւ ածել զմեծութիւն Այ և յաւիտենականութիւն, և զծանրութիւն մահուան և դժոխոց։

16. Ունիլ զՆախանձ ուղղափառ կրօնից։

Հ. Օ ի՞նչ է նախանձայուզութիւն։
Պ. ՆԱԽԱՆՁԱՅՈՒԶՈՒԹԻՒՆ հաւատոյ է եռանդագին ջանք հաղորդելոյ ընկերաց մերոց զճանաչումն ուղղափառ կրօնից և զսէր առաքինութեանց։ Այս առաքինութիւն է բնական պտուղ ճշմարիտ Ածսիրութեան և անկեղծաւոր եղբայրսիրութեան. և որպէս զի լիցէ Ածահաճոյ՝ հարկ է, զի 1. լիցի համաձայն ուղիղ ճանաչման մերոյ զԱյ և միայն զճշմարտութիւն քարոզեսցէ, 2. ծնեալ լիցէ 'ի մաքուր դիտաւորութենէ, 3. 'ի գործ դիցի զգուշաւոր խոհականութեամբ առանց նենգութեան և խաբէութեան, և 4. արասցի բազում հեզութեամբ, քաղցր սիրով և խոնարհութեամբ։
Հ. Քանի՞ են հակադրեալք սորին։

Պ. Են երկու այսոքիկ. 1. Չեզոքութիւն, որ ոչինչ հոգայ զկրօնէ այլոց մանաւանդ զհպատակաց իւրոց, և 2. կոյր կատաղի Խանդագուշանք, որ զամ զայլոյ կրօնի անդամս գուն գործէ փոխել 'ի կրօնս իւր, կամ հալածէ և խաբէ չարաչար։

## Բ.

## Անձնապաշտութիւն։

Հ. Զի՞նչ և քանի՞ է անձնապաշտութիւն։
Պ. Անձնապաշտութիւն կոչին այնպիսի ներգործութիւնք մարդոյ, որոյ եզր և առարկայ է նոյն իսկ գործօղն՝ ըստ ամ մասանց հոգւոյն և մարմնոյն՝ մոռացեալ իբր վախճան Թանկագին և արժանայարգ։ Գլխաւոր տեսակք սոյնօրինակ պաշտամանց են՝ Ճանաչել զանձն և զյատկանիշ նորին, Ուղիղ համարումն ունել զանձնէ, Սիրել Խոնարհիլ Լուսաւորել զմիտս, Սրբել զկամս, Ուրանալ զհեշտութիւնս զգայութեանց, Խարուքել ըզմարմինն, Գանձել պատիւ և հարստութիւն, Պատրաստել յերջանիկ մահ, և յամի Պահել զխոհեմութիւն։

### 1. Ճանաչել զանձն և զկարգ նորին։

Հ. Զի՞նչ է ճանաչումն անձին։
Պ. Ճանաչումն անձին տայ մեզ 'ի միտ առնուլ թէ՝ զի՞նչ եմք, ո՞վ եմք, ո՞րպիսի եմք, զո՞ր գերազանցութիւնս, կարողութիւնս, ներգործութիւնս, կատարելութիւնս և պակասութիւնս ունիմք. զիա՛րդ զգամք, խորհիմք, ցանկամք, գործեմք, կրեմք, եւն.

Հ. Զիա՞րդ բաժանին գերազանցութիւնք մարդոյ.

Պ. Բաժանին նոքին ՚ի Բնականս, ՚ի Գերբնականս և ՚ի Ստացականս.

Խ. Մեկնեա ինձ մի առ մի — թէ՝ որք են գերազանցութիւնք բնականք, գերբնականք և ստացականք.

Պ. ՚Ի գերազանցութեանց մարդոյ՝

Բնականք են՝ սքանչելի կազմուած մարմնոյն ընդ ներքին և արտաքին զգայութեանցն, տիրողութիւն ՚ի վերայ ամենայն արարածոց, ոգեղինութիւն կամ աննիւթութիւն հոգւոյն, անմահութիւն նորին, միտք կամ զճշմարտութիւն ճանաչող զօրութիւն և բանականութիւն, ազատ անձնիշխանութիւն կամաց, ընտրողութիւն, բարոյականութիւն, առաքինագործութիւն, եւն.

Գերբնականք ասին՝ արդարութիւն կամ սրբութիւն կամաց, ճանաչումն ճշմարտութեան, համաձայնութիւն մտաց և կամաց՝ յորս էին պատկերն Աստուծոյ, բարոյական կատարելութիւն՝ այն է ձայնակցութիւն գործոց մերոց ընդ օրինացն Աստուծոյ, երջանիկ երանութիւն աստ և ՚ի հանդերձեալ կեանս, հրաշափառ յարութիւն մարմնոց, եւն. և

Ստացականք կոչին՝ աշխատութեամբ գանձեալ հոգևոր և մարմնաւոր բարիք, զանազան գիտութիւնք, արուեստք, խոհեմութիւն, արդար հարստութիւն, պատիւ, բարեկամք, ընտանիք, կալուածք, պէսպէս արժանաւորութիւնք յեկեղեցական կամ յաշխարհական վիճակի, եւն.

Հ. Որո՞վք հաստատի հարկաւորութիւն ճանաչելոյ զանձն.

Պ. Նախ՝ այնուիկ, զի ինքն Աստուած յոլով ուրեք ՚ի

սուրբ գիրս հրամայէ մեզ զայն, և զոչ ճանաչելն զմեզ դատապարտէ (322. 323. 324. 325.)։ Երկրորդ՝ զի առանց ճանաչելոյ զմեզ ոչ կարեմք ստանալ՝ ոչ զլուսաւորութիւն մտաց՝ և ոչ զպէսպէս առաքինութիւնս. զի թէ ոչ գիտասցուք զորպիսութիւնս մեր՝ զիա՞րդ իմասցուք զտկարութիւնս մեր և զմոլութիւն, զիա՞րդ գործեսցուք կամ տեսցուք ՚ի բարի գործս. ո՞րպէս ՚ի դիմի հարցուք մեղաց, և ե՞րբ ծառայեսցուք կամ օգնեսցուք եղբարց։ Երրորդ՝ առանց անձնաճանաչութեան անհնար է մեզ ՚ի ձեռս բերել ոչ զաշխարհային և ոչ զյաւիտենական երջանկութիւն, ևն։

Հ. Քանի՞ են խոչընդոտք այսր առաքինութեան։

Պ. Են ութ այսոքիկ. 1. բռնակալ զգայականութիւն, որ խաւարէ զմիտս և ոչ ներէ ճանաչել զանձն, 2. մեղսալից խղճմտանք, որ զարհուրի քննել զինքն և տեսանել զխայտառակութիւն իւր, 3, չափազանց զբաղանք աշխարհի, որ ոչ տայ վայրկեան անձին միտ դնելոյ, 4. կոյր անձնասիրութիւն, որ զինքն միշտ կատարեալ համարի, 5. բաղդատել զանձն ընդ չարագոյնս, առ որովք արդար երևի, 6. սուտ դատողութիւնք աշխարհավարաց, ըստ որոց՝ ինչ ինչ մոլութիւնք երևին մեզ առաքինութիւնք, 7. սուտակասպաս երեսպաշտք և մարդահաճոյք, որք զմոլութիւնս մեր ծածկեն և անմեղադիր առնեն, կամ առաքինութիւնս մեզ վերագրեն կեղծեօք, և 8. տգիտութիւն բարոյական և առաքինուսոյց գիտութեանց։

Հ. Ո՞յք են միջոցք ճանաչելոյ զանձինս մեր։

Պ. Են. 1. բառնալ զվիշէլ խափանարարսդ, 2. հա-

սուն քննութբ եւ ուշադրութբ զննել զբնութի եւ զներքին շարժմունս մեր, 3. քննել թէ՝ զի՞նչ խօսին եւ դատեն զմէնջ թէ բարեկամք եւ թէ թշնամիք, 4. անկողմնապահ մտօք համեմատել զվարս մեր ընդ վարուց բարեկրօն առաքինեաց, 5. ընթեռնուլ զվարս եւ զպատմութիւն երեւելի անձանց, 6. կարդալ զհոգեբանութի, զտրամաբանութի, զպատմութի տէրութեանց եւ ազգաց, եւն, 7. յաճախ կենակցել ընդ կատարեալ իմաստունս եւ ընդ բազումս առաքինի անձինս, եւ 8. մի՛ լինել ծառայ չար կրից եւ փախչել 'ի չար ընկերաց։

Հ. Ո՞րն է բարոյական յատկանիշն։

Պ. Բարոյական յատկանիշ ասելն է հանգամանք կամ որակութի ինչ (որ լինի՝ կամ բարի, եւ կամ չար եւ մոլի) հոգւոյ, որ իբր հանրական պատճառ եղանակաւորէ զդատողութիւս մտաց, զյօժարութիւնս կամաց, զբերումն զգայութեանց եւ զամ ազգս գործողութե մարդոյ. այն ինքն է՝ որով ոմանք 'ի մարդկանէ ինքնին ձգին միշտ յայս ինչ առաքինութի կամ 'ի մոլութի, եւ ոմանք յայն։ Աստի՝ որովհետեւ այսպիսի յատկանիշք ունին զթոյլ եւ զսաստիկ աստիճանս, եւ բարին կարէ յոռանալ եւ մոլեկանն սրբանալ, պարտական է քրիստոնեայն՝ 'ի գտանել զյատկանիշ բարուց իւրոց չար կամ թերի՝ ջանալ ամե ուղղել զայն՝ 'ի կիր առնլով զշարժառիթս եւ զմիջոցս առաքինութեանց։

### 2. Ունիլ զանձն ուղիղ վարկած։

Հ. Զի՞նչ է վարկումն անձին։

Պ. Ուղիղ համարումն անձին է արդար վարկ բարոյական բնութեան և արժանաւորութեան մերոյ՝ ծնեալ յուղիղ ճանաչմանէ գերազանցութեան անձին։ Սակայն հարկ է արթուն կալ, զի մի համարումնս այս եղեալ ըստ չափ ուղիղ բանականութեան՝ փոխեսցի ՚ի մոլութիւն Ինքնապարծութեան, որ է յանչափս համբառնալ զկատարելութիւնս իւրոյ անձին միայն, ուր ուղիղ վարկածն զա՟մ մարդիկ միօրինակ յարգէ ՚ի բարոյական կարգի։

### 3. Սիրել զանձն։

Հ. Զի՞նչ է սէրն անձին։

Պ. Ինքնասիրութիւնն է արդիւնալիր ջանք աճեցուցանելոյ զառաքինութիւնս՝ զկատարելութիւնս և զերջանկութիւն իւր. և է մեզ ծննդակից՝ յուղիղ բանականութենէ հրամայեալ, և յԱ՟Յ և ՚ի Յ՟սէ Ք՟սէ իբրու գաղափար եղբայրսիրութեան յանձն արարեալ։

Հ. Որք են յատկութիւնք կամ որպիսութիւնք գովելի անձնասիրութեան։

Պ. Են այսոքիկ, զի 1. զհետ կրթեսցի լուսաւորութեամբ մտաց և բարեգործութեամբ, 2. զճշմարիտ եղբայրսիրութիւնս յինքեան բովանդակեսցէ, 3. ՚ի կիր առցէ զա՟մ միջոցս ստանալոյ զառաքինութիւնս, 4. հրաժարեսցի յայնմ ա՟մէ, որ՝ ՚ի մոլութեանց և ՚ի մեղաց, որք թշուառացուցանեն զանձն։

5. զսէրն Ա՟յ և զկամս նորա միշտ նախադաս արասցէ քան զա՟մ ինչ զիւր, և 6. հեռի լիցի յա՟մ յանիրաւ և յանկարգ շահասիրութենէ:

## 4. Լինել Խոնարհ Ճշմարտիւ.

Հ. Զի՞նչ է խոնարհութիւն.

Պ. Խոնարհութիւնն է ուղիղ դատողութիւն զորպիսութենէ անձին իւրոյ. որոյ յատկանիշք են, կր 1. զա՟մ բարիս և զպարգևս յանձին երևեալս յԱ՟յ միայնոյ ճանաչէ, 2. զպակասութիւնս և զանկատարութիւնս իւր յինքենէ ոչ ծածկէ, 3. զկատարելութիւնս իւր հակառակ ճշմարտութեան ոչ ուրանայ 4. առաւել քան զեղեալսն՝ անձին ոչ վերագրէ և ոչ ամբառնայ զինքն միօք, 5. ոչ զոք 'ի մարդկանէ արհամարհէ, 6. զա՟մ ոք ըստ արժանեաց նոցին ճանաչէ և պատուէ, 7. վիճակաւ իւրով շատանայ, 8. զինքն նուաստ քան զայլս համարի 9. մեծաւորաց՝ թէպէտ և արատաւորաց՝ ա՟նց բամբասանաց հնազանդի, և 10. ընդ ստորինս քաղցրութե՟ վարի:

Հ. Ո՞յք են նշանք խոնարհութեան հակառակք.

Պ. Հպարտութիւն, որ է չափազանց և անիրաւ համարումն զանձնէ և զգերազանցութեանց 'իւրոց, որով փքացեալ կամ ուռուցեալ սիրտ ուրուք՝ լի և բաւական վարկանի զինքն ինքեամբ, զա՟մ մարդիկ արհամարհէ, յամենեցուն պատուիլ կամի, ոչ ումեք հնազանդի, ամենեցուն նախադասիլ նկրտի, և թէ քանի՞ մեծ վարկանի զինքն՝ բանիւ և շարժմամբ արտայայտէ. որոյ և պատճառք

են, 1. պակասութիւն ուղիղ անձնաճանաչութեան, 2. սխալ դատողութիւն զգերազանցութեանց իւրոց, 3. մոլորական գաղափար պատուոյ և փառաց, 4. չեղծ դաստիարակութիւն 'ի մանկութենէ, և 5. երեսպաշտութիւն մարդելուզայ, եւն. — և Սուտ խոնարհութիւն.

Հ. Որպիսին 'ի մարդկանէ տեսանի սուտ խոնարհութիւն։

Պ. Նախ՝ 'ի նոսա, որք զշնորհս կամ զկատարելութիւնս՝ զոր իրօք ունին՝ փոքրոգութեամբ ուրանան կամ ծածկեն, առ որ և իցէ պաշտօն եղբայրսիրութեան զինքեանս անարժան համարին, խորշին յընկերակցութենէ մարդկան և անձանց միայն առանձին ապրին. այսպիսիք մեղանչեն հակառակ յայտնի հրամանաց Ս.Գ՝ որ պատուիրէ յարգել զտաղանդ մեր յօգուտ եղբարց։ Երկրորդ՝ 'ի նոսա որք իրօք հպարտ լինելով՝ կեղծեն զինքեանս խոնարհ գոլ. որք կոչեն զինքեանս մեղաւոր կամ պակասաւոր, իսկ երբ այլք ընծայեն նոցա զնոյն պակասութիւն՝ դառնանան և վրէժ խնդրեն. և որք սուտ գլխակորութեամբ, ակնկորութեամբ, և զլոկ նշանս խոնարհաց ցուցանելով զայլս խաբել նկրտին և զանուն առաքինւոյ ժառանգել։

5. Լուսաւորել զմիտս ճշմարտութեամբք.

Հ. Ո՞ինչ է լուսաւորութիւն մտաց։

Պ. Լուսաւորել զմիտս է գանձել յայնմ զճշմարիտ ճանաչմունս և զգիտութիւնս օգտակար և հարկա-

ւոր առարկայից, առ որ պարտաւորեն զմեզ բազում շարժառիթք, որք են՝ 1. Ա.Ծ՝ որ յաճախ հրամայէ մեզ ստանալ զլուսաւորութիւն, զճշմարտութիւն, զգիտութիւն և զիմաստութիւն, 2. անհամար հոգևոր և մարմնաւոր բարիք՝ յիմաստութենէ և 'ի ճշմարտութենէ մեզ պարգևեալք, 3. զարհուրելի չարիք և թշուառութիւնք՝ 'ի տգիտութենէ և յանլուսաւորութենէ ծագեալք, 4. ճշմարիտ անձնասիրութիւն, 5. պարտիքն բարեգործութեանց, 6. ուղիղ եղբայրսիրութիւն, 7. պատուիրանն Ա.Ծսիրութեան, զի Ա.Ծ ոչ զոք սիրէ՝ բայց զայն որ ընդ իմաստութեան կեցցէ, 8. նպատակն ստեղծման մերոյ, զի վասն այն ետ մեզ Ա.Ծ զմիտս և զբանականութիւն, զի ուսցուք զճշմարտութիւնս ամենայն իրաց, և 9. հարկն նմանելոյ Ա.Յ, որ լինի ճշմարտութեամբ և լուսաւոր մտօք միայն։

Հ. Ո՞յք են խափանարարք ճշմարտաճանաչութեան։

Պ. 1. բռնակալ զգայապաշտութիւն, որ տաղտկանայ ընդ հոգևորս, 2. կեանք բազմազբաղ, որ ոչ տայ վայրկեան որոնելոյ զճշմարտութիւն, 3. հեղգութիւն՝ որ փախչի յաշխատանաց 'ի խնդրել զճշմարտութիւն 4. օգտասիրութիւն, երբ ստութիւն՝ և մոլորութիւն շահեկան և հեշտալի են մեզ, 5. հպարտութիւն՝ որ անպատուութիւն համարի փոխել զմոլար կարծիս իւր, 6. հեղինակութիւն այլոց՝ որոց կուրօրէն հաւատամք առանց քննելոյ զճշմարիտն, 7. համարումն հնութեան, ըստ որոյ զամենայն ինչ 'ի նախնեաց աւանդեալ՝ ուղիղ վարկանիմք, և զնորոյն՝ սուտ, 8. սէր նորութեան, որ յոլովակի առանց մանր քննութեան ճշմարիտ դատէ զնոր ինչ գիւտ, և 9. սուտ

կարծիքն ռամկաց՝ որ զամ բեռն ուսմանց բառնան 'ի վերայ ուսոց եկեղեցականաց (ըստ որում և ասեն յաճախ „ Տէր տէր չեմ լինելու, վարդապետ չեմ դառնալու. ինչ պէտքս է, որ գընամ կարդալ կամ գիտուն սովորեմ)․ որպէս թէ ինքեանք չիցեն մարդիկ, կամ չունիցին միտս և բանականութիւն յԱյ ընկալեալ։

## 6. Սրբել զկամս առաքինութեամբք։

Հ. Զի՞նչ է սրբութիւն կամաց։

Պ. Սրբել զկամս՝ նշանակէ առնել, զի կամքն սիրեսցեն զճշմարիտ բարիս միայն, որք են՝ գիտութիւն և առաքինութիւն. ատեսցէ զսուտերպարան բարիս, զհեշտութիւնս ասեմ. խորշեսցին 'ի ճշմարիտ չարեաց՝ զմեղսն իմն և զտգիտութիւն, դադարեսցին 'ի հեշտանալոյն մեղօք և 'ի հակամիտելոյն 'ի չարն, սովորեսցին ձգտիլ առ բարիս, 'ի վաստակս առաքինութեց տարրացեալ ունակասցին, և ցվախճան կենացն 'ի դոյնս հանապազորդեսցէ։

Հ. Ո՞ր է [illegible] հակադրեալ այսմ պատուիրանի։

Պ. Նոյն իսկ է Ծուլութիւն կամ Պղերգութիւն, որ է անհոգ լինել առ 'ի սրբել զհոգի իւր 'ի մեղաց, չունիլ փոյթ զառաքինութեց, զմիջոցաց նոցին և զփրկութենէ հոգւոյ, ևն. որոյ պատճառք են՝ տգիտութիւն, անկարգ աշխարհասիրութիւն, սովորեալ մեղանչականութիւն կամ մեղասիրութիւն, օրինակ և կենակցութիւն ընդ ծուլից, անհիմն յոյս յողորմութիւն Այ, ևն։

## 7. Ուրանալ զհեշտութիւն:

Հ. Օ՞րինչ է ուրացութիւն հեշտութեանց:

Պ. Ուրանալ զհեշտութիւնս է սանձումն անկարգ չար ցանկութեանց՝ Ա՛ծային օրինաց հակառակելոց, և համբերութի՛ւ վշտաց առ սէր առաքինութեանց. ըստ որոց և զօրութի՛ւ այսր օրինաց բացատրի բառիւքս Հրաժարեմ, որ է՝ ՚ի հրապուրել մարմնոյ՝ տրուփանաց՝ զգայութեանց և չար ընկերաց ՚ի մեղանչել ընդդէմ Ա՛յ՝ հեռանալ և յետս կալ. և Համբերեմ, այն է՝ ՚ի հասանիլ վշտաց՝ նեղութեանց՝ աղքատութեան՝ ձախորդութեանց և հալածանաց ՚ի սակս օրինապահութեան և բարեգործութեանց յանձնառնուլ զխաչ, և լինել խաչակից Քսի:

Հ. Ո՞յք են շարժառիթք՝ որ պարտաւորեն զմեզ ուրանալ զանձինս, և միջոցք ստանալոյ զայս առաքինութի:

Պ. Շարժառիթք են՝ զի 1. Ա՛ծ ինքն հրամայէ մեզ զայն, 2. բանականութիւն և միտք բանիւ ստեղծման իւրոյ՝ սահմանեալ է առ ՚ի տիրել զգայականութեան, և ոչ թէ ծառայանալ նմա, 3. առանց այսր անհնար է յաղթել մեղաց և գործել զառաքինութիւս, 4. չէ՛ ինչ օգուտ մարդոյ զաշխարհ ամ շահիլ՝ հետեւելով զգայութեանց, և զանձն իւր կորուսանել, 5. յիմարութի է՝ զԱ՛ծ անարգելով գանձել զկորստական բարիս, և 6. անթիւ փառաց և վարձուց արժանի է վասն Ա՛յ կրել ըզխաչ և զնեղութի: Իսկ.

Միջոցք են՝ 1. խոկալ զթշուառութիւս մարմնապաշտ զգայասէր անձանց, 2. ուրանալ երբեմն զօրինաւոր հաճոյս, զդէմ ունել եւ և թեթև

շարժմանց զգայութեց, 3. ուսանիլ զարդար գիրն և զյարգ երկրաւոր բարեաց, 4. քաջ ճանաչել զարժանաւորութիւն և զպատիւ անձին, 5. հայել յօրինակս Քսի և սրբոց Այ, և 6. ՚ի միտ առնուլ թէ՝ ոչ պահանջի ՚ի մէնջ հեռանալ յամ ախորժելեաց զգայութեանց, կամ ուրանալ մեզ զօրինաւոր ուրախութիւն, զընկերութիւն, զզբօսանս, ևն։

## 8. Բարւոքել զմարմինն։

Հ. Ի՞նչ է բարւոքել զմարմինն։
Պ. Բարւոքել կամ կատարելագործել զմարմինն նշանակէ պահել և աճեցուցանել զզօրութիւն նորին ըստ բոլորին և ըստ մասանցն, և ըստ ներքին և արտաքին զգայարանացն։

### Պահել զկեանս և զառողջութիւն։

Հ. Ի՞նչ է պահպանութիւն կենաց,
Պ. Պահպանել զկեանս է հեռանալ յամ՝ որ կարճէ զայն կամ վնասէ առողջութեան կենաց, և վարիլ այնու ամիւ՝ որ յերկարաձգէ զկենդանութիւն և զառողջութիւն. վասն զի կենդանութիւն մարդոյ յաշխարհիս է պարգև Այ տուեալ իբր գործիք, յորոյ ձեռն հոգին առնու զծանօթութիւն ճշմարտութեց, վարժի յառաքինութիւն, ելուզանէ զներգործութիւն արտաքին կրօնի, ծառայէ ընկերացն, և գանձէ ինքեան վարձս յապագայ կեանս։
Առ պահպանութիւն կենաց պարտաւորի մարդ և ՚ի

պատգամաց Նորա, որ ՚ի սուրբ գիրս հրամայէ 1. խնամել զկեանս և զողջութիւն մեր, 2. փախչել ՚ի վտանգաց և յորոգայթից կորստեան կենաց, 3. ՚ի վտանգին կենաց կամ ՚ի կորուսանելն զառողջութիւն ՚ի գործ ածել զամենայն միջոցս վերստին ստանալոյ, և 4. մի պաշտօն տանել կենաց և մարմնոյ մեղանչական օրինակաւ (326. 327. 328. 329. 330.)։

Հ. Ո՞յք են միջոցք պահելոյ և բարւոքելոյ զկեանս։

Պ. Նախ՝ օդ և կերակուր առողջարար, չափաւոր աշխատանք, քուն և հանգստութիւն, յստակութիւն մարմնոյ՝ զգեստուց՝ բնակարանաց՝ անօթոց՝ կերակրոց և այլ գործեաց։

Երկրորդ՝ զուարթութիւնք սրտի և հոգւոյ, անմեղ զբօսանք, խաղք, կոչունք, տեսարանք, թատրոնք և նման զուարճութիւնք, զորոց զօրինաւոր լինելն, զորպիսութիւն և զբարեպաշտ եղանակն ուսանիմք ՚ի բանից և յօրինակաց սուրբ գրոց (331. 332. 333.)։

Երրորդ՝ Բարեխառնութիւն, Ողջախոհութիւն, զգաստութիւն, չափաւորութիւն կամ ժուժկալութիւն ՚ի կերակուրս՝ յըմպելիս՝ ՚ի հաճոյս զգայութեանց՝ հեշտութեանց և կրից, յուսմունս և յայլ գործս. ըստ որում չափազանց և անկարգ կիրառութիւն այլոց դոցուն վնասէ ոչ միայն առաքինութեան հոգւոյն, այլև առողջութեան և կենաց մարմնոյ, որում վկայեն հանապազօրեայ փորձառութիւնք և օրինակք մարդկան։

Հ. Ո՞յք են մեղք ընդդէմ պատուիրանի բարւոքելոյ զմարմինն և պահելոյ զառողջութիւն,

Պ. Այդպիսի մեղք են՝ 1. Անձնասպանութիւն, 2. Անդամատութիւն, այն է՝ կամաւոր կրճատումն արական կամ այլոյ անդամոյ, 3. Չարաչար վարումն մարմնոյ կամ անդամոց 'ի գործս մեղաց, 4. Իսպառ անխնամ թողուլ զմարմինն, 5. Որկրամոլութիւն, կամ վնասուք առողջութեան ուտել կերակուր, 6. Արբեցութիւն, որ է մեղք բիւրոլիակ արգելեալ և պատժեալ յԱ. Գ., կուրացուցիչ բանականութեան, վնասակար առողջութեան՝ հարստութեան՝ համբաւոյ՝ պատուոյ, մայր բազմաթիւ մեղաց՝ սպանութեան՝ բղջախոհութեան՝ բամբասանաց՝ կռուոյ՝ ևն, 7, Բղջախոհութիւն կամ վաւաշոտութիւն, այն է չափազանց կիրառութիւն մարմնական ցանկութեան՝ մինչև վնասել առողջութեան՝ մարմնոյ և ոգւոց, 8. Դատարկակեցութիւն, պարապորդութիւն, մեղկութիւն՝ կնատութիւն, չգործել ինչ պիտանի կամ օգտակար, որով տկարանան ջիլք և զօրութիւն մարմնոյն. և 9. Բազմազբաղութիւն, այս է՝ առաւել քան զչափն և վնասելով առողջութեան պատաղիլ 'ի հոգս և 'ի զբաղմունս կենցաղոյս, որ արգելեալ է յԱ. Գ.

## 9. Ստանալ պատիւ՝ փառս և արժանապատուութիւն.

Հ. Զի՞նչ է պատիւն և փառք.

Պ. Պատիւն է մեծ համարումն կամ մեծարանք, զոր այլք ունին 'ի միտս իւրեանց զմէնջ, և արտաքին նշանօք յարգանաց ցուցանեն մեզ:

Հ. Զի՞նչ է հիմն այսպիսի մեծարանաց.

Պ. Են գերազանցութիւնք մեր, կամ ներքինք, որ՝ առա-

քննութիւնք, մեծագործութիւնք, գիտութիւնք, իմաստութիւնք. կամ արտաքինք, այն է՝ ազնուականութիւն, և հարստութիւն իրաւամբք ժառանգեալ. Սոքա առ այս ծնանին զբարի վարկած, այն է՝ Անուն բարի. և սա երբ տարածի առ բազումս՝ կոչի Համբաւ. Իսկ եթէ միաձայն դատողութեամբ բազմութեան Ճշմարտեալ հաստատեսցի՝ անուանի Փառք. Աստիճան առաջնորդութեան ընկերաց կամ Հրապարակական պաշտօնի ինչ բարձու, որ տուեալ լինի զարդարելոց Ճշմարիտ համբաւովք և փառօք, կոչի՝ Արժանապատուութիւն. ապա Ստանալ փառս՝ է հոգալ և ջան դնել, զի գիտութեք և առաքինութեք պատճառեսցուք յընկերս զբարի համարումն զմէնջ, և զարդի եղեալն անկորուստ պահեսցուք և յաւելցուք եւս։

Հ. Քանի՞ են յատկութիւնք, որովք այս փառասիրութիւն և պատուասիրութիւն լինի առաքինական և բարի։

Պ. Են երեք այսոքիկ, այնք են, զի 1. մի խնդրեսցուք զնոսին իբր զվերջին վախճան, 2. մի գանձեսցուք զայնս անիրաւ միջոցիւք, որպիսի են կաշառ, ստութիւն, կեղծաւորութիւն, եւ այլ. այլ միայն Ճշմարիտ արժանաւորութեամբք, որք են՝ բարեգործութիւն և գիտութիւն, և 3. ուղղեսցուք զայնս 'ի բարի նպատակ, որովք և առաւել եւս բարիս գործեսցուք և օգուտ տացուք եղբարց։

Հ. Ո՞յք են մեղք այսմ պատուիրանի հակառակք։

Պ. Են, 1. Փառամոլութիւն, այն է՝ չափազանց և անիրաւ իղձ փառաց և պատուոյ, որում իբրու վերջին վախճանի զոհեն բազումք զինչս՝ զառող-

ջուն և զկեանս իսկ, որ է՝ մեղք մահուչափ արգելեալ յԱ՟յ և պատժեալ, հակառակ ուղիղ դատողութեան մտաց, իմաստակաւոր առաքինութեան, ծնօղ բազում մեղաց և անկարգութեց, և ատելի Ա՟յ և մարդկան, 2. Մեծաքանակն, մնապարծութիւն, հռչակել զսուտ գերազանցութիւն իւր առ որսալոյ զփառս, որ է մեղք կշտամբեալ և պատժեալ յԱ՟յ, 3. Յուսահատութիւն, այն է՝ գործով՝ շարժուածովք՝ զգեստուք և այլ նշանօք ցուցանել զինքն պատուելի ոմն և փառաւորելի, և 4. Անըզգոյն, երբ յանպարտ ատեան և յանպատուութիւն իջուցանէ ոք զինքն և ոչ զգայ այնուհետև փառաց կամ անփառութեան, նախատինք մարդկան էլ և արհամարհանք ժողովրդոց, ևն.

և Ջանալ հարուստ լինել և ընչաւէտ։

Հ. Զի՞նչ է ջանք հարստութեան։

Պ. Ջանք հարստութեան է փոյթ և ձիգն ժողովելոյ արդար և անմեղ միջոցիւք՝ պահելոյ և յաւելլոյ զձոխութիւն՝ զինչս և զստացուածս։

Հ. Զի՞նչ ինչ պահանջին առ անմեղ և արդար ստացութիւն հարստութեան։

Պ. Զի 'Նախ' բարի վախճանաւ հաւաքեսցուք զայնս, այ՟ս՝ առ 'ի գործել զբարիս և 'ի խնամ տանել մեզ, մերայնոց և կարօտեալ ընկերաց։ Երկրորդ՝ բարի միջոցիւք զայնս ժողովեսցուք, որպիսի են՝ 1. օրինաւոր ժառանգութիւն 'ի հայրենեաց, 2. անխարդախ տուրևառ կամ վաճառականութիւն, 3. ձեռահմուտ արուեստագործութիւն,

4. գիւտ անտէր իրաց, 5. պարգևընկալութիւն, 6. օրինաւոր ժառանգութիւն, 7. վարձընկալ ծառայութիւն, 8. առաւել քան զմ՟՝ մտաւոր կամ մարմնաւոր աշխատանք և վաստակ՝ յԱ՟Յ հրամայեալ ՚ի սուրբ գիրս բանիւք և օրինակօք, 9. հսկողութիւն՝ զի ինչք մի՛ վնասեսցին՝ յանպէտս ծախեսցին՝ գողասցին՝ այրեսցին՝ կամ կորիցեն, 10. խնայութիւն, այն է՝ խոհեմ չափաւորութիւն ծախուց կամ ելից՝ յոմն պահելով զպարկեշտութիւն, զհարկաւորսն ունելով և զաւելորդսն հատանելով, և 11. բաւականութիւն սրտի՝ յորժամ յետ անմեղ ջանից ոչ յաջողէ մեզ յԱ՟Յ հարստանալ, կամ գուցէ և զեղեալն դիպիցի առանց մերս յանցանաց կորուսանել։

Հ. Ո՞յք են անիրաւ միջոցք հարստանալոյ։

Պ. Գողութիւն, յափշտակութիւն, պէսպէս խարդախութիւնք և խաբէութիւնք ՚ի տուրևառս, մուրացողութիւն՝ երբ կարէ ոք աշխատել, չհատուցանել զպարտս, զրկել զմշակս, անիրաւ վաշխ և տոկոսիք, առնուլ կաշառս, և այլ սոյնպիսիք։

Հ. Ո՞յք են մեղք ընդդէմ այսմ պատուիրանի։

Պ. 1. Ագահութիւն կամ արծաթսիրութիւն, այն է՝ չափազանց ցանկութիւն ունելոյ զհարստութիւնս. որոյ նշանք են՝ խնայել անձին և ընտանեաց զհարկաւորսն, դժուարութիւն հատուցանել զվարձս և զպարտս, չտալ ողորմութիւն կարօտելոց, անիրաւ միջոցիւք ինչս հաւաքել, ՚ի գնելն և ՚ի վաճառելն խարդախել, ցաւիլ ընդ հարկաւոր ծախս, չասել երբեք՝ շատ, առ սէր ընչից զանց առնել զպաշտամունս Ա՟Յ և կրօնից, զյոյս իւր դնել

յինչս և 'ի ճոխութիս, ծառայել Ա.Ծ վասն վարձու, ընդ յաջողուածս այլոց նախանձիլ, չառնել ինչ գործ յօգուտ եկեղեցւոյ՝ ազգին՝ հայրենեաց՝ աղքատաց, և նմանք. և

2. Շռայլութիւն, անառակութիւն, գեղխութիւն, վայրավատնութիւն, որք են՝ չափազանց և անհարկաւոր ծախք վնասուք արդար ընչից և զրկողութիւն օրինաւոր պիտոյից, որոյ պատկերն՝ վնասն՝ պատիժն և չար հետևութիւնք նշանակին 'ի բազում տեղիս Սուրբ Գրոց.

Հ. Որք են շարժառիթք փախչելոյ յագահութենէ.

Պ. Նախ. զի 1. Ա.Ծ խստիւ արգելու մեզ զայն և պատժէ, 2. մայր և ծնող է բազում այլ մեղաց. գողութեան, խաբէութեան, մատնութեան, ստերդմնութեան, անիրաւութեան, նախանձու, մարդասպանութեան, ևն, 3. յիմարութիւն է ծառայել և ոչ տիրել արծաթոյ, հաւաքել և ոչ վայելել. 4. տանջէ և չարչարէ զսիրտն անհամար հոգովք, միշտ երկնչի, ոչ ումեք հաւատայ, ևն, 5. դառնացուցանէ զժամ մահուանն, և 6. կորուսանէ զյաւիտենական երջանկութիւն։

10. Պատրաստել զանձն առ սուրբ մահ։

Հ. Զինչ է պատրաստութիւն առ մահն։

Պ. Պատրաստութիւն առ սուրբ մահ է անդուլ կատարումն պարտաւորութեանց կրօնին, և վարումն միջոցաց՝ որք զսրբութիւն կենաց ձգեալ յօդաւորեն ընդ անցից 'ի հանդերձեալ կեանս. առ որ պահանջի, զի 1. զյիշատակ մահուան ստէպ 'ի միտ ածցուք,

2. զանստուգութիւն և զանդիտութիւն ժամու և րոպէի մահու յուշի կալցուք, 3. ստէպ քննեսցուք զանձինս՝ թէ ունիցի՞մք ուղղափառ հաւատս և զայլ առաքինութիւնս, 4. մի ինչ գործեսցուք՝ ընդ որ 'ի կիտի մահուան զղջասցուք, 5. սիրով տեսութեան Յ. Ք. և երկնային փառաց զմեզ բորբոքեսցուք, 6. զընտանիս՝ զինչս և զկտակ մեր կանուխ բարեկարգեսցուք, 7. 'ի մերձենալ ժամու մահուան հիւանդութեամբ՝ ծերութեամբ՝ կամ այլով դիպուածով, ուրախասիրտ ընդ առաջ ելցուք՝ հաւատով և յուսով զինուորեալ, և 8. գիտասցուք թէ՝ մահն արդարոց քաղցր և հեշտալի ինչ է իբրև զքուն մարդոյ, և պատուական առաջի Յ. Ք.

## 11. Լինել Խոհեմ 'ի գործս։

Հ. Զի՞նչ է խոհեմութիւն։

Պ. Խոհեմութիւն կամ խոհականութիւն քրիստոնէական՝ (որ 'ի սուրբ գիրս կոչի՝ խորհուրդ, խորագիտութիւն, իմաստութիւն, հանճար,) է ունակութիւն ուղիղ բարեկարգելոյ զառօրեայ գործս ([illegible]) առ անվրէպ լրումն հրամայեալ պաշտամանց ([illegible]). Իբր զի բովանդակ կեանք և արարք մեր յաշխարհիս՝ կարգեալ են իբր միջոցք, որոց ուղիղ վարչութեամբ պարտիմք հասանել վերջին վախճանի մերում՝ երջանկարար տեսութեան Յ. Ք. Ընդ որով հրամայեալ պաշտամունք մեր դնին իբր երկրորդական վախճանք՝ նոյնպէս երանացուցիչք. և ըստ այսմ ամենայն քրիստոնէի հարկ 'ի վերայ դնի՝

անսայթաք իմաստութեամբ այնպէս բարեկարգել զգործողութիւնս և զկիրս, զի նոքօք զոր պաշտամունս իւր (առ Ա՛ծ, առ ինքն և առ ընկերս) անվրէպ կատարեսցէ, որով և՛ զինքն և՛ զվիճակ իւր ներքուստ և արտաքուստ՝ երանելի արասցէ յայսմ և յապագայ կեանս՝ ազատեալ ՚ի ներհական թշուառութեանց։

## Գ.

### Ընկերպաշտութիւն։

Հ. Քանի՞ են պաշտամունք առ ընկերս։
Պ. Յերկուս խումբս վերածին ազգք պաշտամանց յընկերս եղերելոց, ՚ի Բացարձակս՝ որոց ամենայն մարդիկ անխտիր պարտաւորին, և ՚ի Թելադրականս կամ յառնչականս՝ որոյ պարտաւորին մարդիկ եթէ գտցին յայս ինչ կամ յայն վիճակի։

### Բացարձակ պաշտամունք։

1. Ճանաչել զընկերն և զյատկանիշ նորա։

Հ. Զի՞նչ է ճանաչումն ընկերաց։
Պ. Ճանաչել զընկերն է մանր խուզողութեամբ քննել, և իմանալ զամենայն հանգամանս և զորպիսութիւնս բարուց և բնութեան ընկերաց մերոց, փորձել՝ ընտրողութիւն առնել և ճանաչել զմարդ և զդէմս նորա, քաջ կշռել զվարս և զյատկանիշ իւրաքանչիւր ուրուք, ընտրել ընդ մարդ և ընդ մարդ, ճանաչել զանարգն և զյարգականն, որով՝ և զօ-

մանս առ պատուականս ունիլ, և զայլս կրկին պատուոյ արժանիս համարել (յայտ է՝ ՚ի սակըս պէսպիսութեան բարոյական յարգի նոցա)։

### 2. Սիրել զընկերս իբրև զանձն,

Հ. Զի՞նչ է եղբայրսիրութիւն կամ մարդասիրութիւն։

Պ. Սիրել զընկերս է՝ կամիլ անկեղծ՝ ցանկալ և հատուցանել նոցա զամ՝ բարիս՝ զհոգևորս և ըզմարմնաւորս. իսկ ընկեր անուանին՝ ամ մարդիկ առանց ուրուք բացառութեան.

Հ. Ո՞յք են շարժառիթք պատուիրանի ընկերսիրութեան.

Պ. Զի 1. սէրն եղբօր է մեծ և առաջին պատուիրանն Ա՟յ առ մեզ, 2. օրինակն մարդասիրին Ա՟յ և Յ՟ի Ք՟ի հարկեն զմեզ ՚ի նոյն, 3. եղբայրսիրութիւն է ստոյգ նշան ճշմարիտ Ք՟ի-սիրութեան, 4. գերազանց է քան զամ՝ առաքինութիւնս և զշնորհս, ևս և քան զպատարագս և զզոհս, 5. է Թէութեան էական՝ առանց որոյ անհնար է փրկել զհոգիս, 6. է ցուցակ ճշմարիտ աշակերտին Ք՟ի և կրօնի նորա, 7. ամենեքին եմք արարածք միոյ Ա՟յ, որդիք միոյ Հ՟օր, և սահմանեալք առ մի վախճան, 8. ամենեքին կամիմք սիրել յայլոց, ապա և մեք պարտիմք զամենեսեան սիրել, և 9. եղբայրսիրութիւն է կապ մարդկային ընկերակցութեան, հիմն երջանկութեան, պատճառ է ՚ի մեզ զանթիւ օգուտս, ազատէ ՚ի յոլով վնասուց, և այլն։

Հ. Ո՞յք են յատկութիւնք ճշմարիտ մարդասիրութեան։

Պ. Զի լինիցի 1. ընդհանուր և տարածեալ առ ամ

մարդիկ և յամ բարիս նոցա, 2. մաքուր՝ սուրբ՝ ողջախոհ՝ առանց շահասիրութեան, 3. անկեղծ և գործունեայ, ոչ լեզուաւ միայն, այլ և սրտիւ և գործով, և 4. հաստատուն՝ անփոփոխ և անլուծանելի, ևն։

և առնել 'ի նոցանէ զոմանս բարեկամ։

Հ. Զի՞նչ է բարեկամութիւն։

Պ. Բարեկամութիւն կամ Սիրելութիւն է այն աստիճան սիրոյ, յորում զմի կամ զոմանս յընկերաց մերոց սիրեմք առաւել քան զայլս վառեալ բոցով և փափուկ ընտանութե՝ 'ի սակս գովանի նմանակցութե. որոյ հաստատութի և պիտանութի հաւատարմանայ 1. օրինակաւ Այ, որ զոմանս 'ի մարդկանէ առաւել քան զայլս սիրեաց և անուանեաց զնոսա բարեկամս և սիրելիս, 2. օրինակաւ Յսի, որ ոչ միայն 'ի բազմութէ աշակերտացն ընտրեաց զերկոտասանս և բարեկամս զնոսա կոչեաց, այլ և յերկոտասանից անտի զմին Յովհաննէս առաւել քան զայլս սիրեաց, 3. օրինակաւ մեծամեծ սրբոցն Այ, որոց կային բարեկամք և սիրելիք, 4. վկայութե Ածաշունչ գրոց, որ հրամայէ ունիլ բարեկամս և աւանդէ զկանոնս կենակցելոյ ընդ նոսին, 5. գործակցութե բարեկամաց յաւելուն հոգևոր և մարմնաւոր երջանկութի և բարիք մեր և հայրենեաց մերոց, և 6. 'ի սուրբ գիրս ոչ ուրեք արգելեալ լինի բարեկամութի։

3. Սիրել զհայրենիս և զազգ մեր։

Հ. Զի՞նչ է հայրենասիրութիւն և ազգասիրութիւն։
Պ. Որովհետև ամ բարիք 'ի հարանց մեզ աւանդեալք՝ հայրենի կոչին, որպիսի են՝ կրօն, հաւատ, եկեղեցի, լեզու, գիտութիք, արուեստք, երկիր, մարդիկ, տուն, ազգ, ժողովուրդ, եւն, զորս առաւել քան զայլս պարտիմք սիրել, վասն որոյ Հայրենասիրութիւն և Ազգասիրութիւն է բարիս առնել նոցա և ծառայել, ջան դնել պայծառութեան, լուսաւորութեան և կատարելութեան նոցին, գործակից լինել երջանկութեան նոցա, լնուլ զթերութիւնս՝ զպակասութիւնս և զանկատարութիւնս նոցունց, և սրբել զայն ամ որ աղատաւոր կամ անպատկան իցէ 'ի նոսա։

Հ. Ո՞յք են շարժառիթք պատուիրանիս։
Պ. Նախ՝ հրամանն Ածոյն պատուելոյ զհայր և զմայր, Բ որով պարտապան եմք միօրինակ սիրել՝ յարգել և կատարելագործել ես և զհայրենիս ամ, 2. փրկիչն մեր Յս յիւրսն եկն և մեռանել կամեցաւ 'ի վերայ իւրոյ ազգին, 3. Ած 'ի սուրբ գիրս հրամայէ մեզ զայս առաքինութի՝ օրինակօք մեծամեծ սրբոց իւրոց՝ ազգասիրութե՛ք և հայրենասիրութե՛ք փայլելոց, որպիսի էին՝ Աբրահամ, Մովսէս, Դաւիթ, Եղիա, Եղիսէ, Տոբիթ, Եսթեր, Յուդիթ, եօթն եղբարք Մակաբայեցիք ընդ մօրն, Երեմիա մարգարէ, և այլ անթիւք, յորս սուրբն Պօղոս ընդ բազում պարծանաց հայրենասիրութե իւրոյ և զայն յաւելու թէ՝ յօժար է նզով լինել 'ի Քսէ վասն ազգին

եկաղեցականաց իւրոց.— Երանի թէ և մեք վառէաք դյնօրինակ ազգասիրութ՟ք՝ ցուցանելով յամի զսէր և զխնամ առ հայրենիս և առ նախնիս, 4. վարձարէ Ս.Ծ զհայրենասէրս բազմազգի օրինակաւ, և 5. Սուրբ գիրք և ուղիղ բանականութ՟ն ուսուցանեն, թէ՝ որ և իցէ անդամ բանիւ ըստեղծման իւրոյ՝ պարտապան է ծառայել և օգնել բոլոր մարմնոյն և անդամակցաց իւրոց, թէ ՚ի վշտանալ կամ ՚ի փառաւորիլ միոյ յանդամոց՝ հարկ է ամ՟ անդամոյ մասնակից լինել վշտաց կմ՟ փառաց նորին, թէ՝ ոտք ո՛չ պլուստ ունին զգոյութ՟ և զպարարտութ՟՝ բայց եթէ յարմատոյ անտի, որով և ՚ի չորանալ արմատոյն, հարկաւ ցամաքին և ոստք, թէ՝ ՚ի վնասել բոլորին՝ անտարակոյս վնասին և մասունքն, և ՚ի թշուառանալ ընդհանրոյն՝ վատթարանան և եղականք, և այլն:

Հ. Ո՞ր է մեղքն հարկադրեալ Ազգասիրութ՟ե:

Պ. Այն լոկ է Անձնախնդրութ՟ն, որ է՝ անձին իւրոյ միայն զշահն և զօգուտն խնդրել, չունիլ ինչ փոյթ լուսաւորութ՟ե և պայծառութ՟ե ազգի և եկեղեցւոյ իւրոյ, մեղք կշտամբեալ և ստգտեալ ՚ի սուրբ գրոց (334. 335.): Բայց եթէ անփոյթ լինելն դատապարտեալ է, ապա քանի՞ սոսկալի պատիժս ունին կրել յԱ.Յ այն անձինք, որք վնասեն ազգի իւրեանց՝ բանիւ, գործով և զանցաութ՟ք, զկրօն և զեկեղեցի իւրեանց բամբասելով, զլուսաւորութ՟ն ազգին խափանելով, զուսումնական մշակսն առ ոտն հարկանելով, զադէտ և զմոլի հովիւս բազմացուցանելով, և կամ այ-

լովք բիւրազգի եղանակօք տարածելով 'ի վերայ ազգին զխաւարին տգիտութեանց և մոլորութեանց։

## 4. Սիրել զթշնամիս։

Հ. Զի՞նչ է թշնամասիրութիւն։

Պ. Թշնամասիրութիւն է կամիլ և առնել թշնամեաց և ատելեաց (որպիսիք են այն մարդիկ, որք վնասեն հոգևոր կամ մարմնաւոր բարեաց և երջանկութեանց մերոց՝ կամելով առնել զմեզ թշուառս, զորս պատուիրէ Ք.Ծ սիրել իբրև զայլ ընկերս մեր) մերոց զամենայն բարիս, ոչ հատուցանել նոցա փոխարէն զչար, չառնուլ վրէժ 'ի նոցանէ, ոչ ատել՝ արհամարհել կամ չարիս մաղթել նոցա, ոչ խնդալ ընդ վնաս նոցա. միով բանիւ՝ չլինել թշնամի թշնամւոյն։

Խ. Ասա ինձ — զի՞նչ ինչ պարտաւորէն զմեզ առ այսպիսի սէր։

Պ. Նախ՝ շարժառիթք համօրական մարդասիրութեան կամ ընկերսիրութեան, 2. Ք.Ծ, որ առանձին պատուիրանաւ և օրինակօք հրամայէ սիրել զթշնամիս մեր, 3. օրինակն Ք.Ի և Յսի Կ.ուսի, 4. չհասանելն մեր թողութեան մեղաց առանց թշնամասիրութեան (336. 337.), 5. կամքն մեր առ այն, զի վնասեալքն 'ի մէնջ սիրեսցեն զմեզ, ապա և մեք սիրեսցուք զվնասարարս մեր, 6. Ք.Ծ սիրէ տակաւին զնոյն զոսոխս մեր, յորմէ և մեք եւս պարտաւորիմք սիրել զնոսա, 7. գերազանց բարիք խոստացեալք սիրողաց զթշնամիս, 8. հաճոյական և գովելի լինելն նորին ամենայն մարդոյ միան-

գամայն և պատճառ բազում օգտից, 9. լինելն ատելուն՝ մայր և ծնօղ բազում մեղաց, վրէժխնդրութե, բամբասանաց, կռուոյ, սպանութե, եւն, և 10. հանապազօրեայ բանն և խնդիր մեր յԱյ 'ի տէրունի աղօթսն ,, Թո՛ղ մեզ զպարտիս մեր որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց, եւն։

Հ. Ո՞յք են գլխաւորք 'ի մեղաց՝ եղբայրսիրութե և թշնամասիրութե հակառակելոց։

Պ. Նախ՝ Ատելութիւն, որ է խորշումն յընկերէն՝ չկարելով տանել կատարելութեանց նորա։ Նախանձ, այն է՝ տրտմիլ և ցաւիլ վասն ունելոյ եղբօրն զհոգևոր կամ զմարմնաւոր բարիս. և Թշնամութիւն, որ է բուռն ջանք վնասելոյ ընկերին, յորոց պարտիմք պահել զանձինս յամի։

Երկրորդ՝ Անհաւանութիւն կամ Խռովութիւն, այն է՝ ոչ ցաւիլ ընդ վիշտս և ընդ ձախորդութիւնս ընկերին, որ է մեղք հակառակ բնութե և եղբայրսիրութե՝ արգելեալ և պատժեալ յԱյ (338. 339.)։

Երրորդ՝ Վրէժխնդրութիւն, չար և վնաս հատուցանել այնմ՝ որ մեզն վնասեաց. մեղք մեծ արգելեալ յԱյ (340. 341. 342.)։ և

Չորրորդ՝ Աթնհարութիւն կամ Չարախնդութիւն, որ է զուարճանալ ընդ ձախորդութիւնս և ընդ վիշտս ընկերաց. դիւական մեղք՝ հակառակ մարդասիրութե՝ բանականութե և Ածայինն գրոց։

5. Ուսուցանել տգիտաց զճշմարտութի։

Հ. Զի՞նչ է դաստիարակութիւն։

Պ. Դաստիարակել կամ ուսուցանել է պաշտօն՝ որում

պարտաւորին՝ բաց յեկեղեցականաց եւս եւ անխտիր ամ՟ մարդիկ, աշխարհականք եւ ժողովրդականք, հարուստք եւ աղքատք, արք եւ կանայք, եւ ամ՟ վիճակ մարդոյ առանց բացառութե՟, որպէս զի զգիտութիւն՝ զիմաստութիւն եւ զճշմարտութիւն զԱ՟յ եւ զկրօնէ՝ զորս ընկալեալ ունին, աննախանձ սըրտիւ հաղորդեսցեն ամ՟ ընկերաց իւրեանց կարօտելոյ եւ տգիտաց (343. 344. 345.)։

Հ. Ո՞ ոք ՚ի մարդկանէ կարէ եւ պարտաւորէ այս պատուիրան։

Պ. Պատուիրանս այս թէպէտ միօրինակ պարտաւորէ զամ՟ աշխարհական անձինս, բայց առաւելապէս զծնօղս, որք են՝ հայր եւ մայր, զտանուտեարս, զորբախնամս, եւ զամ՟ զնոսա՝ որք ը՟ ձեռամբ ունին զանկիրթս, զորս թէ չեն բաւական ինքնին ուսուցանել՝ պարտին ձեռամբ քահանայից կմ՟ վարժապետաց եւ ուսուցչաց վարժել ՚ի կարեւոր ուսմունս (346. 347. 348.)։

Հ. Որպիսի՞ մեղք ներհակին այսմ օրինաց։

Պ. Ներհակին սմին զանազան մեղք. 1. Անփութութիւն, Անհոգութիւն, որ չտանի փոյթ ընտանեաց եւ ընկերաց յուսմունս Ճշմարտութե՟, 2. Բռնաւորութիւն, ոչ յարգել զտաղանդ շնորհայն Ա՟յ, չարկանել զարծաթ բանին ՚ի սեղանաւորս՝ յոգիս մարդկան, թագուցանել չար նախանձու զփականս գիտութե՟, փակել զԱրքայութիւն Ա՟յ առաջի մտաց մարդկան, որ է մեղք վայելեալ եւ անիծեալ յԱ՟յ, եւ 3. [illegible], մոլորեցուցանել զընկերն, հրապուրել՝ խաբել՝ զվարդապետութիւն սխալ եւ թիւր ուսուցանել եղբարց, որ է

զարհուրելի մեղք ընդդէմ Հոգւոյն Սրբոյ, զորոյ զծանրութիւն և զպատիժն՝ որ ունի այս տեսանելոյ՝ տեսցէ յԱ՛ծեղէն տառս (349. 350. 351. 352.)։

### 6. Ուղղել կամ յանդիմանել զմեղաւորն եղբայրօրէն։

Հ. Զի՞նչ է յանդիմանութիւն մեղաւորի։

Պ. Յանդիմանել զմեղաւորն է խրատել՝ ազդել և ըզգուշացուցանել զմեղաւոր եղբայրն, զի ուղղեսցէ զվարս իւր, թողցէ զմեղս և յանձին կալցէ զառաքինի կեանս։ Այս իսկ է գերազանց նշան եղբայրսիրութեան կամ ընկերսիրութեան, որով փրկի մեղաւորն յահաւոր թշուառութենէ մեղաց և դժոխոց։

Խ. Ասա ինձ զեղանակս և զյատկութիւնս յանդիմանելոյ զմեղաւորն։

Պ. Այդոքիկ են՝ զի 1. խրատողն ազատ լիցի յայնմ մեղաց և հոգևոր. ապա թէ ոչ՝ լսել ունի „Բժիշկ՝ բժշկեա զանձն քո. հա՛ն նախ զգերանդ յականէ քումմէ, 2. կայցէ յոյս ուղղութեան և դարձի մեղաւորին, որ թէ ոչ գուցէ՝ հարկ է լռել և աղօթել վասն նորա, 3. արասցի հեզութեամբ և սիրով, 4. մեղքն իցէ Ճշմարիտ՝ ծանր և վնասաբեր, և 5. արասցի բազում հեզութեամբ՝ նկատմամբ տեղւոյ՝ ժամանակի՝ եղանակի՝ անձանց՝ հասակաց՝ պաշտաման, ևն։

Հ. Ո՞յք խստիւ պարտապան են այսմ հրամանի։

Պ. Առաւել քան զայլ ո և իցէ մարդիկ՝ Հովիւք,

եպիսկոպոսք, առաջնորդք, խոստովանահարք, քարոզիչք, ծնողք զաւակաց, որբախնամք, բարեկամք, և ամենեքին՝ որ ընդ ձեռամբ ունին ըզհպատակս:

7. Տալ ընկերաց և եղբարց զօրինակ բարի:

Հ. Զի՞նչ է օրինակն:
Պ. Բարի օրինակ կոչին այն գործք՝ որ համաձայն են Ա՛ծային օրինաց և զընկերս շարժեն առ 'ի նըմանիլ կամ յանձին բերել զայնս. և 'ի տալ եղբարց զայնպիսի օրինակ պարտաւորիմք մեք 'ի բազմապիսի պատուիրանաց Ա՛յ 'ի Սուրբ գիրս:
Խ. Ցո՛յց ինձ աստանօր զերիս զլխաւորեալս բարի օրինակի:
Պ. 1. Գայթակղութիւն, որ է՝ մեղանչական գործով կամ զանցառութեամբ բարեգործութեան տալ այլոց չար օրինակ և գրգիռ մեղանչելոյ, 2. Փառասիրութիւն, կամ առնել զառաքինի գործս՝ միայն առ ցուցանելոյ զինքն և յորսալ փառս 'ի մարդկանէ՝ առանց դիտելոյ զհոգևոր շինութիւն նոցա, և 3. Մարդահաճութիւն, որ է ի ձևն լոկ արտաքնայարդար բարի գործոյ՝ հաճել զմարդիկ 'ի նպաստ իւր, շնորհակս առնել, և բարի մարդ ձևանալ արտաքուստ միայն՝ առանց ներքնոյն՝ յորսալ զշնորհս մարդկան:

8. Հոգ տանել կենաց և առողջութեան ընկերաց:

Հ. Յի՞նչ հայի հոգալն զկեանս այլոց:
Պ. Հոգածութիւն կենաց եղբարց պահանջէ, զի մի սպանա-

ցուք կամ զրկեսցուք զնոսա 'ի կենաց և յառողջութե, զի յորոգայթից մահու կամ հիւանդութե զնոսա ազատեսցուք, մի ցանկասցուք մահուան նոցա, և մի վնասեսցուք առողջութե նոցա անդամատութբ՝ տանջանօք՝ դեղելով՝ գանելով, եւն. այլ զամ փոյթ յանձին կալցուք և գործովք նըպաստեսցուք բարեկենդանութե և քաջողջութե նոցա յամի։

Հ. Որ՞ են հակառակին այսմ պատուիրանի։

Պ. Հակառակ պատուիրանիս մեղանչեն. 1. անիրաւ Մարդասպանութին, որոյ ծանրութի չարութեն յայտնի է ամենեցուն, 2. Անդամատութին, Խեղութին և Վիրաւորութին մարմնոյ ընկերաց, 3. Վիժումն ոգևորեալ զաւակի յարգանդէ յղի մօրն, 4. Կուսապղծութին, որ բռնի զկուսութի օտարորդին բառնայ, 5. Բժիշկք՝ որք չարութբ կամ տգիտութբ վնասեն առողջութե, և 6. Նոքա, որ 'ի ժամանակս սովու՝ աւեկածութե՝ հրկիզութե և յայլ վտանգս կենաց մարդկան՝ կարող գոլով՝ ոչ տանին հոգ փրկութե և առողջութե նոցա։

9. Խնամ ունել պատուոյ և համբաւոյ ընկերաց,

Հ. Զիա՞րդ լինի խնամել զպատիւ եղբարց։

Պ. Որ խնամել զպատիւ և զհամբաւ եղբարց պահանջի, զի հաստատեսցուք իւրաքանչիւր ումեք զիւր արժանաւոր պատիւն՝ բանիւ՝ գործով և նշանակօք, զգերազանցութիւնս և զբարութիւնս նոցա ծանիցուք և քարոզեսցուք, համբաւոյ և փառաց նոցա մեք մի վնասեսցուք, և եթէ այլք վնասեն՝

ջատագովեսցուք կամ պաշտպանեսցուք, մի՛ ումեք մեղս կամ մոլութիւնս ստութեամբ ընծայեսցուք, բանից քսութեամբ զընկերս քամբասողաց՝ մի՛ դիւրաւ հաւատասցուք, զպակասութիւնս և զթերութիւնս եղբարց մի՛ հրապարակեսցուք, այլ մանաւանդ՝ ըստ կարի ծածկեսցուք և անմեղադիր արասցուք։

Հ. Որպիսի՞ են այսմ պատուիրանի դիմադրին։

Պ. Բազում են մեղք ընդդէմ այդմ օրինաց զինուորեալք, Նախ՝ Չարակարծութիւն կամ չարախոհութիւն, այն է՝ զկարծիս չարեաց ունիլ զընկերէն՝ կամ առանց ամենայն հիման՝ կամ անբաւական և թեթև պատճառանօք, կասկածել և երկբայել ՚ի միտս ընդ բարութիւն այլոց։

Երկրորդ՝ Չարադատութիւն, յանդուգն դատել, Դատապարտութիւն, յանդգնութեամբ առանց բաւական փաստից վճռել՝ հաստատել ՚ի միտս և համարել զընկերն լինել չար և մեղաւոր. մոլութիւն յաճախեալ ամենայն ուրեք և գրեթէ առ ամենայն մարդիկ և գործեալ ազգի ազգի օրինակաւ, որպիսի են՝ 1. առանց նախընթաց քննութեան՝ դահավէժ շտապաւ՝ սուտ կարծեօք՝ չար կասկածանօք՝ ըստ տեսութեան աչաց՝ և մոլորընթաց համբաւոյ հաւատալով, 2. ատելութեամբ և չար սրտիւ առ ընկերն, որով և զմեղսն նորա՝ ուղղ, կամ զբարի գործն՝ չար դատիմք, 3. հպարտութեամբ՝ աչառութեամբ՝ կաշառանօք՝ և այլովք չար կրիւք պաշարեալ, 4. զխոր գերանն թողեալ՝ զայլոց շիւղն տեսանելով, կամ զընկերն ինքեան համեմատեալ՝ զինքն սուրբ և զնա մեղաւոր համարելով, 5. յայն ինչ դատելով զեղբայրն՝ յոր ինքն եւս մեղանչէ, գուցէ և ծանրագոյն քան զնա։

Հ. Ո՞յք են կանոնք չմոլորելոյ 'ի դատողութեան ըն-
կերաց, կամ պահելոյ զանձն 'ի չարադատութենէ։

Պ. Յետագայքս, 1. Մի՛ դատել վերոյիշեալ եղա-
նակօքդ, 2. Զգոյշ լինել մի՛ սկսանիլ դատել
պաշարեալ գոլով անկարգ անձնասիրութ՟բ՝ նա-
խանձու՝ ատելութ՟բ և դիւրահաւանութ՟բ, 3. Մի՛
շտապիլ 'ի դատելն, յապաղկոտ լինել և յուշիկ
գնալ, 4. Ըստ միոյ կամ սակաւ և թեթև գոր-
ծողութ՟ց՝ մի՛ վճռել զբոլոր բարոյական վիճակ
եղբօրն, 5. Մի՛ ձեռներէց լինել դատել զներ-
քինն կամ զգաղտնիս սրտի ուրուք, որ Ա՟յ մի-
այնոյ է անկ, 6. Վճռել և ոչինչ ըստ լրոյ՝ համ-
բաւոյ՝ պատմութ՟ե՝ արտաքին կերպարանաց կամ
տեսութ՟ե, այլ խնդրել փաստս և ապացուցութ՟իս,
առանց որոց ա՟մ դատաստան սխալ է, 7. Ի
պակասիլ փաստից անվճիռ թողուլ զդատն, 8. Ոչ է
կայցեն փաստք՝ վճռել, բայց և թաղել 'ի սրտի.
մի՛ ումեք յայտնել զվճիռն՝ բայց եթէ օգուտ մե-
ղուցելոյն կամ այլոց յայտնել ստիպեսցէ։ 9. Եթէ
այլք չարաչար դատեն զոք՝ արդարացուցանել
զնա, և անբասիր առնել՝ թէ ոչ զգործն՝ գէթ
զդիտումն գործողին, և 10. Որպէս կամիմք մեք
դատիլ յընկերաց մերոց, այնպէս և մեք դա-
տեսցուք զնոսա։

Խ. Ասա ինձ, և զմնացեալսն 'ի մեղաց ընդդէմ պա-
տուիրանի խնամելոյ զպատիւ եղբարց։

Պ. Երրորդ՝ Բամբասանք, Չարախօսութ՟ի, Ստա-
համբաւութ՟ի, ծանր մահացու մեղք՝ ազգի ազգի
կերպարանօք գործեալ, որպիսի են՝ 1. Հրապա-
րակաւ, սուտ յանցանս 'ի զուր ընծայելով՝ ցուցա-

նել զանմեղն պարտաւոր մեղաց, 2. Դիպաբանութիւն, զճշմարիտ թեթեւ յանցանս ուրուք ծանրացուցանել՝ առնելով զշիւղն՝ գերան, 3. Նշաւակութիւն գաղտնի մեղաց՝ հրապարակելով զծածուկ յանցանս ընկերին, 4. Թարգմանել ՚ի չար միտս զբարի կամ զանտարբեր գործս եղբօրն, 5. Նախանձու ուրանալ՝ նուազել կամ ծածկել զբարի գործն ընկերին, 6. Քրթմնջութիւն, Քսութիւն, որ է ծածուկ շշնջմամբ խածատել զընկերն, և 7. Սուտ ամբաստանութիւն, այն է՝ զրպարտութեամբ պարտաւորել յատենի օրինաւոր դատաւորի զանմեղ եղբայրն։

Զորրորդ՝ Տրտունջ, գանգատանք, բամբասել զընկերն իբրև թէ վնասեալ իցէ մեզ կամ անիրաւեալ առ մեզ։

Հինգերորդ՝ Թշնամանք, այն է՝ յանիրաւի նախատել և չարախօսել ընկերին յերեսս նորա (որով տարբերի ՚ի բամբասանաց՝ որ գաղտ յընկերէն վնասէ). մեղք՝ որոյ պատկեր և պատիժ նկարին ՚ի բանսն սուրբ գրոյ (353. 354. 355. 356.)։

Վեցերորդ՝ Կատականք, Այպանութիւն, Հեգնութիւն, Երգիծանք, Անգոսնումն, որ է ծաղրածութեամբ և կծողական խօսիւք գովել կամ պարսաւել զընկերն առ ամօթալից առնել զնա, և վնասել համբաւոյ կամ պատուոյ նորա։ և

Եօթներորդ՝ Սուտ Վկայութիւն, կամ հաստատել զսուտ ինչ յանցանս իբրև ճշմարիտ ՚ի վերայ ընկերին, թէ յատենի դատաւորաց, և թէ՝ արտաքոյ ՚ի կենակցութեան. սաստիկ մեղք ընդդէմ Ածսիրութեան և եղբայրսիրութեան, բազմօք արգելեալ և պատժեալ յԱ.Գ։

### 10 Փո՛յթ ունիլ հարստութեան եղբարց։

Հ. Ո՞րն է փոյթ մեր զհարստութենէ այլոց։

Պ. Փոյթ ունիլ հարստութեան ընկերաց է՝ մի՛ վնասել ընչից նոցա, մի՛ ցանկալ, մի՛ գրաւել զայնս բռնութեամբ՝ գողութ̃բ՝ խաբէութ̃բ կամ այլովք ինչ միջոցիւք, այլ մանաւանդ խորհրդով և գործով նպաստել նոցա ՚ի դիզել և ՚ի պահել զճոխութիւնս, թէ ինչ առեալ ունիցիմք ՚ի նոցանէ ՚ի փոխ կամ ՚ի գրաւ՝ անխարդախ հատուսցուք, և թէ նոքա կարօտին փոխոյ կամ ընչից մերոց՝ մի՛ զլասցուք (357. 358. 359.)։

Հ. Որպիսի՞ մոլութ̃ի մեղանչէ ընդդէմ այսմ պատուիրանի։

Պ. Ընչասիրութիւն կամ Ընչաքաղցութիւն, որոյ ազգք են՝ 1. Գողութ̃ի, այն է՝ զինչս ընկերին ինքեան գրեալ կամ սեփականել առանց գիտութ̃ե և հաւանութ̃ե տեառն, 2. Ասպատակութիւն, Աւազակութ̃ի, Հինահարութ̃ի, որ է՝ բռնութեամբ և հրապարակաւ յափշտակել զինչս այլոց, 3. Տաճարակապտութ̃ի, այս է՝ գողութիւն ՚ի սուրբ տեղեաց, 4. Կապալը կաշառ, և Սենավաճառութ̃ի, որ միայնակ գնէ և վաճառէ անիրաւ գնով, 5. Խարդախութ̃ի և խաբէութ̃ի ՚ի տուրևառս, ՚ի չափս, ՚ի կշիռս, եւն, 6. Դաւաճանութ̃ի, նենգութ̃բ ՚ի հաւանութիւն ածել զընկերն՝ զի զինչս իւր մեզ սեփականեսցէ, 7. Որկողութ̃ի, ո՛չ հատուցանել զպարտս՝ զվարձս՝ զփոխառեալս, եւն, 8. Կորստագիւտ, որ ՚ի գտանելն զկորուսեալն՝ ճանաչելով զտէր ի-

ըլն՝ ժխտէ հատուցանել, 9. Գաղտավձար, ծածուկ ինքեան սեփհականել զինչս օտարին իբր զվձար իրաւանց կամ ծառայութեանց իւրոց, 10. անիրաւ Մուրացուն, երբ կարող գոլով ոք աշխատանօք վաստակել՝ ծուլական կամ սուտ աղքատութեամբ ինչս հաւաքէ, և 11. Աշխատութիւն, որ արտաքոյ քան զընկալեալ սովորութիւն ծանրութեամբ տոկոսեաց խեղդէ զփոխառուն։

## 11 Ըռնել կենակցութի ընդ ընկերս

Հ. Ո՞րինչ է կենակցութին ընդ եղբարս։

Պ. Կենակցութիւն կամ հենդաղակցութիւն ընդ ընկերս է կցորդել զկեանս մեր ընդ կենաց նոցին, ընկերանալ կամ ընտանենալ մարդոյ ընդ մարդ, քաղցրութ՝ ախորժանօք՝ և մարդավայել բարոյիւք վարիլ ընդ ամենեսին, խառնել քաղցր խօսակցութիւ, տալ և առնուլ զխորհուրդս իրերաց, չլինել մարդատեաց առանձնակեաց, ևն.

Հ. Ո՞րինչ ինչ պարտաւորեն զմեզ առ այդպիսի կենակցութի։

Պ. Նախ՝ նոյն ինքն ստեղծուածն և Ա՛ծ ատուր խորթանն բնութե մերոյ, ըստ որում տեսանեմք՝ զի երեխայ լքեալ միայնակ՝ չէ, և մանուկ ընդ մանուկ յօժարասիրտ խաղայ, 2. օրինակ կենաց և վարուց Փրկչին Յսի, և պատուիրանք Ա․Ծ՛ի սուրբ գիրս (360. 361. 362. 363. 364.), 3. առանց կենակցութե ոչ ապրին ընկերութ և երջանկութ մարդկայնոյ, և մարդոյ ոչ ապրին առանց մարդոյ, և 4. պահանջեն եղբայրսիրութ

և անձնասիրութե մերոյ կրիցն, և օգուտն 'ի ճա-նաչել զընկերս և 'ի ծառայել նոցա, եւն։

Խ. Ասա ինձ զգլխաւոր առաքինութիւնս, զոր պարտի կից իւր ունել Ա՟ծահաճոյ և մարդավայել կե-նակցութեան։

Պ. Այսպիսիք են՝ Ճշմարտախօսութի՟, Անկեղծութի՟, Խաղաղասիրութի՟, Հեզութի՟, Պարկեշտութի՟, Մարդա-վարութի՟, և Պաշտօնատարութի՟ կմ Սպասահարկութի՟։

Հ. Զի՞նչ է ճշմարտախօսութի՟ն. և ո՞ր մեղք հա-կառակի սմին։

Պ. 1.) Ճշմարտախօսութի՟ն է համաձայնել զխօսս իւր մտաց իւրոց, և միշտ այնպէս խօսել՝ պատմել՝ հարցանել և պատասխանել, որպէս խորհիմք և դատեմք 'ի միտս մեր. — որում հակառակի Ստախօսութի՟ն կամ Խաբէբայութի՟ն, Զրպարտութի՟ն, որ է խօսել այնպէս, զի վնասեսցին կամ վնասիլ կա-րասցեն այլք. այլ ինչ ունելով 'ի մտի՝ այլ ինչ խօսիլ լեզուաւ՝ դիտմամբ խաբելոյ և վնասելոյ ընկերաց, որ է ծանր մեղք՝ անարժան քրիստո-նէի, արգելեալ և պատժեալ յԱ՟յ (365. 366. 367.)։ և Կեղծաւորութի՟ն, այն է՝ խօսել զայնպիսի սուտ՝ որ ո՛չ վնասէ այլոց, (որ երբեմն արժան համարի և հարկաւոր), և ծածկել զճշմարտութի՟ն՝ այլ ընդ-այլոյ և անվնաս սուտ բանիւք։

Հ. Զի՞նչ է անկեղծութի՟ն, և ո՞ր մեղք հակառա-կի նմին։

Պ. 2.) Անկեղծութի՟ն է նոյնութի՟ արտաքին կրօնի ընդ-ներքնոյն, զարտաքին բարս՝ զկեանս և զգործս համաձայնել ներքին զգացմանց, որպիսի է ոք

՚ի ներքուստ՝ այնպիսի ցուցանել զինքն արտաքուստ. — որում հակառակ մոլութիւնք կոչին՝

Կեղծաւորութիւն կամ սուտ եղբայրութիւն, այն է՝ մոլի և մեղաւոր լինել ՚ի ներքուստ՝ և արտաքուստ ցուցանել զինքն առաքինի և օրինապահ՝ միայն առ ՚ի նենգել և խաբել զընկերս յօգուտ իւր, որ է մեղք անիծեալ յԱ՟յ. — և

Շողոքորթութիւն կամ ողոքաքանութիւն, որ է սուտ գովութիւնք պատիւ և մեծարանս տալ ումեք առ՚ի խաբել զնա և ՚ի շահիլ ինչ ՚ի նմանէ. մեղք ընդդէմ Ճշմարտութեան՝ բանականութեան և Սուրբ գրոց։

Հ. Զ՞ինչ է խաղաղասիրութիւն, և ո՞ր մոլութիւն հակառակի դմին.

Պ. 3.) Խաղաղասիրութիւն է ջանք՝ ՚ի տան և արտաքոյ ընդ ամ մարդկան խաղաղութիւն և միաբանութիւն ունելոյ՝ փախչելով ՚ի խռովութեանց և ՚ի կռուոյ. երկնային առաքինութիւն երանեալ և պսակեալ յԱ՟յ աստ և ՚ի հանդերձեալն. — որում ներհակին՝

Խռովութիւն, Հակառակութիւն, Կռուասիրութիւն, Ընդդիմաբանութիւն, և նմանք, որոց սովորական պատճառք են՝ կամ ոգւոց փառասիրութեան և հպարտութեան՝ ԵՍ, ԴՈՒ. և կամ գնով ագահութեան՝ ԻՄ, ՔՈ։

Հ. Զ՞ինչ է հեզութիւն, և որպիսի՞ մեղք դիմադրի նմին։

Պ. 4.) Հեզութիւն է հանդարտաբարոյ և խաղաղասէր ոգի ՚ի կենակցութեան, որ ոչ դիւրաւ վառի որ և իցէ հրով թշնամութեան ՚ի վրէժխնդրութիւն, այլ պատրաստ է ներել ամ չարարարաց և

հաշտիլ ընդ նոսա. առաքինութի 'ի Քրիստոսէ հրամայեալ և վարձատրեալ ծայրագոյն բարութեամբք յերկինս. — որում յայտնի հակառակի թշնամի սորին՝

Ոխակալութիւն, ախտ գազանական, որով չարութի դնի առաւելապէս յայն, եթէ ոք կատաղանօք՝ վասն թեթև իրաց՝ յերկար ժամանակս՝ և առանց ջանից ուղղութե սովորեալ է կամ սովորեցի 'ի բարկանալ, զոր զպէսպէս վնասն՝ զպատիժն և զգարշութիւն պատմեն Ա.ծային պատգամք. Նախ-կուն յոլովակի հետևելն՝ Կայէնք, Եսաւք, Աբեսաղոմք, Համանայք, Յեզաբէլք, ևն, որոց զինչութի նոյն և զարշութի ծանօթ է ամենեցուն:

Հ. Զ՞ինչ է պարկեշտութիւն:

Պ. 5.) Պարկեշտութիւն կամ Համեստութիւն է ուղիղ եղանակ յարաբերութեան կենաց և գործոց մերոց առ այլս, ոչ ձգտիլ առաւել քան զիւր չափն և զաստիճանն, ոչ քարոզել անպատկառութբ զիւր գերազանցութիւն, ոչ զհետ լինել փառաց և պատուոյ արտաքոյ իւրոց արժանեացն, ոչ վարիլ ընդ ընկերս արհամարհանօք, ճանաչել և յարգել զայլոց կատարելութիւն, ևն (. — յորոց իմացեալ լինի և մոլութիւն Անպարկեշտութե).

Հ. Զ՞ինչ է մարդասիրութիւն:

Պ. 6.) Մարդասիրութիւն կամ մարդաշահութի լինի, ուր առանց մեղաց հնար իցէ՝ յարել յարմարել զինքըն՝ անմեղ հաճոյից ընկերաց, շահիլ զամ մարդ. ընդ ամենայնի՝ ամ լինել. գեղեցիկ առաքինութի պատկերագրեալ և հրամայեալ մեզ 'ի սուրբ գիրս (368. 369. 370.).

Հ. Ո՞ր ինչ է պաշտօնատարութիւն։

Պ. 7.) Պաշտօնատարութիւն, Սպասաւորութիւն կամ բարերարութիւն՝ է բարի առնել ամենեցուն գործով, մատուցանել զիւր ծառայութիւն և զպաշտօն՝ ամենեցուն որ խնդրեն կամ կարօտին, յայտ է՝ յանմեղ և ՚ի մաքուր դիպուածս, սուրբ սիրովն Այ և ընկերին՝ յօժարափոյթ կամօք և առանց անձնական օգտասիրութեան, ևն։

Թէական պաշտամունք։

Խ. ՚Ի պատճառս յայտնի գոլոյ պաշտամանց կամ պարտաւորութեանց ա.) Եկեղեցական հովուաց, բ.) Եպիսկոպոսաց, գ.) Քարոզչաց, դ.) Խոստովանահարց կամ Քահանայից, ե.) Կրօնաւորաց, և զ.) Ժողովրդականաց, ըստ մասին ՚ի գրոց ասելի, և առաւելագոյն մասամբ՝ յԸնդհանրական գրոց սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ, խնդրեմ ճառել ինձ զկարևորս ՚ի պարտաւորութեանց այլոց անձանց ՚ի զանազան վիճակի եղելոց․ վասն որոյ և հարցանեմ —

Հ. Ո՞յք են պարտաւորութիւնք վարժապետաց կամ ուսուցչաց։

Պ. է.) Վարժապետք պարտին, 1. լինել ժառանգել զգիտութիւն զոր ուսուցանելն կամին, 2. աննախանձ սրտիւ հաղորդել զուսումն, և չլինել քանքարաթագոյց, 3. միտ դնել յառաջադիմութեան և կատարելութեան աշակերտաց սիրով ազգասիրութեան, 4. ընդ գիտութեանց՝ և զբարութիւն վարուց կամ բարոյագիտութիւն տպաւորել ՚ի սրտի նոցա, 5. զան-

կատարումն ուսանողաց ուղղել, և 6. գործով տալ մանկանց զբարի օրինակ աշխատասիրութեան՝ ուսումնասիրութեան՝ ազգասիրութեան, եւն։

Հ. Ո՛յք են պարտաւորութիւնք աշակերտաց.

Պ. Ը.) Աշակերտք պարտական են, 1. յարգել և պատուել զուսուցիչս իւրեանց, 2. բաց ՚ի մեղաց՝ յամենայնի հնազանդիլ նոցա, 3. թէ բանիւ և թէ գործով երախտագէտ և շնորհակալ լինել առանց իրիք ապերախտութեան, 4. ուսումնասէր ջանադրութեամբ (առանց իրիք ծուլութեան) և բարի կամ գովանի վարուք զինքեանս սիրելի առնել, և 5. վճարել նոցա զթոշակ և զպարուստ կենաց։

Հ. Ո՞յք են պարտաւորութիւնք Հայ իշխանաց.

Պ. Թ.) Հայազգի Իշխանք կամ մեծաւորք մեր պարտաւորին, 1. սիրել զազգ իւրեանց, խնամել և դարմանել զնոսա յամենայնի, 2. ջան դնել լուսաւորութ ազգին, զդպրոցս և զուսուցիչս բազմացուցանել և բարեկարգել ըստ կարի, 3. զքաջ ուսումն և զազգասէր Եպիսկոպոսս յառաջնորդութիւն ժողովրդեան կարգել, 4. միաձայնութեամբ արժանաւոր եպիսկոպոսաց՝ զեկեղեցին և զպաշտօնս պայծառացուցանել, 5. արդարութեամբ և իրաւադատութեամբ իշխել և հովուել ժողովրդեան, 6. զուղիղ օրէնս և զկարգս սահմանել, և 7. առաջինի գործովք տալ ամենեցուն զօրինակ բարի։

Հ. Ո՞յք են պարտաւորութիւնք իշխեցելոց.

Պ. Ժ.) Իշխեցեալք կամ ժողովրդականք մեր պարտին, 1. սիրել, պատուել և հնազանդիլ իշխանաց, 2. զարդար օրէնս և զբարեկարգութիւնս նոցա կատարել, 3. գործակից լինել նոցա վասն

լուսաւորութե ազգին, 4. տալ նոցա խորհուրդ բարի և մատակարարել զամ հարկաւոր միջոցս ՚ի լրումն ջանից նոցա վասն ազգին, 5. սիրել զմիմեանս իբրև զանդամակից եղբարս, 6. ոչ բամբասել և ոչ վնասել իրօք ինչ իշխանաց կամ միմեանց, և 7. զկրօն՝ զհաւատ և զեկեղեցի իւրեանց սիրել և յարգել։

Հ. Ո՞յք են պարտաւորութիւնք արանց՝ օրինաւոր պըսակաւ ամուսնացելոց։

Պ. ժա.) Արք ամուսնացեալք պարտական են, 1. զկանայս իւրեանց իբրև զիւրեանց մարմինս սիրել, 2. զամուսնական պարտըս հատուցանել, 3. պահել զհաւատարմութիւն և զողջախոհութիւն, փախչել ՚ի շնութե և ՚ի պոռնկութե, 4. ոչ երբէք արձակել կամ բաժանել զկանայս, 5. հոգալ զհարկաւոր պիտոյս և զապրուստ նոցին, և 6. ուղղել և բարեկարգել զբոլոր տունն և զընտանիս, եւն։

Հ. Ո՞յք են պարտաւորութիւնք կանանց։

Պ. ժբ.) Կանայք ամուսնեալք պարտաւոր են, 1. արանց իւրեանց իբրև գլխոց յօրինաւոր իբս հնազանդիլ, 2. սիրել, և յարգել զնոսա, 3. ոչ երբէք բաժանիլ յարանց, 4. հեռի կալ ՚ի շնութե՝ ՚ի պոռնկութե և յամ գարշութե ընդ օտարաց, 5. պարկեշտութբ՝ հեզութբ և ամ առաքինութբ զինքեանս սիրելի առնել արանց, և 6. զտունն և զընտանիս բարեկարգել և կառավարել, եւն։

Հ. Ո՞յք են պարտաւորութիւնք ծնողաց։

Պ. ժգ.) Հայր և Մայր՝ զի պարտական են խնամ տանել հոգևոր՝ մարմնաւոր՝ և կենցաղական երջանկութե զաւակաց իւրեանց, վմն պարտին,

1. փութով մկրտել զնորածին երախայս, 2. յաճել հասակին՝ կամ անձամբ կամ ընդ ձեռն վարժապետաց՝ ուսուցանել նոցա ուղղափառ հաւատս և զԱ՛ծահաճոյ առաքինութիւնս սուրբ վարուց, 3. վարժել զնոսա յուսմունս զանազան գիտութեանց՝ արուեստից և լեզուաց, 4. զնորաբոյս մոլութիւնս նոցա ուղղել փութով, 5. բարի օրինակաւ առաջնորդել նոցա յառաքինութիւնս, 6. հոգալ զապրուստ նոցա և զայլ պիտոյս մարմնոյ, և 7. նախատես տնօրէնութբ կարգադրել զապագայ երջանկութիւն նոցա ըս և ըստ աշխարհի կենաց, թողուլ նոցա զարդար ժառանգութիւն հարստութե, զբարեկամս, և զայլ կարևորս։

Հ. Ո՞յք են պարտաւորութիւնք զաւակաց։

Պ. ԺԴ.) Օ———ք Ա՛ծադիր հրամանաւ պարտական են, 1. պատուել զհայր և զմայր իւրեանց՝ մեծարելով զնոսա յամի, 2. սիրել՝ երկնչիլ և հնազանդիլ նոցա յամ կեանս, 3. երախտագէտ և շնորհակալ լինել նոցա հեռի յամ ապերախտութե՝ 'ի սակս անպայման բարերարութեց նոցա առ մեզ, 4. չառնել ինչ գործ առանց խրատու և խորհրդոյ ծնողաց, 5. եթէ կարօտ գտցին ծնօղք՝ լնուլ զամ պիտոյս կենաց նոցա, և 6. յետ մահու նոցին՝ աղօթել և տալ զողորմութի վասն հոգւոց նոցա։

Հ. Ո՞յք են պարտաւորութիւնք ծառայատեարց։

Պ. ԺԵ.) Տէրք պարտին, 1. սիրել զծառայս ամի, 2. ուսուցանել և ուղղել զնոսա 'ի հոգևորս, 3. տալ նոցա զօրինակ բարի, 4. 'ի հիւանդութե և 'ի ծերութե ոչ զլանալ նոցա զկարևորսն,

5. անթերի վճարել նոցա զդաշնադրեալ վարձս և զկերակուր, և 6. ոչ պատժել զնոսա անգթութեամբ ՚ի թեթև պակասութիւնս, այլ մանաւանդ վարել ընդ նոսա քաղցրութեամբ և հեզութեամբ։

Հ. Ո՞յք են պարտաւորութիւնք ծառայից։

Պ. ԺԶ.) Ծառայք և սպասաւորք պարտին, 1. արդարութեամբ և անթերի կատարել զպաշտօնն յանձնառեալ, 2. ոչ անձանց՝ այլ տեարցն օգտի և շահու ծառայել, 3. պայմանեալ վարձու և թոշակաւ շատանալ, 4. ոչ գողանալ կամ խորել զինչս տերանց, 5. բաց ՚ի մեղաց՝ յամենայնի հնազանդ լինել, 6. սիրել և պատուել զնոսա յամենայնի, և 7. զգաղտնիս կամ զծածուկս տերանց և ընտանեաց՝ ոչ հրապարակել օտարաց։

Հ. Ո՞յք են պարտաւորութիւնք բարերարաց։

Պ. ԺԷ.) Բարերարք և երախտագործք պարտական են, 1. ճանաչել զկար զօրութեան իւրեանց, և ըստ չափու կարողութեանցն մատակարարել, 2. զպարգևս ոչ ածել թափել բունի ՚ի վերայ չընդունողաց, 3. ընտրութեամբ առնել ընդ կարօտեալս, և չարկանել զմարգարիտս առաջի խոզաց, 4. մաքուր՝ ողջախոհ և անշահասէր դիտաւորութեամբ պարգևել առանց ակնկալութեան փառաց կամ փոխարինի, 5. ընդ պարգևս իւրեանց ոչ պարծել սնափառութեամբ և անձնագովութեամբ, և 6. ոչ երբէք յանդիման հարկանել զերախտիս իւրեանց՝ անգոսնելով և ամօթալից առնելով զպարգևընկալս։

Հ. Ո՞յք են պարտաւորութիւնք երախտագիտից։

Պ. ԺԸ.) Երախտագէտք կամ բարերարեալք պար-

տաւորին, 1. սրտիւ՝ բանիւ և գործով ճանաչել՝ խոստովանել և քարոզել զբարերարութիւն երախտաւորաց, 2. մեծայարգ համարել զպարգևս նոցա և զփոքունս, 3. ոչ ՚ի մոռացօնս արկանել զընկալեալ շնորհսն, 4. սիրել և յարգել զբարերարս, 5. եթէ չիցէ հնար՝ զփոխարէնն պարգևաց ըստ կարի հատուցանել երախտաւորին, յայնժամ զպարտաւորութիւն փոխարինելոյ ճանաչել և խոստովանել, 6. ոչ ՚ի չարն՝ այլ ՚ի բարին ՚ի կիր առնուլ զընկալեալ պարգևսն ըստ կամաց բարերարին, 7. չտալ նոցա ձանձրութիւն նորանոր պարգևս խնդրելով, 8. ՚ի դիպելն՝ օգնել և նպաստել բարերարաց կամ ընտանեաց նոցա ըստ կարողութեան, և 9. ոչ հատուցանել չար փոխանակ բարւոյ, ոչ վնասել, ոչ բամբասել և ոչինչ ինչ դառնացուցանել զբարերարս, ևն.

Հ. Ո՞յք են պարտաւորութիւնք դատաւորաց.

Պ. ԺԹ.) Դատաւորք պարտական են, 1. յօժարասիրտ լսել վիճողաց, 2. դատել և վճռել արդարութեամբ և իրաւարարութեամբ՝ ըստ հրամայելոյ օրինաց, 3. հեռի լինել յամենայն անիրաւութենէ և յաչառութենէ, 4. փախչել ՚ի կաշառակերութենէ, 5. քաջ քննել զփաստսն, 6. փութով աւարտել զդատն, ևն.

Հ. Ո՞րինչ են պարտաւորութիւնք բժշկաց.

Պ. Ի.) Բժշկք և Վիրաբոյժք պարտին, 1. քաջավարժ լինել յարհեստի իւրեանց, զի մի տգիտութեամբ մարդասպան լիցին, 2. սիրով այց առնել հիւանդաց, 3. զգաղտնիս հիւանդաց լռութեամբ կնքել, 4. աւելորդ ծախիւք չվնասել տկարաց, 5. զաղ-

քաղս ձրի բժշկել, 6. զարուեստակիցս իւրեանց չառնել վատմանուն, և 7. զԱ՛ծպաշտուն զհետ լինիլ և զեղբայրսիրուն։

Հ. Ո՞յք են պարտաւորութիւնք վաճառականաց և արուեստաւորաց։

Պ. Նա. Նբ.) Վաճառականք և Արհեստագործք պարտաւոր են, 1. զբարի և զլաւ վաճառս ընդ պահանջելոյ խնդրողացն մատուցանել, 2. զարատաւորն իբրև զանարատ ոչ վաճառել, 3. ՚ի չափս և ՚ի կշիռս ոչ առնել խարդախութիւն, 4. ոչինչ իւիք վնասել գնողաց, որպէս և ոչ արուեստակցաց կամ սպասաւորաց իւրեանց, 5. ըզպարտս անյապաղ հատուցանել, 6. սուտ ոչ ցուցանել զինքեանս վնասեալ կամ սնանկացեալ առ ՚ի խաբել զպարտապահանջս, և 7. առանց նենգութեան յանկ հանել զձեռակերտս, եւն։

Հ. Ո՞յք են պարտաւորութիւնք հարստաց և յաջողելոց։

Պ. Նգ.) Հարուստք և Յաջողեալք պարտական են, 1. զլոյս իւրեանց չդնել ՚ի սնոտի ճոխութիւնս և յինչս, 2. ոչ ՚ի մեղանչականս, այլ ՚ի բարի գործս վարել զինչս, մանաւանդ՝ առ լուսաւորութիւն ազգին, ՚ի դպրոցս և յեկեղեցիս, և 3. առաւել քան զամ՝ ձեռնտու լինիլ կարօտութեան ընկերաց և առնել ողորմութիւն յաղքատս և ՚ի տնանկս, և այլն։

Հ. Զի՞նչ պարտաւորութիւնք են աղքատաց։

Պ. Նդ.) Աղքատաց պարտաւորութիւնք են, 1. վիճակաւ և երանութեամբ իւրեանց շատանալ, 2. ոչ նախանձիլ և ոչ արհամարհել զճոխս, 3. ոչ մուրել-

րել 'ի գողութիւնս՝ 'ի խաբէութիւնս և յայլ մեղս ինչ վասն հարստանալոյ, 4. երբ կարեն աշխատիլ և վաստակել՝ չելանել 'ի մուրացութիւն, և 5. ստանալ զհամբերութիւն և հաստատեալ բարի գործովք առաքինութեանց, զի մեղք և մոլութիւնք ոչ յառաջ գան յաղքատութենէ, այլ յաղքատաց:

Հ. Որպիսի՞ պարտաւորութիւնք են տանուտերաց.

Պ. (ԻԵ.) Տանուտէրք պարտին, 1. սիրով ընդունել զհիւրս՝ զպանդուխտ կամ զանծանօթ նժդեհս, 2. կերակրել՝ մխիթարել և հանգուցանել զնոսա, 3. ըստ կարի հոգալ զպիտոյս ճանապարհի նոցա, 4. 'ի հիւանդանալ կամ 'ի վնասիլ նոցա իւիք՝ խնամել և ցուցանել զամ մարդասիրութիւն, և 5. բազում զգուշութբ և խորագիտութբ հսկել 'ի վերայ հիւրոց և պանդխտաց, զի որում գտանին և չարագործ ապերախտ հիւրք.

Հ. Ո ի՞նչպիսի պարտաւորութիւնք են առողջաց և կենդանեաց.

Պ. (ԻԶ. ԻԷ.) Առողջք և Կենդանիք պարտաւոր են, 1. սիրել զհիւանդս փափուկ եղբայրսիրութբ, յայց ելանել նոցա ըստ պիտոյից, 2. խորհրդով՝ դրամով և գործով օգնել նոցա յառողջանալ 'ի տկարութեանց, 3. զկարևոր պիտոյս նոցա ըստ կարեաց լնուլ, 4. 'ի մեռանել նոցա՝ արժանաւոր պատուով հողոյ տալ զմարմինն, 5. վասն հոգւոց ննջեցելոց՝ մանաւանդ ազգականաց և բարեկամաց՝ առ Ած աղօթս մատուցանել, 6. բարիս խօսել զնոցանէ, ոչ բամբասել և ոչ վատահամբաւել զնոսա, 7. կատարել զկտակ նո-

ցա, եթէ յանձնեալ լիցին մեզ, և 8. մխիթարել զընտանիս և զսիրելիս նոցա։

Հ. Ո՞ր պարտաւորութիւնք են հիւանդաց։

Պ. (ԺԸ.) Հիւանդաց պարտաւորութիւնք են, 1. աներկմիտ հաւատալ, թէ՝ ԱԾ զամ ինչ յօգուտ մեր գործէ ընդ մեզ, 2. համբերութեամբ տանել ցաւոց և վշտաց ախտից, 3. զղջալ ՚ի մեղաց, ապաշխարել, խոստովանիլ և հաղորդիլ մարմնոյ և արեան Քրիստոսի, 4. վարիլ օգնութեամբ դեղոց և բժշկաց, 5. քաջայոյս վստահանալ յԱԾ, յանձն առնել նմա զկեանքն և զիւրսն, 6. ՚ի ծանրանալ ախտին՝ յօրինել զկտակ մահուան վասն ընչից և ընտանեաց, և 7. գոհանալ զԱՅ վասն անթիւ բարերարութեանց նորա, պարապիլ ըստ կարեաց ՚ի բարի գործս՝ յաղքատս և յեկեղեցիս, և զօրանալ հոգւով ընդդէմ փորձութեանց և աղէտից մահուան։

Հ. Ո՞ր է գլխաւոր պարտականութիւն քրիստոնէի՝ որով և իցէ փորձութեամբ կամ ձախորդութեամբ տանջելոյ։

Պ. (ԺԹ.) Քրիստոնեայն պարտին յանձին բերել զՀամբերութիւն, որ յամ վիճակս ԱԾային կարգադրութեան հնազանդի, համբերէ և գոհ մտօք ձախորդութեանց տանի, ՚ի բարեգործութեանց ոչ լքանի, ոչ գանգատի, ոչ բամբասէ, ոչ հայհոյէ և ոչ տրտնջէ զԱՅ կամ զմարդկանէ, ոչ յուսահատի ՚ի յաջող ելից, ոչ ՚ի կեր առնու զմեղուցելոց միջոցս յաղթելոյ ՚ի փորձութեանց. այլ յուսալից հաւատով զինուորեալ՝ զգենու զՀամբերութիւն հոգւոյ, որոնէ և գտանէ զմիջոցս՝ կամ յաղթելոյ և

խուսելոյ 'ի վշտաց, կամ անխորտակելի զօրութեամբ տանելոյ զայնս՝ ցորչափ և ցորվայր հաճեսցին կամք Աստուծոյ, վարի օրինաւոր գործեօք սուրբ հաւատոյ և քրիստոնէական կրօնի, և տևէ իբր անյաղթելի զինուոր ցկատարած մարտին՝ ակնունելով պսակաց 'ի հանդիսադրէն Աստուծոյ։

Հ. Գո՞յ պարտաւորութի՞ւն ինչ մարդոյ և առ անբան անասունս։

Պ. Է.) Այո․ վասն զի պարտական են մարդիկ քաղցրութեամբ և գթութեամբ վարիլ ևս և ընդ անբան անասունս, անուցանել՝ դարմանել և բժշկել զնոսա, մի յումպէտս տանջել՝ կոտել՝ չարչարել և սպանանել անգթութեամբ՝ ընդդէմ հրամանաց Աստուծոյ և խայթի խղճմտանաց։

## Դաս. Գ.

### Պտուղք օրինապահ ներգործութեանց հոգւոյ։

Հ. Ո՞յք են պտուղք ներգործութեանց հոգւոյ։

Պ. Ներգործութիւնք՝ ելուզեալք համաձայն Աստուածային օրինաց մինչև ցաստ բացատրելոց՝ պտղաբերեն մեզ զԱռաքինութիւն, զԿատարելութիւն և զԵրջանկութիւն։

Հ. Զի՞նչ են երեք այդոքիկ պտուղք օրինապահ ներգործութեանց։

Պ. Առաքինութիւն է տարրացեալ ունակութիւն կամաց՝ զօրեղապէս՝ հեշտեաւ և անսայթաք բարեգործելոյ համաձայն ուղիղ դատողութեան մտաց. և

Կատարելութիւն է բարձրագոյն աստիճան առաքինութեան. իսկ

Արժանաւորութիւն է վայելումն յերկրի և յերկինս՝ բարեաց յառաքինութեանց ծագելոց։

Հ. Ո՞յք են յատկութիւնք կամ որակութիւնք Առաքինութեան,

Պ. Երեք սոքին, թէ՝ զի լինիցի 1. Աստուածային, այն է՝ զի առաջին շարժառիթ բարեգործելոյ մերոյ լիցի սէրն և մեծարանքն Ա՟յ իբրու օրէնսդրի և դատաւորի, 2. Հանրական, ոչ զմի կամ զոմանս, այլ զա՟մ պատուիրանս Ա՟յ պահեսցէ, և 3. Հաստատուն և մշտնջենաւոր. ոչ երբեմն՝ այլ յա՟մ ժամանակի, յա՟մ տեղիս, և յա՟մ դիպուածս կատարեսցէ զօրէնսն Ա՟յ։

Հ. Ո՞յք են խափանարարք կամ արգելք առաքինագործութեանց։

Պ. Ներքին ցանկութիւն կամ փորձութիւն, տգիտութիւն բարոյագիտութեան, չար դաստիարակութիւն բարուց ՚ի մանկութեան, մոլար ուսումն կրօնի, չար օրինակ այլոց, մոլորեցուցիչ ընկերք, ընթերցումն ախտաշարժ գրոց, ևն։

Հ. Զի՞նչ հակառակի բարեգործութեան։

Պ. Չարագործութիւն, Մեղք, Անօրէնութիւն, այն է՝ ազատութիւն հաւանելն և գործելն կամաց ընդդէմ ծանուցեալ օրինացն Ա՟յ և ուղիղ դատողութեան մտաց. որ եթէ սովորութիւն ձգեալ՝ փոխեսցի յունակութիւն, կոչի Մոլութիւն կամ Մեղսասիրութիւն,

Հ. Զիա՞րդ բաժանի մեղքն։

Պ. Յերկուս տեսակս, ՚ի Սկզբնականն, որ է պակասութիւն սկզբնական արդարութեան զոյգ ընդ հակամիտութեան առ ա՟մ մեղս՝ ծագեալս ՚ի մեղաց Ադամայ

և Նուայի, և 'ի Նէրֆործաչամ, զոր չափահասակ մարդիկ գործեն մտադրութեամբ և ազատ անձնիշխանութեամբ.

Հ. Զիա՞րդ բաժանի ներգործական մեղքն.

Պ. Բաժանի 1. բանիւ պատճառին՝ 'ի Կամաւորս և յԱնկամայս, 2. ըստ առարկայից՝ 'ի մեղս ընդդէմ Աստուծոյ, ընդդէմ Անձին և ընդդէմ Ընկերին, և 3. նկատմամբ յարակցացն՝ ի Ծանր և 'ի Թեթեւ, 'ի Մահացու և 'ի Ներելի, 'ի Գաղտնի և 'ի Յայտնի, որ՝ հանդերձ գայթագղութեամբ, 'ի Յանձնառական և 'ի Զանցառական, եւն.

Հ. Ո՞յք են միջոցք խափանելոյ 'ի մեղս.

Պ. Հոգևոր արթնութիւն և արիութիւն, ջերմեռանդ աղօթք, ընթերցումն սուրբ և հոգևոր գրոց, հանապազօրեայ մտածութիւն փախչիլ 'ի չար ընկերաց և յորոգայթից մեղաց, ստէպ խոստովանութիւն և հաղորդութիւն, ունիլ զբարի և զգիտուն խոստովանահայր, եւն.

Հ. Զիա՞րդ նկատի կատարելութիւն քրիստոնէից.

Պ. Առաքինական Կատարելութիւն քրիստոնէից նկատի թէ 'ի միտս նոցա, այն է՝ ուղիղ՝ անմոլար և պայծառ ճանաչել զԱստուած, զԱստուածայինս, զկրօնս, զհաւատ և զայլ ամենայն գիտելի ճշմարտութիւնս, և թէ 'ի կամս, որ է՝ միայն Աստուածային սիրով, հաւատարմութեամբ, հանապազորդութեամբ և ամենայն խոչընդակաց յաղթութեամբ զբարիս գործել, զորս պարտին յանձն բերել ոչ եկեղեցական անձինք միայն (որպէս սխալանօք կարծեն ոմանք), այլ և ամենայն քրիստոնեայք առ հասարակ, զի Աստուածայինք գիրք ոչ գրեցան 'ի պէտս սակաւ եկեղեցական-

նաց, այլ վասն ամ քրիստոնէից (371. 372. 373. 374. 375. 376. 377. 378.)։

Հ. Քանի՞ պատիկ է երջանկութիւն մարդոյ։

Պ. Երջանկութիւն մարդոյ կրկին է, Երկրաւոր և Երկնաւոր. երկրաւոր երանութիւն յաւելու 'ի կատարելութիւն մարդոյ զանազանս զհաստատուն շատացումն սրտի կամ զհանգիստ հոգւոյ. և սա եղեալ կայ, մի՝ 'ի կատարեալ ճանաչողութե Ա.Յ և Ա.ծայնոց (379. 380. 381. 382. 383. 384.). և միւս ևս՝ յանխաբ վկայութե խղճի մըտաց, որ լինելի պահեալ իցէ կամ պահէ զամ օրէնս Ա.Յ (385. 386. 387. 388. 389. 390 391. 392.). իսկ երկնաւոր երանութե տես 'ի յօդ. ա. հատ. Ը. 'ի վերոյ։

## ԵԹԷ ԶՕՐԷՆՍ ԳԻՏԷՔ
## ԵՐԱՆԵԼԻ ԵՒՍ ԷՔ
## ԵԹԷ ԱՌՆԻՑԷՔ ԶՕՐԷՆՍ։

(Յովհ. ԺԳ. 17.)։

Որ ոք Գիտիցէ զբարին՝ և Ո՛չ Առնիցէ,
Մեղք են նմա։

(Յակոբ. Դ. 17.)։

# ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ

# ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏԵԱՆԻՆ

*յանժխտելի հաւաստութիւն գրելոց 'ի Կրօնս գիտութեանս*

1.) Հոգի է Աստուած, և երկրպագուաց Նորա՝ հոգւով և ճշմարտութեամբ պարտ է երկիրպագանել (Յովհ. Դ. 24.):

2.) Այս են յաւիտենական կեանք, զի ծանիցեն զՔեզ միայն ճշմարիտ Աստուած, և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս (Յովհ. ԺԷ. 3.):

3.) Աստուած Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Հայրն փառաց՝ տացէ ձեզ զՀոգին իմաստութեան և յայտնութեան՝ գիտութեամբ նորա. լուսաւոր առնել զաչս սրտից, առ 'ի գիտելոյ մեզ՝ զինչ է յոյս կոչման նորա, և զինչ է մեծութիւն փառաց ժառանգութեան նորա 'ի սուրբս. և զինչ է առաւելութիւն մեծութեան զօրութեան նորա 'ի մեզ հաւատացեալս (Եփես. Ա. 17. 18. 19.):

4.) Կանխեցէք և ծաներուք զի ես եմ Աստուած (Սաղմ. ԽԵ. 11.):

5.) Ընդունայն էին ամենայն մարդիկ բնութեամբ յորս էր Աստուածանգիտութիւն. և յերևելի բնութեանցն ոչ կարացին գիտել զայն որ էրն, և ոչ 'ի գործս հայեցեալ ծանեան զճարտարապետն (Իմաստ. ԺԳ. 1.):

6.) Դու Աստուած մեր՝ քաղցր և ճշմարիտ . . . ճանաչելն իսկ զքեզ՝ բովանդակ արդարութիւն է, և գիտելն

զզօրութիւն քո՝ արմատ անմահութեան (Իմաստ. ԺԵ. 1. 3.)։

7.) Ծանեաւ եզն զստացիչ իւր, և էշ զմսուր տ՟ն իւրոյ. և Իսրայէլ զիս ոչ ծանեաւ, և ժողովուրդ իմ զիս 'ի միտ ոչ առ (Եսայ. Ա. 3.)։ Տես և զ2. համարն անցեալ։

8.) Սիրելիք, սիրեսցուք զմիմեանս, զի սէր յԱ՟յ է. և ա՟մ որ սիրէ՝ յԱ՟յ է ծնեալ, և ճանաչէ զԱ՟ծ (Ա. Յովհ. Դ. 7)։

9.) Գիտեմք եթէ Որդին Ա՟յ եկն, և ետ մեզ միտս. զի ծանիցուք զՃշմարիտն. և եմք 'ի Ճշմարտին Որդւոյ նորա Յ՟սի Ք՟սի. զի նա է Ճշմարիտ Ա՟ծ՝ և կեանք յաւիտենական (Ա. Յովհ. Ե. 20.)։

10.) Սիրելիք՝ մի ա՟մ հոգւոյ հաւատայք, այլ՝ ընտրեցէք զհոգիսն եթէ յԱ՟յ իցեն. զի բազում սուտ մարգարէք ելեալ են յաշխարհ. (Ամենայն հոգի որ խոստովանի զՅիսուս Քրիստոս մարմնով եկեալ, յԱ՟յ է նա. և ա՟մ հոգի որ ոչ խոստովանի զՅիսուս Քրիստոս մարմնով եկեալ, չէ նա յԱ՟յ. և այս Նեռինն է, զորմէ լուարուքն եթէ գալոց է. և արդէն իսկ աշխարհի է) (Ա. Յովհ. Դ. 1. 2. 3.)։

11.) Նորոգեցարուք 'ի նորոգումն մտաց ձերոց. առ 'ի քննել ձեզ զլաւն, և եթէ զինչ են կամքն Ա՟յ, բարին և հաճոյն և կատարեալ (Հռովմ. ԺԲ. 2.)։

12.) Փորձեսցէ մարդ զանձն իւր, և ապա 'ի հացէ անտի կերիցէ, և 'ի բաժակէն արբցէ. զի որ ուտէ և ըմպէ անարժանութ՟, դատաստանս անձին իւրում ուտէ և ըմպէ. զի ոչ խտրէ զմարմինն Տեառն (Ա. Կորնթ. ԺԱ. 28. 29.)։

13.) Զոր ինչ փորձեցէք, զբարին ընկալարուք. յամ իրաց չարաց 'ի բաց կացէք (Ա. Թեսաղ. Ե. 20. 21.)։

14.) Ճաշակեցէք եւ տեսէք զի քաղցր է Տէր, երանեալ է այր որ յուսայ 'ի նա (Սաղմ. ԼԳ. 9.)։

15.) Զոր փոյթ 'ի մէջ առեալ՝ ձերովքն հաւատովք մատակարարեսջիք զառաքինութիւն, եւ առաքինութեամբն զգիտութիւն, եւ գիտութեամբն զժուժկալութիւն, եւ ժուժկալութեամբն զհամբերութիւն, եւ համբերութեամբն զածպաշտութիւն, եւ ածպաշտութեամբն զեղբայրսիրութիւն, եւ եղբայրսիրութեամբն զսէր։ Զայսոսիկ ձեր յանձին կալեալ եւ 'ի սոյն յաճախեալ, ոչ դատարկս եւ անպտուղս հաստատիցեն զձեզ 'ի Տեառն մերոյ Յսի Քսի գիտութիւն (Բ. Պետրոս. Ա. 5. 6. 7. 8.)։

16.) Աճեցէք շնորհօք եւ գիտութեամբն Տեառն մերոյ եւ Փրկչին Յսի Քսի (Բ. Պետր. Գ. 18.)։

17.) Բայց յոյս մի ունիմք զաճմանն հաւատոց ձերոց, այդրէն 'ի ձեզ մեծանալոյ, ըստ կանոնիս մերոյ՝ յառաւելուլն (Բ. Կորնթ. Ժ. 15.)։

18.) Զայն աղօթս առնեմ. զի սէրն ձեր եւ՛ քան զես առաւել լիցի 'ի գիտութե եւ յամ իմաստութե. ընտրել ձեզ զլաւն (Փիլիպ. Ա. 9. 10.)։

19.) Ի մեծութէ եւ 'ի գեղեցկութէ արարածոյն ըստ նմին համեմատութե եւ արարչագործն նոցա երեւի (Իմաստ. ԺԳ. 5.)։

20.) Աներեւոյթք նորա 'ի սկզբանէ աշխարհի՝ արարածովքս իմացեալ տեսանին (Հռովմ. Ա. 20.)։

21.) Ասաց անզգամն 'ի սրտի իւրում թէ ոչ գոյ Ած (Սաղմ. ԾԲ. 1.)։

22.) Ունիմք հաստատագոյն զբանսն մարգարէականսն, որում եթէ անսայցէք՝ բարւոք առնէք. իբրև ճրագի որ տայցէ լոյս ՚ի խաւարչտին տեղւոջ. Վասնզի ոչ եթէ ըստ կամաց մարդկան տուաւ մարգարէութի՜ երբէք, այլ ՚ի Հոգւոյն Սրբոյ կրեալք՝ խօսեցան մարդիկ Այ (Բ. Պետր. Ա. 19. 21.)։

23.) Զ Տն երկայնմտութի՜ փրկութի՜ համարեսջիք։ Զորօրինակ և սիրելի եղբայրն մեր Պաւղոս, ըստ շնորհելոյ իմաստութեանն նմա յԱյ՝ գրեաց ձեզ (Նշն. Գ. 15.)։

24.) Այլ մեք ոչ եթէ զհոգի աշխարհիս այսորիկ առաք, այլ զՀոգին որ յԱյ. զի ծանիցուք զայն որ յԱյն շնորհեցաւ մեզ (Ա. Կորնթ. Բ. 12.)։

25.) Ցուցանեմ ձեզ եղբարք զաւետարանն, որ աւետարանեցաւ յինէն. կի ոչ ըստ մարդոյ. քանզի և ոչ ես ՚ի մարդոյ առի, և ոչ ուսայ յումեքէ, այլ ՚ի Յայտնութենէ Յի Քի (Գաղատ. Ա. 11. 12.)։

26. Գիտասջիք՝ եթէ իշխանութի՜ ունի Որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս. յայնժամ ասէ ցանդամալոյծն. արի՛ առ զմահիճս քո՝ և երթ ՚ի տուն քո Եւ յարուցեալ գնաց ՚ի տուն իւր (Մատթ. Թ. 6. 7.)։

27.) Պատասխանի ետ Յս՝ և ասէ ցնոսա, գնացէք պատմեցէք Յովհաննու, զոր լուայք և տեսէք. կոյրք՝ տեսանեն, կաղք՝ գնան, բորոտք՝ սրբին, և խուլք լսեն, և մեռեալք յառնեն (Նշն ԺԱ. 4. 5.)։

28.) Նշանք այնոցիկ՝ որ հաւատանն յանուն Իմ՝ դևս հանցեն. լեզուս խօսեսցին. Ի ձեռս իւրեանց

օձս բարձցեն. և եթէ մահացու ինչ դեղ արբ-
ցեն, նոցա ինչ ոչ մնասեսցէ. 'ի վերայ հիւան-
դաց ձեռս դիցեն՝ և բժշկեսցեն (Մարկ. ԺԶ.
17. 18.

29.) Ես ունիմ վկայութիւն մեծ ևս քան զՅովհաննու.
զգործսն՝ զոր ետ ցիս Հայր՝ զի կատարեցից զը-
նոսա, նոքին իսկ գործքն զոր գործեմ՝ վկայեն
վասն իմ, եթէ Հայր առաքեաց զիս (Յովհ.
Ե. 36.)։

30.) Բազում և այլ նշանս արար Յիսուս առաջի
աշակերտացն իւրոց՝ որ ոչ է գրեալ 'ի գիրս
յայսմիկ. Այլ այս այնչափ ինչ գրեցաւ, զի հա-
ւատայցէք եթէ Յիսուս Քրիստոս է Որդի
Աստուծոյ. և զի հաւատայցէք, և զկեանս յա-
ւիտենականս ընդունիցիք յանուն Նորա (Նոյն. Ի.
30. 31.)։

31.) Ո՛չ եթէ պաճուճեալ ինչ առասպելելոց զհետ
երթեալ ցուցաք ձեզ զՏն մերոյ Յսի Քսի
զզօրութիւն և զգալուստն. այլ մեզէն եղեալ ակա-
նատեսք Նորա մեծութեանն (Բ. Պետր. Ա. 16.)։

32.) Մեք՝ զիա՞րդ ապրեսցուք հեղգացեալք յայս-
պիսի փրկութենէ, որ սկիզբն առ խօսելոյ 'ի Տեառնէ..
վկայեալ յԱյ նշանօք և արուեստիւք, և պէսպէս
զօրութեամբք, և մասամբք Հոգւոյն Սրբոյ՝ ըստ իւրոյ
կամաց (Եբրայ. Բ. 3. 4.)։

33.) Կարդա՛ (Մատթ. ԺԴ. 2=44.)։

34.) Որպէս Մովսէս բարձրացոյց զօ՛ձն յանապատին,
նո՛յնպէս բարձրանալ պա՛րտ է Որդւոյ Մարդոյ
(Յովհ. Գ. 14.)։

35.) Այլ Ես զճշմարիտն ասեմ ձեզ. լա՛ւ է ձեզ եթէ

Ես երթամ։ զի եթէ Ես ոչ երթայց՝ Մխիթարիչն ոչ եկեսցէ առ ձեզ. ապա եթէ երթամ, առաքեցից զՆա առ ձեզ (Նոյն. ժզ. 7.)։

36.) Ուսուցէք նոցա պահել զամ՝ որ ինչ պատուիրեցի ձեզ։ Եւ ահաւասիկ Ես ընդ ձեզ եմ զամ աւուրս՝ մինչև 'ի կատարած աշխարհի (Մատթ. իը. 20.)։

37.) Յս Քս երէկ և այսօր, նոյն և յաւիտեանս (Եբրայ. ժգ. 8.)։

38.) Ասէ ցնոսա, երթայք յաշխարհ ամ, և քարոզեցէք զաւետարանն ամ արարածոց (Մարկ. ժզ. 15.)։

39.) Վասն յուսոյն որ պահի ձեզ յերկինս. զորմէ լուարուք բանիւն ճշմարտութե՝ Աւետարանին, որ եհաս առ ձեզ. որպէս ընդ ամ աշխարհ աճէ և պտղաբերէ, որպէս և 'ի ձեզում միջի (Կողոս. ա. 6.)։

40.) Եթէ կայցէք 'ի հաւատսն արմատացեալք, և հաստատեալք, և անշարժք 'ի յուսոյ աւետարանին, զոր լուարուք, քարոզելոյ ընդ ամ արարածս 'ի ներքոյ երկնից. որոյ եղէ ես Պաւղոս պաշտօնեայ (Նոյն. ա. 23.)։

41.) Սիրեցէք զարդարութի... Խորհեցարուք զՏէ բարութե, և միամտութե սրտի խնդրեցէք զնա. Զի գտանի այնոցիկ որ ոչ փորձեն զնա. և երևի որոց ոչ թերահաւատեն 'ի նմանէ (Իմաստ. ա. 1. 2.)։

42.) Եթէ երկմտեսցէ ոք՝ ոչ հաճեսցի ընդ նա անձըն իմ։ Զի արդարն իմ 'ի հաւատոց իմոց կեցցէ. այլ կարծօղն և արհամարհօղն՝ մեր ան-

քարտուղան է՝ և ոչինչ վճարեսցէ (Ամբակ. բ. 4. 5.)։

43.) Իսկ Յս երբեմն դարձաւ և ետես զնա, ասէ՝ քաջալերեաց դուստր՝ հաւատք քո կեցուցին զքեզ (Մատթ. թ. 22.)

44.) Քանզի արդարութիւն Այ ՚ի հաւատոց անտի Յսի Քսի, յամ հաւատացեալս (Հռովմ. գ. 22.)։

45.) Սրտիւ հաւատայք յարդարութիւն, և բերանով խոստովանիք ՚ի փրկութիւն. քանզի ասէ գիր. ամ՝ որ հաւատասցէ ՚ի նա, մի ամաչեսցէ (Նյն. ժ. 10. 11.)։

46.) Զի՞նչ են հաւատք, եթէ ոչ՝ յուսացելոց իրաց հաստատութիւն, և յանդիմանութիւն որոց ոչն երեւին (Եբրայ. ժա. 1. ընթերցիր և 2=40.)։

47.) Ըստ կանխագիտութեան այ հօր, սրբութբ հոգւոյն, ՚ի հնազանդութիւն և ՚ի հեղումն արեան Յսի Քսի. Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն բազմասցին. Օրհնեալ է Ած և հայր Տեառն մերոյ Յսի Քսի, որ ըստ բազում ողորմութեան իւրում ծնաւ զմեզ վերստին ՚ի յոյսն կենդանի. ՚ի ձեռն յարութեան Յսի Քսի ՚ի մեռելոց, յանեղծ և յանարատ և յանթառամ ժառանգութիւն՝ որ պահեալ է յերկինս ՚ի ձեզ. որ զօրութբն այ պահեալ էիք հաւատովք ՚ի պատրաստեալ փրկութիւն, յայտնեալ ՚ի յետին ժամանակս, որով ուրախ լինիջիք, որք այժմ սակաւիկ ինչ ըստ պատշաճի իրացդ տրտմեալք ՚ի պէսպէս փորձութիւնս (ա. Պետր. ա. 2=6.)։

48.) ՚Ի սկզբանէ էր Բանն. և Բանն էր առ Ած. և Ած էր Բանն. Նա՝ էր ՚ի սկզբանէ առ Ած։ (Յովհ. ա. 1. 2.)։

49.) Ակնկալցուք երանելի յուսոյն, և յայտնութեան փառաց մեծին Ա՟յ և փրկչին մերոյ Յ՟ի Ք՟ի (Տիտոս. բ. 13.)։

50.) Որոց հարքն յորոց և Ք՟ս ըստ մարմնոյն, որ է 'ի վերայ ամենեցուն Ա՟Ծ օրհնեալ յաւիտեանս. ամէն (Հռովմ. թ. 5.)։

51.) Զորոց ոչ ոք յիշխանաց աշխարհիս այսորիկ ծանեաւ. զի թէ էր ծանուցեալ, ոչ արդեօք զՏէր փառացն 'ի խաչ հանէին (ա. Կորնթ. բ. 8.)։

52.) Որ է պատկեր աներևութին Ա՟յ, անդրանիկ ամ՟ արարածոց. զի նովաւ հաստատեցաւ ամ՟, որ յերկինս՝ և որ ինչ յերկրի, որ երևելի՝ և որ ոչն երևելին. եթէ աթոռք, եթէ տէրութիւնք, եթէ պետութիւնք, եթէ իշխանութիւնք. ամ՟ ինչ նովաւ՝ և 'ի նմին հաստատեցաւ. նա է յառաջ քան զամ՟, և ամ՟ ինչ նովաւ եկաց բովանդակ (Կողոս. ա. 15. 16. 17.)։

53.) Որ է լոյս փառացն՝ և նկարագիր էութեան նորա. որ կրէ զամ՟ բանիւ զօրութեան իւրոյ. սրբութիւն մեղաց մերոց արարեալ, նստաւ ընդ աջմէ մեծութեան 'ի բարձունս (Եբրայ. ա. 3.)։

54.) Տես զհամարն՝ 9։

55.) Բանն մարմին եղև, և բնակեաց 'ի մեզ. և տեսաք զփառս Ն՟ր զփառս իբրև զմիածնի առ 'ի Հօրէ, լի շնորհօք և ճշմարտութբ՟ . . . . . ԶԱ՟ծ ոչ ոք ետես երբէք, բայց միածինն Որդի՝ Որ 'ի ծոց Հօր՝ Նա պատմեաց (Յովհ. ա. 14. 18.)։

56.) Ես և Հայր իմ մի եմք (Յովհ. ժ. 30.)

57.) Որ ինչ իմ է, ամ՟ քո է. և որ ինչ քո է, այն

Իմ է. և փառաւորեալ եմ 'ի նոսա (Յովհ. ԺԷ. 10.)։

58.) Այնչափ առաւել եղեալ քան զհրեշտակս, որչափ լաւ ես քան զնոսա անուն ժառանգեաց. «Որանգի ց՞ երբէք ասաց 'ի հրեշտակաց. որդի իմ ես դու, ես այսօր ծնայ զքեզ. Եւ դարձեալ՝ թէ ես եղէց նմա 'ի Հայր, և նա եղիցի ինձ յՈրդի. Այլ յորժամ միւսանգամ մուծցէ զանդրանիկն յաշխարհ, ասէ՝ երկիրպագցեն նմա ամ հրեշտակք Այ (Եբրայ. Ա. 4. 5. 6.)։

59.) (Տե՛ս զհամարն 48.)

60.) (Տե՛ս զհամարն 37.)

61.) Առ հրեշտակն զմիւռնացւոյ եկեղեցւոյն գրեա. այսպէս ասէ անսկիզբն և անվախճանն, որ եղև մեռեալ՝ և կենդանացաւ (Յայտ. Ա. 8.)։

62.) (Տե՛ս զնախընթաց համարն 61.)

63.) Ես տամ նոցա զկեանսն յաւիտենականս. և մի կորիցեն 'ի յաւիտեան. և մի ոք յափշտակեսցէ զնոսա 'ի ձեռաց Իմոց (Յովհ. Ժ. 28.)

64.) Մատուցեալ Յս խօսեցաւ ընդ նոսա՝ և ասէ. տուաւ Ինձ ամ իշխանութիւն յերկինս և յերկրի. որպ առաքեաց զԻս Հայր, և Ես առաքեմ զձեզ (Մատթ. ԻԸ. 18.)։

65.) Զի ոչ էր պիտոյ՝ եթէ ոք վկայեսցէ վասն մարդոյ. զի Ինքն իսկ՝ գիտէր զինչ կրէր 'ի մարդն (Յովհ. Բ. 25.)։

96.) Ասէ ցնա երիցս անգամ. Սիմովն Յովնանու սիրե՞ս զԻս. Տրտմեցաւ Պետրոս՝ զի ասաց ցնա երիցս՝ թէ սիրես զԻս. և ասէ ցնա. Տէր՝ Դու զամ գիտես. և Դու իսկ՝ զամ ճանաչես և թէ սիրեմ զՔեզ (Յովհ. ԻԱ. 17.)։

67.) Մխիթարեսցին սիրտք նոցա. տեղեկացեալք սիրով. և յամ̃ մեծութիւն լրութեան իմաստութեան՝ ի գիտութիւն խորհրդոյն Ա՟յ ի Ք՟ս Յ՟ս. յորում ամ̃ գանձք իմաստութեան և գիտութեան ծածկեալ կան (Կողոս. Բ. 2. 3.)։

68.) Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ ոչ անցանիցեն (Ղուկաս. ԻԱ. 33.)։

69.) Ասէ ցնոսա Յիսուս. Ես եմ ճանապարհն՝ և ճշմարտութիւն և կեանք. ոչ ոք գայ առ Հայր՝ եթէ ոչ ինև (Յովհ. ԺԴ. 6.)։

70.) Եւ հրեշտակն լաւոդիկեայ եկեղեցւոյն գրեա. այսպէս ասէ ամէնն՝ վկայն հաւատարիմ և ճշմարիտ, սկիզբն սկզբանն արարածոց Ա՟յ (Յայտ. Գ. 14.)։

71.) Ամենայն ինչ՝ նովաւ եղև. և առանց նորա եղև ոչինչ որ ինչ եղեն (Յովհ. Ա. 3. Տես և զհամարն 52.)։

72.) Եւ Յիսուս պատասխանի ետ նոցա. Հայր իմ մինչև ցայժմ գործէ, և ես գործեմ (Յովհ. Ե. 17.)։

73.) Զի որպէս Հայր յարուցանէ զմեռեալս և կենդանի առնէ, նոյնպէս և Որդի զորս կամի կեն- կենդանի առնէ (Յովհ. Ե. 21.)։

74.) Այս են կամք Հօր իմոյ Որ առաքեաց զիս. զի զամ̃ զոր ետ ցիս Հայր՝ ոչ կորուսից ի նմանէ, այլ յարուցից զնա յաւուրն յետնում . . . . Որ ուտէ զմարմին իմ՝ և ըմպէ զարիւն իմ, ունի զկեանս յաւիտենականս. և ես՝ յարուցից զնա յաւուրն յետնում (Յովհ. Զ. 39. 55.)։

75.) Ծնցիս Որդի, և կոչեսցես զանուն նորա Յ՟ս

զի Նա փրկեսցէ զժողովուրդ Իւր ՚ի մեղաց իւր-
եանց (Մատ. ա. 21.)։

76.) Եւ Ես՝ քեզ ասեմ. զի դու ես վէմ և ՚ի վերայ
այդր վիմի շինեցից զեկեղեցի Իմ. և դրունք
դժոխոց զնա մի յաղթահարեսցեն (Նյն. ժզ.
18.)։

77.) Գնացէք այսուհետև՝ աշակերտեցէք զամ հե-
թանոսս. մկրտեցէք զնոսա յանուն Հօր՝ և Որ-
դւոյ՝ և Հոգւոյն Սրբոյ (Նյն. իը. 19.)։

78.) Ո՛չ եթէ Հայր դատի զոք՝ այլ զամ դատաստանն
ետ Որդւոյ Իւրոյ (Յովհ. ե. 22.)։

79.) Եւ Ինքն Տէր Յիսուս յետ խօսելոյն ընդ նո-
սա՝ համբարձաւ յերկինս, և նստաւ ընդ աջմէ
Հօր (Մարկ. ժզ. 19.)։

80. Զորդիս նորա սպանից մահուամբ. և ծանիցեն
ամ եկեղեցիք՝ թէ ես եմ որ յանդիմանեմ զե-
րիկամունս և զսիրտս. և տաց ձեզ իւրաքանչիւր
ըստ գործոց իւրեանց (Յայտ. բ. 23.)։

81.) Զի ամենեքեան պատուեսցեն զՈրդի, որպէս
պատուեն զՀայր. որ ոչ պատուէ զՈրդին, ոչ
պատուէ զՀայր զառաքիչն Նր (Յովհ. ե. 23.)։

82.) Զի գրեալ է. կենդանի եմ ես՝ ասէ Տէր. զի
ինձ կրկնեսցի ամ ծունր, և ամ լեզու խոստովան
լիցի Այ (Հռովմ. ժդ. 11.)։

83.) Յանուն Յսի Քսի ամ ծունր կրկնեսցի երկ-
նաւորաց և երկրաւորաց, և սանդարամետակա-
նաց (Փիլիպ. բ. 10. Տես և զհամարն 58.)։

84.) Ամ արարածք՝ որ են յերկինս և յերկրի, ՚ի
ծովու և որ ՚ի նոսա՝ լուայ զի ասէին. որ նստի
յաթոռն՝ և Գառինն՝ օրհնեալ բարձրացեալ և

փառաւորեալ յաւիտեանս յաւիտենից (Յայտ. Ե. 13.)։

85.) Ծնաւ մեզ այսօր Փրկիչ, որ է՝ Օծեալ Տէր. ՚ի քաղաքի Դաւթի (Ղուկաս. Բ. 11. Տես և զՀամարն 75.)։

86.) Ասեն. ո՞ւր է Որ ծնաւ Արքայն Հրէից. զի տեսաք զաստղն Նորա յարևելս, և եկաք երկիրպագանել Նմա (Մատթ. Բ. 2.)։

87.) Ասացէք դստեր Սիոնի. ահա՛ Թագաւո՛ր քո գայ քեզ հեզ՝ և հեծեալ յէշ և ՚ի յաւանակի իշոյ (Նոյն. Իա. 5.)։

88.) Ասէ ցնա Պիղատոս. ապա Թէ այդպէս իցէ, Թագաւոր ոմն ես դու։ Պատասխանի ետ Յիսուս՝ դու ասես՝ Թէ Թագաւոր իցեմ. բայց Ես՝ յայդ իսկ ծնեալ եմ, և ՚ի դոյն իսկ եկեալ եմ յաշխարհ, զի վկայեցից Ճշմարտութեան. ամ որ ՚ի Ճշմարտութենէ է, նա լսէ բարբառոյ Իմոյ (Յովհ. ԺԸ. 37.)։

89.) Մովսէս ասաց ցհարսն մեր, Թէ Մարգարէ յարուսցէ ձեզ Տէր ԱԾ ձեր յեղբարց ձերոց իբրև զիս, Նմա լուիջիք՝ ըստ ամի որ զինչ և խօսեսցի առ ձեզ. և եղիցի ամ անձն՝ որ ոչ լուիցէ Մարգարէին այնմիկ, սատակեսցի ՚ի ժողովրդենէն (Գործ. Գ. 22. 23.)։

90. Այր է գլուխ կնոջ, որպէս և Քրիստոս գլուխ է եկեղեցւոյ (Եփես. Ե. 23.)։

91. Եւ նա (Սիրելին Որդին Հօր ՅՍ ՔՍ) է գլուխ մարմնոյ եկեղեցւոյ (Կողոս. Ա. 18.)։

92.) Կարդա՛ զԵբրայ. Ե. 4—10.)։

93. Են ոմանք՝ որ առանց երդման են կացեալ

քահանայք. բայց սա՝ (Որդին Աստուծոյ), երդմամբ . . երդուաւ Տէր՝ և ոչ եւս զղջասցի, դու ես Քահանայ յաւիտեան։ Եւ այնչափ լաւագոյն ուխտի եղև երաշխաւոր Յս . . . Սա՝ վասն յաւիտեան կելոյ՝ առանց անցանելոյ ունի զքահանայութիւն. ուստի և կենդանի առնել համօրէն կարօղ է՝ զմատուցեալսն նովաւ առ ԱԾ. քանզի միշտ կենդանի է՝ լինել բարեխօս վասն նոցա։ Զի այսպիսի իսկ և վայել էր մեզ Քահանայապետ, սուրբ, անմեղ, անարատ, զատեալ 'ի մեղաւորաց, և բարձրացեալ քան զերկինս.... (որ) զանձն իւր մատոյց պատարագ։ Օրէնքն զմարդիկ կացուցանեն քահանայապետս զգածեալս տկարութբ. իսկ բանն երդման յետ օրինացն՝ զՈրդի որ յաւիտեան կատարեալ է (Եբրայ. Է. 20—28.)։

94.) Զայն խորհեսցի իւրաքանչիւրոք 'ի ձէնջ, որ և 'ի Քս Յս. որ 'ի կերպարանս Այ էր, . . այլ զանձն ունայնացոյց զկերպարանս ծառայի առեալ 'ի նմանութիւն մարդկան եղեալ, և կերպարանօք գտեալ իբրև զմարդ. խոնարհեցոյց զանձն, լինել հնազանդ մահու չափ և մահու խաչի։ Վասն որոյ և ԱԾ զնա առաւել բարձրացոյց (Փիլիպ. Բ. 5—9.)։

95.) Եւ շրջէր Յս ընդ ամ կողմն գալիլեացւոց. ուսուցանէր 'ի ժողովուրդս նոցա՝ եւ քարոզէր զաւետարանն արքայութեան և բժշկէր զամ հիւանդութիւն՝ և զամ ախտս 'ի ժողովրդեանն (Մատթ. Դ. 23.)։

96.) Եւ բացեալ (Յիսուս) զբերան Իւր ուսուցանէր զնոսա (Նոյն. Ե. 2.)։

97.) Առաքեն առ նա (առ Յս՟) զաշակերտսն իւրեանց .. և ասեն. Վարդապետ՝ գիտեմք զի ճշմարիտ ես, և զճանապարհն Աստուծոյ ճշմարտութ՟ ուսուցանես, և ոչ է Քեզ փոյթ զումեքէ, և ոչ հայիս յերեսս մարդոյ (Նոյն. իբ. 16.)։

98.) Եթէ Ես լուացի զոտս ձեր՝ Տէրս և Վարդապետս, և դուք պարտիք զմիմեանց ոտս լուանալ. զի օրինակ մի ետու ձեզ, զի որպէս Ես ձեզ արարի, և դուք առնիջիք (Յովհ. ժգ. 14. 15.)։

99.) Արար (Որդին Աստուծոյ) խաղաղու՟ի արեամբ խաչին իւրոյ, որ ինչ յերկրի՝ և որ ինչ յերկինս (Կողոս. ա. 20.)։

100.) Ամ՟ որ խոստովանեսցի յԻս առաջի մարդկան խոստովանեցից և Ես զնմանէ առաջի Հօր Իմոյ Որ յերկինսն է. և որ ուրասցի զԻս առաջի մարդկան, ուրացայց և Ես զնա առաջի Հօր Իմոյ՝ Որ յերկինս է (Մատթ. ժ. 32. 33.)։

101.) Ես եմ դուռն. ընդ Իս թէ ոք մտանիցէ, կեցցէ. մտցէ, և ելցէ, և ճարակ գտցէ։ Գող ոչ գայ՝ եթէ ոչ զի գողասցի և սպանցէ և կորուսցէ, Ես եկի զի զկեանս ունիցին, և առաւել ևս ունիցին (Յովհ. ժ. 9. 10.)։

102.) Եթէ ոք զԻս պաշտիցէ, զկնի Իմ եկեսցէ. և ուր Ես եմ, անդ և պաշտօնեայն Իմ եղիցի. եթէ ոք զԻս պաշտիցէ, պատուեսցէ զնա Հայրն Իմ (Նոյն. ժբ. 26. Տես և զհամարն 2.)։

103.) Ամենեքեան պատուեսցեն զՈրդի, որպէս պա-

տուեն զՀայրն. որ ոչ պատուէ զՈրդին, ոչ պատուէ զՀայր զառաքիչն Նորա (Յոհ. Ե. 23.)։

104.) Մի է Ած, և մի միջնորդ Աստուծոյ և մարդկան՝ մարդն Յս Քս, որ ետ զանձն փրկանս ընդ ամենեցուն (Ա. Տիմոթ. Բ. 5. 6։ Տես և զհամարս 58. և 83.)։

105.) Մի խռովեսցին սիրտք ձեր. այլ հաւատացէք յԱստուած, և յԻս հաւատացէք (Յովհ. ԺԴ. 1.),

106.) Քանզի ՚ի նոյն իսկ և Քրիստոս մեռաւ՝ և եկեաց, զի մեռելոց և կենդանեաց առ հասարակ տիրեսցէ (Հռովմ. ԺԴ. 9.)։

107.) Պարտ իսկ էր Նմա ամի եղբարց նմանել. զի ողորմած լինիցի, և հաւատարիմ Քահանայապետ յԱծակոյս կողմանէ անտի, առ ՚ի քաւելոյ զմեղս ժողովրդեանն (Եբրայ. Բ. 17.)։

108) Որ ունի զպատուիրանս Իմ՝ և պահէ զնոսա, նա է որ սիրէ զԻս. և որ սիրէն զԻս՝ սիրեսցի ՚ի Հօրէ Իմմէ. և Ես սիրեցից զնա, և երևեցուցից նմա զԻս. . . Եթէ ոք սիրէ զԻս՝ զբանն Իմ պահեսցէ, և Հայր Իմ սիրեսցէ զնա. և առ նա եկեսցուք, և օթևանս առ նմա արասցուք. և որ ոչն սիրէ զԻս՝ զբանս Իմ ոչ պահէ (Յովհ. ԺԴ. 21—24.)։

109.) Այս է պատուէր Իմ, զի սիրեսջիք զմիմեանս որպէս և Ես սիրեցի զձեզ. մեծ ևս՝ քան զայս սէր՝ ոչ ոք ունիցի, եթէ զանձն իւր դիցէ ՚ի վերայ բարեկամաց իւրոց։ Դուք բարեկամք

էք Իմ, եթէ առնիցէք զոր Ես պատուիրեմ ձեզ (Յովհ. ԺԵ. 12—14.)։

110.) Ամենայն որ հաւատայ՝ եթէ Յիսուս է Քրիստոս յԱստուծոյ է ծնեալ. և ամ որ սիրէ զծնօղն սիրէ և զծնեալն 'ի նմանէ. այսուիկ ճանաչեմք՝ եթէ սիրեմք զՈրդիսն Այ, յորժամ զԱծ սիրեսցուք՝ և զպատուիրանս Նորա արասցուք (Ա. Յովհ. Ե. 1. 2.)։

111.) Եթէ ոք ոչ սիրէ զՏէր Յիսուս, եղիցի նզովեալ, մարանաթա (Ա. Կորնթ. ԺԶ. 22.)։

112.) Քրիստոս վասն ձեր մեռաւ, և ձեզ եթող օրինակ՝ զի զհետ երթիցէք հետոց Նորա (Ա. Պետր. Բ. 21.)։

113.) Զգեցարուք զՏէր Յիսուս Քրիստոս. և մարմնոյ խնամ մի տանիք 'ի ցանկութ (Հռովմ. ԺԳ. 14. Տես և զհամարն՝ 98.)։

114.) Եւ մինչդեռ նա խօսէր, ահա ամպ լուսաւոր հովանի եղև 'ի վերայ նոցա։ Ձայն եղև յամպոյն՝ և ասէ. Դա է Որդի Իմ Սիրելի ընդ Որ հաճեցայ, Դմա լուարուք (Մատթ. ԺԷ. 5.)։

115.) Եթէ պահիցէք զպատուիրանս Իմ, կացջիք 'ի սէր Իմ. որպէս Ես զպատուիրանս Հօր Իմոյ պահեցի, և կամ 'ի սէր Նորա (Յովհ. ԺԵ. 10. Տես և զհամարն՝ 108.)։

116.) Ամէն ասեմ ձեզ, զի բազում մարգարէք և արդարք ցանկացան տեսանել զՈր տեսանէքդ և ոչ տեսին, և լսել զոր լսէքդ՝ և ոչ լուան (Մատթ. ԺԳ. 17.)։

117.) Բայց վասն աւուրն այնորիկ և ժամու, ոչ ոք

գիտէ. ո՛չ հրեշտակք երկնից, և ո՛չ Որդի՝ բայց միայն Հայր (Մատթ. Իդ. 36.)։

118.) Եւ նորա (Սիմէոնի ծերունւոյ) հրաման առեալ էր 'ի Հոգւոյն Սրբոյ՝ մի՛ տեսանել զմահ, մինչև տեսցէ զՕծեալն Տեառն. և եկն Հոգւովն 'ի տաճարն։ Եւ իբրև ածին ծնողքն զմանուկն Յիսուս.. նա՝ ա՛ռ ընկալաւ զՆա 'ի գիրկս իւր, և օրհնեաց զԱ՟Ծ, և ասէ. արդ՝ արձակեա զծառայս քո Տէր ըստ բանի քում 'ի խաղաղութ՟ի. զի տեսին աչք իմ զփրկութ՟ի քո. զոր պատրաստեցեր առաջի ա՟մ ժողովրդոց (Ղուկաս. Բ. 26=31.)։

119.) Ո՞չ գիտէք եթէ տաճար էք Ա՟Յ, և Հոգի Ա՟Յ բնակեալ է 'ի ձեզ (Ա. Կորնթ. Գ. 16.)։

120.) Թէպէտ և բաժինք շնորհաց են՝ այլ Հոգի նոյն է. եթէ բաժինք պաշտամանց են՝ այլ Տէր նոյն է. եթէ բաժինք յաջողութ՟եց են՝ այլ Ա՟Ծ նոյն է՝ որ աջողէ զա՟մ յա՟մի։ Բայց իւրաքանչիւր ումեք տուեալ է յայտնութ՟ի Հոգւոյն՝ առ իւրաքանչիւր օգուտ (Կորն. ԺԲ. 4=7.)։

121.) Զայս ա՟մ աջողէ մի և նոյն Հոգի, և բաժանէ իւրաքանչիւր որպէս և կամի (Կորն. ԺԲ. 11.)։

122.) Այլ մեզ յայտնեաց Ա՟Ծ Հոգւովն իւրով, զի Հոգին զա՟մ քննէ՝ և զխորս Ա՟Յ (Կորն. Բ. 10.)։

123.) Յո՞ երթայց ես յՈգւոյ քումմէ, և կամ յերեսաց քոց ես յո՞ փախեայց։ Թէ ելանեմ յերկինս՝ դու անդ ես, և թէ իջանեմ 'ի դժոխս՝ և անդր մօտ ես (Սաղմ. ՃԼԸ. 7. 8.(։

124.) Քննէին յորում և յորպիսի ժամանակի գու-
շակէր 'ի նոսա Հոգին Քս՟ի, որ նախ չար-
չարանացն Քս՟ի վկայէր, և յետ այնորիկ՝ ըղ-
փառացն (Ա. Պետր. Ա. 11.)։

125.) Եւ երկիր էր աներևոյթ և անպատրաստ, և
խաւար 'ի վերայ անդնդոց. և Հոգի Ա՟յ շըր-
ջէր 'ի վերայ ջուրց (Ծննդ. Ա. 2.)։

126.) Հոգի Ա՟ծեղէն է որ արար զիս՝ և շունչ Ա-
մենակալի է որ ուսուցանէ զիս (Յովբ. ԼԳ.
4.)։

127.) Առաքես զՀոգի քո և ստանաս զնոսա, և նորո-
գես զերեսս երկրի (Սաղմ. ՃԳ. 30.)։

128.) Ապա եթէ Հոգւով Ա՟յ հանեմ Ես զդևս,
ուրեմն հասեալ է 'ի վերայ ձեր Արքայութիւն
Ա՟յ (Մատթ. ԺԲ. 28.)։

129.) Պատասխանի ետ Հրեշտակն և ասէ ցնա. Հո-
գի Սուրբ եկեսցէ 'ի քեզ, և Զօրութիւն
Բարձրելոյ հովանի լիցի 'ի վերայ քո (Ղուկ.
Ա. 35.)։

130.) Մատերուք առ իս՝ և լուարուք զայս, ոչ 'ի
սկզբանէ 'ի ծածուկ ինչ խօսեցայ, և ոչ 'ի
տեղւոջ խաւարին երկրի. յորժամ լինէրն իսկ՝
ես անդ էի։ Եւ արդ՝ Տէր Տէր առաքեաց
զիս, և Հոգի նորա (Եսայ. ԽԸ. 16.)։

131.) Զ՟Յս որ 'ի Նազարեթէ, զոր Օծն Ա՟Ծ
Հոգւով Սրբով և Զօրութեամբ (Գործ. Ժ.
38.)։

132.) Ոչ եթէ դուք իցէք որ խօսեցիքն, այլ Հո-
գին Հօր ձերոյ Որ խօսիցի 'ի ձեզ (Մատթ.
Ժ. 20.)։

133.) Զգո՛յշ կացէ՛ք անձանց և ամ հօտին, յորում եդ զձեզ Հոգին Սուրբ տեսուչս՝ հովուել ըղ-ժողովուրդս Տեառն (Գործ. Ի. 28.)։

134.) Պատասխանի ետ Յս՝ և ասէ. ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի 'ի ջրո՛յ և 'ի Հոգւո՛յ, ոչ կարէ մտանել յԱրքայութիւն Այ (Յովհ. Գ. 5.)։

135.) Մխիթարիչն Հոգին Սուրբ՝ զՈր առաքեսցէ Հայր յանուն Իմ, Նա՛ ուսուսցէ ձեզ զամ, որ ինչ ասացի ձեզ, և յիշեցուսցէ ձեզ (Նոյն. ԺԴ. 26։ Տես և զհամարն 119.)։

136.) Աղաղակէին մի առ մի՝ և ասէին. Սո՛ւրբ. Սո՛ւրբ. Սո՛ւրբ. Տէր զօրութեանց՝ լի է ամ երկիր փառօք նորա (Եսայ. Զ. 3.)։

137.) Մի՛ տրտմեցուցանէք զՀոգին Սուրբ Այ, որով կնքեցարուք յաւուրն փրկութեան (Եփես. Դ. 30։ Տես և զհամարն 77.)։

138.) Յորժամ եկեսցէ Մխիթարիչն, զՈր Ես առաքեցից ձեզ 'ի Հօրէ, զՀոգին ճշմարտութեան Որ 'ի Հօրէ ելանէ, Նա՛ վկայեսցէ վասն Իմ (Յովհ. ԺԵ. 26.)։

139.) Եցո՛յց մեզ զխորհուրդս կամաց իւրոց, ըստ հաճութեան իւրում (Եփես. Ա. 9.)։

140.) Եւ ասաց ԱԾ, արասցո՛ւք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան ... և արար ԱԾ զմարդն 'ի պատկեր իւր. ըստ պատկերի Այ արար զնա. արու և էգ արար զնոսա (Ծննդ. Ա. 26. 27.)։

141.) Եւ ստեղծ Տէր Աստուած զմարդն հող յերկրէ. և փչեաց յերեսս նորա շունչ կենդա-

նի, և եղև մարդն յոգի կենդանի (Ծն. Բ. 7.)։

142.) Ա՟ծ հաստատեաց զմարդն յանեղծութե, և 'ի պատկեր իւրոյ բարերարութեն արար զնա (Իմաստ. Բ. 23.)։

143.) Զլեզու մարդկան ոչ ոք կարէ հնազանդել. զչարն և զանկարգն՝ և զլի թունոք մահաբերին. Նովաւ օրհնեմք զՏէրն և զՀայր, և նովաւ անիծանեմք զմարդիկ որ ըստ նմանութե Ա՟յ արարան (Յակոբ. Գ. 8. 9.)։

144.) Ա՟մ՝ որ յԱ՟յ է ծնեալ՝ մեղս ոչ առնէ, զի սերմն նորա 'ի նմա մնայ. և ոչ կարէ մեղանչել. զի յԱ՟յ է ծնեալ. Ա՟յսուիկ յայտնի են 'ի միմեանց որդիք Ա՟յ՝ և որդիք սատանայի (Ա. Յովհ. Գ. 9. 10.)։

145.) Ա՟րդ՝ եղերուք դուք կատարեալք, որպէս և Հայրն ձեր Երկնաւոր կատարեալ է (Մատթ. Ե. 48.)։

146.) Ընթերցիր զՄատթ. Գ. 'ի 24=ց34.)։

147.) Կարդա Ծըն. Ժ. 'ի 28=ց31.)։

148.) Տես և 'ի միտ առ զԳործ. ԺԶ. 'ի 14=ց16.)։

149.) Զամ հոգս ձեր ընկեցէք 'ի նա, զի նա է որ հոգայ վասն ձեր (Ա. Պետր. Ե. 7.)։

150.) Գիտեմք՝ եթէ որոց սիրեն զԱ՟ծ, յամ գործակից լինի 'ի բարիս՝ որք Հրաւիրանաւն կոչեցան (Հռովմ. Ը. 28.)։

151.) Զի այս է բարի և ընդունելի առաջի Փրկչին մերոյ Ա՟յ. որ զամ մարդիկ կամի զի կեցցեն՝ և 'ի գիտութի ճշմարտութե եկեսցեն (Ա. Տիմոթ. Բ. 3. 4.)։

152.) Ունիմք զփրկութի՛ւն ՚ի ձեռն արեան նորա, զթողութի՛ւն մեղաց ըստ մեծութե՛ան շնորհաց իւրոց (Եփես. ա. 7.)։

153.) Իւրաքանչիւր ումեք ՚ի մէնջ տուեալ են շնորհք ըստ չափոյ պարգևացն Քրիստոսի (Եփես. դ. 7.)։

154.) Փարիսեցիքն և օրինականքն զխորհուրդս Աստուծոյ անարգեցին յանձինս իւրեանց, զի ոչ մկրտեցան ՚ի նմանէ (Ղուկ. է. 30.)։

155.) Ինքն Տէր մեր Յիսուս Քրիստոս, և Աստուած Հայր մեր, որ սիրեացն զմեզ, և ետ մեզ մխիթարութիւն յաւիտենից՝ և յոյս բարեաց շնորհօք, մխիթարեսցէ զսիրտս ձեր, և հաստատեսցէ յամ բանս և ՚ի գործս բարութեան (Բ. Թեսաղ. Բ. 15. 16.)։

156.) Կին ոմն անուն Լիդիա ծիրանավաճառ՝ ՚ի Թիւատիր քաղաքէ՝ երկիւղած յԱստուծոյ՝ լուաւ, զորոյ Տէր իսկ եբաց զսիրտն անսալ խօսիցն Պաւղոսի (Գործ. ժզ. 14.)։

157.) Ընթերցի՛ր զՅովհ. գ. ՚ի 44=ց47.)։

158.) Աստուած ամ շնորհաց, որ կոչեաց զձեզ յիւր ՚ի յաւիտենական ՚ի փառսն Քրիստոսի Յիսուսի .., Նա կազդուրեցուսցէ, կարողացուսցէ, հաստահիմն արասցէ (Ա. Պետր. Ե. 10.)։

159.) Եւ Ես՝ քեզ ասեմ. զի դու ես վէմ, և ՚ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, և դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն (Մատթ. ժզ. 18.)։

160.) Իսկ և թէ նոցա ոչ լուիցէ, ասասջի՛ր յեկեղեցւոջ. ապա թէ և եկեղեցւոյն ոչ լուիցէ,

եղիցի քեզ իբրեւ զհեթանոսն եւ զմաքսաւոր (Մտթ. ժը. 17.)։

161.) Եւ եղեւ յաւուր յայնմիկ հալածումն մեծ ՚ի վերայ եկեղեցւոյն յԵրուսաղէմ ... բայց Սաւղոս վնասակար էր եկեղեցւոյն. ՚ի տունս տունս մտանէր, քարշեալ զարս եւ զկանայս՝ մատնէր ՚ի բանտ (Գործ. Ը. 1. 3.)։

162.) Ընթերցցիր ա. Կորնթ. ժդ. ՚ի 4=ց35.):

163.) Յորժամ ՚ի մի վայր ժողովիցիք յեկեղեցին, լսեմ եթէ հերձուածք գոն ՚ի ձեզ (ա. Կորնթ. ժա. 18.)։

164.) Եւ այլ եւս ոչխարք են Իմ, որ ոչ են յայսմ գաւթէ. եւ զայնս եւս պարտ է Ինձ ածել այսր (Յովհ. ժ. 16.)։

165.) Զայս՝ ոչ յանձնէ ինչ ասաց. այլ քանզի քահանայապետ էր տարւոյն այնորիկ, մարգարէացաւ՝ եթէ մեռանելոց էր Յս ՚ի վերայ ազգին, եւ ոչ ՚ի վերայ ազգին միայն, այլ զի եւ զորդիսն Այ զցրուեալսն՝ ժողովեսցէ ՚ի մի (Յովհ. ժա. 51. 52.)։

166.) Եւ Ես՝ ոչ եւ'ս եմ յաշխարհի, եւ նոքա յաշխարհի են, եւ Ես՝ առ Քեզ գամ, Հայր սուրբ պահեա զնոսա յանուն Քո, որով ետուր Ինձ. զի եղիցին մի, որպէս եւ Մեք մի եմք (Յովհ. ժէ. 11. Կարդա եւ զ21. 22. 23.)։

167.) Զնա սրբեսցէ սրբուե̃ աւազանին բանիւ. զի կացուսցէ ինքն իւր յանդիման փառաւոր զեկեղեցի, զի մի ունիցի ինչ արատ, կամ աղտեղուե̃, կամ այլ ինչ յայսպիսեաց. այլ զի

իցէ սուրբ և անարատ (Եփես. Ե. 26. 27.)։

168.) Եթէ ոք զտաճար Ա՟յ ապականէ, ապականեսցէ զնա Ա՟ծ. զի տաճար Ա՟յ սուրբ է, որ էք դուք (Ա. Կորնթ. Գ. 17.)։

169.) Ասեմ ձեզ, զի բազումք յարևելից և յարևմտից եկեսցեն՝ և բազմեսցին ընդ Աբրահամու՝ և ընդ Իսահակայ՝ և ընդ Յակոբու յԱրքայութեան երկնից (Մատթ. Ը. 11.)։

170.) Կարդա Յովհ. Ժդ. 31. Ժը. 19. 20. Մարկ. ԺԶ. 15.)։

171.) Այսուհետև ոչ էք օտարք և պանդուխտք, այլ քաղաքակիցք սրբոց, և ընտանիք Ա՟յ. շինեալք ՚ի վերայ հիման առաքելոց և մարգարէից. որոյ է գլուխ անկեանն Յ՟ս Ք՟ս (Եփես. Բ. 19. 20.)։

172.) Քարոզել յանուն նորա ապաշխարութիւն և թողութիւն մեղաց յամ՟ ազգս՝ սկսեալ յԵրուսաղեմէ (Ղուկ. Իդ. 47.)։

173.) Եդին ելանել Պաւղոսի և Բառնաբայ և ոմանց ՚ի նոցանէ՝ առ առաքեալսն և երիցունս յԵրուսաղէմ վասն խնդրոյն այնորիկ (Գործ. ԺԵ. 2.)։

174.) Կարդա զժողովն. ԺԵ. ՚ի 19=ց28.)։

175.) Կամիմ զի գիտիցէք դուք. եթէ առն ամ՟ն գլուխ Քրիստոս է (Ա. Կորնթ. ԺԱ. 3.)։

176.) Զամ՟ ինչ հնազանդ արար ՚ի ներքոյ ոտից նորա (Տեառն Յ՟սի). և զնա ետ գլուխ ՚ի վերայ ամ՟ իրիք եկեղեցւոյ (Եփես. Ա. 22.)։

177.) Այր է գլուխ կնոջ, որպէս և Ք՟ս գլուխ եկեղեցւոյ (Եփես. Ե. 23.)։

178.) Եւ նա (Յիսուս Քրիստոս) է գլուխ մարմնոյ եկեղեցւոյ (Կողոս. ա. 18.)։

179.) Ո՛չ ունիցի զգլուխն Քրիստոս, ուստի ամենայն մարմինն յօդիւք և խաղալեօք տարաբերեալ և խառնեալ՝ աճէ զաճումն Աստուծոյ (Նոյն. բ. 19.)։

180.) Նա ետ զոմանս առաքեալս, զոմանս մարգարէս, զոմանս աւետարանիչս, զոմանս հովիւս և վարդապետս (Եփես. դ. 11.)։

181.) Զորս եդն Աստուած յեկեղեցւոջ՝ այս են. նախ զառաքեալս, երկրորդ զմարգարէս, երրորդ զվարդապետս, .... Մի թէ ամենեքին առաքեալք իցեն, մի թէ ամենեքին մարգարէք իցեն, մի թէ ամենեքին վարդապետք իցեն, մի թէ ամենեքին շնորհս բժշկութեան ունիցին, մի թէ ամենեքին ի լեզուս խօսեսցին, մի թէ ամենեքին թարգմանիցեն (ա. Կորնթ. ժբ. 28. 29. 30.)։

182.) Ասէ ցնոսա դարձեալ՝ ողջոյն ընդ ձեզ, որպէս առաքեաց զիս Հայր իմ, և ե՛ս առաքեմ զձեզ. և զայս իբրև ասաց, փչեաց ի նոսա՝ և ասէ. առէք Հոգի Սուրբ. եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի նոցա. եթէ զուրուք՝ ունիցիք, կալեալ լիցի (Յովհ. ի. 21=23.)։

183.) Կարդա՛ զՄատթ. ժը. ի 16=ց20.)։

134.) Զի դու զգիտութիւն մերժեցեր, մերժեցից և ես զքեզ, զի մի՛ քահանայանայցես ինձ (Ովսէ. դ. 6.)։

185.) Վա՛յ ձեզ՝ առաջնորդք կոյրք (Մատթ. իգ. 16.)։

186. Ա՜յ է ինձ՝ թէ ոչ աւետարանեմ (Ա. Կորնթ. Թ. 16.)։

187.) Նոքա գինւով մոլորեալ են, մոլորեցան վ̃ն ցքւոյն. քահանայն և մարգարէ յիմարեցան վասն ցքւոյ, ընկղմեցան վասն գինւոյ. դանդաչեցին յարբեցուէ̃ ցքւոյն. մոլորեցան՝ զի այն ինքն է յիմարուի̃ (Եսայ. ԻԸ. 7.)։

188.) Յորժամ ասիցեմ ցանօրէնն, թէ մահու մեռանիցիս. և դու ոչ զգուշացուցանիցես նմա, և ոչ խօսեսցիս զգուշանալ անօրինին, և դառնալ 'ի չար ճանապարհաց իւրոց և կեալ. անօրէնն այն յանօրէնութե̃ն իւրում մեռցի, և զարիւն նորա 'ի ձեռաց քոց խնդրեցից .... Եւ յորժամ դարձցի արդարն յարդարութե̃ց իւրոց՝ և արասցէ յանցանս, արկից տանջանս զգլխով նորա .. բայց քանզի դու ոչ զգուշացուցեր նմա՝ զարիւն նորա 'ի ձեռաց քոց խնդրեցից (Եզեկ. Գ. 18. 20։ Կարդա և ԼԳ. յ1=ց12, և ԼԴ. յ1=ց10.)։

189.) Ընթերցի՛ր զՅովհ. Ժ. յ1=ց7.)։

190.) Կարդա՛ զբոլոր երկրորդ թուղթն առ Տիմոթէոս, և զթուղթն առ Տիտոս.)։

191.) Նոքեանք նախ փորձեսցին, և ապա 'ի պաշտօն մատիցեն, զի անարատք իցեն (Ա. Տիմոթ. Գ. 10.)։

192.) Կարդա և զՏիտոս. Ա. 6. 7. 8.)։

193.) Ո՛չ եթէ զանձինս քարոզեմք, այլ զՔ̃ս Յ̃ս զՏէր, և զմեզ ծառայս ձեզ վասն Քսի̃ (Բ. Կորնթ. Դ. 5.)։

194.) Ընթերցի՛ր և զԳործ. Ա. 15=26. և Գ. 2=8.)։

195.) Կարդա ՚ի վերոյ զհամարն 191.)։

196.) Զձեռս վաղվաղակի յուրուք վերայ մի դնիցես, և մի կցորդ լինիցիս մեղաց օտարաց (Ա. Տիմոթ. Ե. 22.)։

197.) Ընթերցիր՝ Եփես. Դ. 12։ Գործ. ԺԴ. 2. 3.

198.) Դուք էք աղ երկրի. եթէ աղն անհամի՝ ի՞ւ յաղիցի. ոչ իմիք աղդիցէ այնուհետև, բայց եթէ ընկենուլ արտաքս՝ և կոխան լինել ՚ի մարդկանէ։ Դուք էք լոյս աշխարհի. ոչ կարէ քաղաք թաքչիլ՝ որ ՚ի վերայ լերին կայցէ. և ոչ լուցանեն ճրագ՝ և դնեն ընդ գրուանաւ, այլ ՚ի վերայ աշտանակի։ և լոյս տայ ամենեցուն՝ որ ՚ի տանն իցեն. այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է (Մատթ. Ե. 13=16.)։

199.) Այսպէս համարեսցին զմեզ մարդիկ, իբրև զպաշտօնեայս Քսի՝ և հազարապետս խորհրդոցն Այ (Ա. Կորնթ. Դ. 1.)։

200.) Ես ընկալայ ՚ի Տեառնէ, զոր և ձեզն աւանդեցի, եթէ Տէր Յս ՚ի գիշերին յորում մատնէր, առ հաց՝ գոհացաւ՝ եբեկ և ասէ. այս է իմ մարմին որ վասն ձեր. զայս արարէք առ իմոյ յիշատակի, ևն (Ա. Կոր. ԺԱ. 23. 24.)։

201.) Քննեցէք զգիրս. զի դուք համարիք նոքօք ունել զկեանսն յաւիտենականս (Յովհ. Ե. 39.)։

202.) Պատասխանի ետ նոցա Յս՝ և ասէ. մոլորիք՝ ոչ գիտէք զգիրս և ոչ զզօրութիւն Այ (Մատթ. ԻԲ. 29.)։

203.) Սոքա (Բերիացի հրէայք) էին ազնուագոյնք՝ քան որ ՚ի Թեսաղոնիկն էին. որք ընկալան զբանն ամ̃ յօժարութ̃. հանապազ քննէին զգիրս՝ եթէ իցէ՞ այս այսպէս (Գործ. ԺԷ. 11.)։

204.) Ո՛չ եթէ այլ ազգ ինչ գրեմք առ ձեզ, այլ զոր ընթեռնուցուք՝ և գիտակ լինիցիք. քանզի յուսամ թէ մինչև ՚ի վախճան գիտիցէք (Բ. Կորնթ. Ա. 13.)։

205.) Բայց որ ինչ գրեցաւն, ՚ի մե՛ր վարդապետութի̃ գրեցաւ, զի համբերութ̃ և մխիթարութ̃ գրոց զյոյս ընկալցուք (Հռովմ. ԺԵ. 4.)։

206.) Ասէ ցնոսա պետրոս. ապաշխարեցէք և մկրտեսցի իւրաքանչիւր ոք ՚ի ձէնջ յանուն Տեառն Յս̃ի Քս̃ի ՚ի թողութի̃ մեղաց, և ընկալջիք զպարգեւս Հոգւոյն Սրբոյ։ Ոմանք յօժարութ̃ ընկալեալ զբան նորա՝ մկրտեցան. և յաւելան յաւուր յայնմիկ հոգիք իբրև երեք հազարք (Գործ. Բ. 28. 41. Տես և զհամարն՝ 183.)։

207.) Որք միանգամ ՚ի Քս̃ մկրտեցարուք. զՔս̃ զգեցեալ էք ... և. ամենեքեան դուք մի էք ՚ի Քս̃ Յս̃ (Գաղատ. Գ. 27. 28.)։

208.) Տես զհամարն՝ 134.)։

209.) Մկրտեալք էին յանուն Տեառն Յս̃ի. յայնժամ եդին զձեռս ՚ի վերայ նոցա՝ և առնուին Հոգի սուրբ (Գործ. Ը. 16. 17.)։

210.) Եւ դուք օծութի̃ն զոր ընկալարուք ՚ի նմանէ, բնակեսցէ ՚ի ձեզ. և չէ ինչ պիտոյ՝ եթէ ոք զձեզ ուսուսցէ, այլ որպէս զի նորա օծութի̃ն ուսուցանիցէ զձեզ վասն ամ̃ի (Ա. Յովհ. Բ. 27.)։

211.) Որ հաստատեաց զմեզ ձեօք հանդերձ 'ի Քրիստոս, և օծ զմեզ, Աստուած է. որ և կնքեաց զմեզ և ետ զառհաւատչեայ Հոգւոյն 'ի սիրտս մեր (Բ. Կորնթ. Ա. 21. 22.)։

212.) Կարդա՛ զհամարն՝ 182.)։

213.) Մկրտէին 'ի նմանէ 'ի Յորդանան գետ, և խոստովան լինէին զմեղս իւրեանց (Մատթ. Գ. 6.)։

214.) Արդ՝ վասն Քրիստոսի պատգամաւորիմք որպէս և Աստուծոյ բարեխօսութեամբ մերով. աղաչեմք վասն Քրիստոսի հաշտեցարուք ընդ Աստուծոյ (Բ. Կորնթ. Ե. 20, Կարդա՛ և Գործ. ԺԹ. 13.)։

215.) Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ (Սաղմ. Ծ. 5.)։

216.) Եւ լուեալ զայս՝ զղջացան 'ի սիրտս իւրեանց, և ասեն ցՊետրոս և ցայլ առաքեալսն, զի՞նչ գործեսցուք արք եղբարք (Գործ. Բ. 37.)։

217.) Զմեղս իմ ցուցից քեզ, և զանօրէնութիւնս իմ ո՛չ ծածկեցից 'ի քէն. ասացի թէ պատմեցից ինձէն զմեղս իմ, և դու թողցես զամենայն ամբարշտութիւնս մեղաց իմոց (Սաղմ. ԼԱ. 5. Ընթերցիր և Ա. Յովհ. Ա. 9.)։

218.) Աշխատեցի ես 'ի հեծութեան իմում, լուացի զամենայն գիշեր զմահիճս իմ, և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի (Սաղմ. Զ. 7. 'Ի միտ առ և Մատթ. ԻԶ. 75.)։

219.) Հաւատացին արք Նինուէացիք յԱստուած, և քարոզեցին պահս՝ և զգեցան քուրձ 'ի մեծամեծաց մինչև ցփոքունս իւրեանց։ Եհաս բանն առ թագաւորն Նինուէացւոց. յարեաւ յաթոռոյ իւր-

մէ՝ և մերկացաւ զպատմուճան իւր. զգեցաւ քուրձ՝ և նստաւ ՚ի վերայ մոխրոյ (Յովնան. Գ. 5. 6.)։

220.) Մաքսաւորն կայր մեկուսի, և ոչ կամէր՝ և ոչ զաչս ընդ երկինս ամբառնալ, այլ կոծէր զկուրծս իւր՝ և ասէր. Ա՟ծ՝ քաւեա զիս ըզ-մեղաւորս (Ղուկաս. ԺԸ. 13.)։

221.) Նա պատառեաց զհանդերձս իւր, և քուրձ զգեցաւ ՚ի վերայ միջոյ իւրոյ, և սուգ ունէր ՚ի վերայ որդւոյն իւրոյ աւուրս բազումս (Ծննդ. ԼԷ. 34. Կարդա և Յովէլ Բ. 13.)։

222.) Յաւուրսն յայնոսիկ ես Դանիէլ էի ՚ի սուգ երիս եօթներորդս աւուրց. հաց ցանկութե՟ ոչ կերայ, և միս և գինի ոչ եմուտ ՚ի բերան իմ, և իւղով ոչ օծայ, մինչև ՚ի կատարել երից եօթներորդաց աւուրց (Դանիէլ. Ժ. 3. Ընթերցիր և զհամարն՝ 219.)։

223.) Նկն՝ եկաց Զաքէոս՝ և ասէ ցՏէր. Տէր ահա զկէս ընչից իմոց տամ աղքատաց. և եթէ զոք զրկեցի, հատուցից չորեքկին (Ղուկաս. ԺԹ. Ը.)։

224.) Ա՟ծ դատաւոր արդար հզօր և երկայնամիտ. որ ոչ ածէ զբարկութի՟ իւր զօրհանապազ. Ապա թէ ոչ դառնայք առ նա՝ զսուր իւր սրե՟լ է՝ և զաղեղն իւր լարեալ (Սաղմ. Է. 12. 13.)։

225.) Թողցէ ամպարիշտն զճանապարհս իւր, և այր անօրէն զխորհուրդս իւր. և դարձցի առ Տէր և գտցէ զողորմութի՟ (Եսայ. ԾԵ. 7.)։

226.) Այսպէս ասէ Տէր Ամենակալ. դարձարուք առ իս՝ ասէ Տէր Զօրութեանց. և դար-

ձայց առ ձեզ՝ ասէ Տէր Զօրութեանց (Զաքար. Ա. 3.)։

227.) Արդ՝ ապաշխարեցէք և դարձարուք ՚ի ջնջել զմեղս ձեր (Գործ. Գ. 19։ Կարդա և Մատթ. Ե. 29. 30. ԺԸ. 6=10. Ղուկաս. ԺԵ. 14=18.)։

228.) Մերձեցարուք առ Ա՟Ծ, և մերձեսցի առ ձեզ. սրբեցէք զձեռս մե՛ղաւորք, և ուղիղ արարէք զսիրտս՝ երկմիտք. տառապեցարուք, սգացարուք, և լացէք. ծաղր ձեր ՚ի սուգ դարձցի, և ուրախութիւն ձեր ՚ի տրտմութիւն. խոնարհեցարուք առաջի Տեառն՝ և բարձրացուսցէ ըզձեզ (Յակոբ. Դ. 8. 9. 10.)։

229.) Այնպէս սիրեաց Ա՟Ծ զաշխարհ մինչև զՈրդին իւր Միածին ետ. զի ա՟մ որ հաւատայ ՚ի Նա՝ մի կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս (Յովհ. Գ. 16։ Տես և զհամարն՝ 42.)։

230.) Նմա (Յ՟սի Որդւոյն Ա՟յ) ա՟մ մարգարէքն վկայեն, թողութիւն մեղաց առնուլ անուամբ նորա ա՟մ հաւատացելոց ՚ի Նա (Գործ. Ժ. 43։ Ընթերցիր՝ և ԺԳ. 31. ԻԶ 15. 16. 17. 18.)։

231.) Որդեակք իմ, զայս գրեմ ձեզ՝ զի մի մեղիցէք. և եթէ մեղիցէ ոք, ունիմք բարեխօս առ Ա՟Ծ զՅ՟ս Ք՟ս՝ զարդարն և զանարատ. և նա է քաւութիւն մեղաց մերոց. և ոչ եթէ մերոցն միայն՝ այլ ա՟մ աշխարհի (Ա. Յովհ. Բ. 1. 2։ Տես և զհամարն՝ 110.)։

232.) Կենդանի եմ այսուհետև, ոչ ես՝ այլ կենդանի է յիս Ք՟ս. Այլ որ այժմս կեամ մարմնով, հաւատովք Որդւոյն Ա՟յ կեամ. որ սի-

րեացն զիս, և մատնեաց զանձն վասն իմ. և ես ոչ անարգեմ զշնորհսն Այ (Գաղատ. Բ. 20. Կարդա և Գ. 11.=27. Հռովմ. Գ. 25. Ե. 17. Կողոս. Բ. 6.).

233.) Մինչդեռ ուտէին նոքա, առ Յս հաց՝ օրհնեաց և եբեկ, և ետ աշակերտացն՝ և ասէ առէք կերայք՝ այս է մարմին Իմ։ Եւ առեալ բաժակ գոհացաւ՝ ետ նոցա՝ և ասէ, արբէք 'ի դմանէ ամենեքին. զի այդ է արիւն Իմ նորոյ ուխտի, որ 'ի վերայ բազմաց հեղու 'ի թողութիւն մեղաց (Մատթ. Իզ. 26. 27. 28. Կարդա և Մարկ. ԺԴ. 22. 23. 24. Ղուկ. ԻԲ. 19. 20.

234.) Ընթերցիր զՅովհ. Զ. 'ի 52=ց64.).

235.) Կալջ 'ի մտի առ Ա. Կորնթ. ԺԱ. 24=ց32.).

236.) Կարդա Մատթ. Ե. 23. 24.).

237.) Տես զհամարն՝ 234.

238.) Ձեռնադրեցին նոցա ըստ եկեղեցեաց երիցունս, աղօթս արարեալ հանդերձ պահովք՝ յանձն արարին զնոսա Տն՝ յոր հաւատացեալ էին (Գործ. ԺԴ. 22. Կարդա և Սաղմ. Ճ՛Թ. 4.).

239.) Շրթունք քահանային զգուշասցին գիտուե. և օրէնս խնդրեսցեն 'ի բերանոյ նորա. զի հրեշտակ Տեառն Ամենակալի է (Մաղաք. Բ. 7.):

240.) Վստահ ես յանձն քո Առաջնորդ [illegible] լինել կուրաց, լոյս խաւարելոց, խրատիչ անզգամաց, վարդապետ տղայոց. ունել զկերպարանս գիտութեան և ճշմարտութե. Իսկ արդ՝

որ ուսուցանես զընկերն, զանձն քո ոչ ուսու-
ցանես. որ քարոզես չգողանալ՝ գողանաս. որ
ասես չշնալ՝ շնաս. . որ օրինօքն պարծիս, յան-
ցանել ընդ օրէնսն զԱ՛ծ անարգես. Զի անուն Ա՛յ
վասն ձեր հայհոյի 'ի մէջ հեթանոսաց (Հռ-
ովմ. Բ. 19. 20. 21. 22. 23. 24. Ընթեր-
ցիր և Ովսէ. Դ. 8. Եզեկ. Գ. 17. Տես և զՀա-
մարն՝ 188.)

241. Վասն այսորիկ թողցէ այր զհայր և զմայր իւր,
և երթիցէ զհետ կնոջ իւրոյ և եղիցին երկո-
քին մարմին մի. Խորհուրդս այս մեծ է, բայց
ես ասեմ իսկ 'ի Ք՛ս և յԵկեղեցի (Եփես. Ե.
31. 32.)։

242.) Ամենայն տուն կազմի յումեքէ. կազմիչն որ զա-
մենայն արար, Ա՛ծ է (Եբրայ. Գ. 4.)։

243.) Եւ ելեալ քարոզէին՝ զի ապաշխարեսցեն. և
դև՛ս բազումս հանէին՝ և օծանէին իւղով զբ-
բազում հիւանդս, և բժշկէին զնոսա (Մարկ.
Զ. 12. 13.)։

244.) Կարդա Յակոբ. Ե. 13. 14. 15.)

245.) 'Ի բաց թօթափեալ զամենայն աղտեղութիւն
և զյաւելուածս չարեաց, հեզութեամբ ընդու-
նիջիք զբանն ընդաբոյս, որ կարող է կեցու-
ցանել զոգիս ձեր (Յակոբ. Ա. 21.)։

246.) Գիտեմք՝ զի եթէ երկրաւոր տաճար շինո-
ւածոյս մերոյ քակտեսցի, շինած յԱ՛յ ունիմք,
տաճար առանց ձեռագործի յաւիտենական՝
յերկինս (Բ Կորնթ. Ե. 1։ Կարդա և Փի-
լիպ. Ա. 23. 24.)։

247.) Ընթերցիր Ղուկաս. ԺԲ. 35—46.)։

248.) Հող ես և 'ի հող դարձցիս (Ծննդ. գ. 19.)։

249.) 'Ի միտ առ Եսայեայ. ժզ. 9.=ց12.)։

250.) 'Ի յարութեանն ոչ կանայս առնեն և ոչ արանց լինին, այլ են իբրև զհրեշտակս յերկինս ... չիցէ՞ ընթերցեալ զասացեալն ձեզ յԱ.Ծ, Ես եմ Ա.Ծ Աբրահամու, Ա.Ծ Իսահակայ և Ա.Ծ Յակոբայ. և չէ Ա.Ծ՝ Ա.Ծ մեռելոց՝ այլ կենդանեաց (Մատթ. իբ. 30=32։ Կարդա՛ և ժթ. 17.)։

251.) Ասէ ցնա Յս. ամէն ասեմ քեզ. այսօր ընդ իս իցես 'ի դրախտին (Ղուկաս. իգ. 43.)։

252.) Ասէ ցնա Յս. Ես եմ յարութիւն և կեանք. որ հաւատայ յիս, թէպէտ և մեռանի՝ կեցցէ. և ամ որ կենդանի՛ է՝ և հաւատայ յիս, մի մեռցի 'ի յաւիտեան (Յովհ. ժա. 25. 26. Կարդա՛ և ա. Թեսաղ. դ. 12.=17.)։

253.) Կայ մնայ մարդկան միանգամ մեռանել, և յետ այնորիկ դատաստան (Եբրայ. թ. 27,)։

254.) Եղև մեռանել աղքատին ղազարու, և տանել հրեշտակացն զնա 'ի գոգ Աբրահամու. մեռաւ և մեծատունն՝ և թաղեցաւ. և 'ի դըժոխսն՝ ամբարձ զաչս իւր մինչ 'ի տանջանսն էր. ետես զԱբրահամ 'ի հեռաստանէ և զՂազարոս 'ի գոգ նորա հանգուցեալ (Ղուկաս. ժզ. 22. 23.)։

255.) Կարդա՛ Յայտն. է. 9.=17.)։

256.) Որ յաղթէ՝ տաց նմա նստել ընդ իս յաթոռ իմ, որպէս և ես յաղթեցի՝ և նստայ յաթոռ Հօր իմոյ (Յյտն. գ. 21. Տես և զհամարն՝ 254.)։

257.) Ընթերցիր Ղուկաս. ԺԹ. 19.=31.)։

258.) Այս են կամք Հօր Իմոյ որ առաքեաց զԻս, զի զամ զոր ետ ցԻս Հայր ոչ կորուսից 'ի նմանէ, այլ յարուցից զնա յաւուրն յետնում (Յովհ. Զ. 39.)։

259.) Ընդունիմ յոյս առ Ած. որում և դոքա իսկ ակնունին, թէ յարութեան՝ լինելոց է արդարոց և մեղաւորաց (Գործ. ԻԴ. 15.)։

260.) Եթէ Հոգի այնորիկ որ յարոյց զՅս 'ի մեռելոց՝ բնակեալ է 'ի ձեզ. ապա և որ յարոյց զՔս 'ի մեռելոց՝ կենդանացուսցէ ըզմահկանացու մարմինս ձեր՝ բնակելով Հոգւովն իւրով 'ի ձեզ (Հռովմ. Ը. 11.)։

261.) Կարդա Մատթ. ԻԵ. 31.=46.)։

262.) 'Ի միտ առ Յովհ. Ե. 21.=29.)։

263.) Հասկացիր Գործ. Ժ. 42. Յայտ Ի. 12։ Հռովմ. ԺԴ. 9. 10.)։

264.) Յայնժամ արդարքն ծագեսցեն իբրև զարեգակն յԱրքայութեան երկնից. որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ (Մատթ. ԺԳ. 43.)։

265.) Կարդա Յովհ. ԺԷ. 5=25.)։

266.) Իսկ յորժամ Քս յայտնեսցի կեանքն ձեր, յայնժամ և դուք ընդ Նմա յայտնեսջիք փառօք (Կողոս. Գ. 4.)։

267.) Յերևել Հովուապետին՝ ընդունիջիք զանթառամ փառաց պսակն (Ա. Պետր. Ե. 4.)։

268.) Զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ, և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, պատրաստեաց Ած սիրելեաց իւրոց (Ա. Կորնթ. Բ. 9. Կարդա և Բ. Կորնթ. ԺԲ. 2=5.)։

269.) Եւ մեք որ կենդանւոյն մնացեալ իցեմք՝ նոքօ՛ք հանդերձ յափշտակեսցուք ամպովք ընդ առաջ Տեառն յօդս. և այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն լինիցիմք (տ. Թեսաղ. դ. 16. Ընթերցէր և բ. Տիմոթ. բ. 11. 12.)։

270.) Սիրելիք այժմ որդիք Այ եմք, և չև՛ ևս է յայտ՝ եթէ զի՞նչ լինելոց եմք. գիտեմք՝ զի յորժամ նա յայտնեսցի՝ նման նմա լինելոց եմք զի տեսանելոց եմք զնա՝ որպէս և էն (տ. Յովհ. գ. 2։ 'ի մի'տ առ և Մատթ. ե. 8։ Յովհ. ժզ. 19.=24։ տ. Կորնթ. ժգ. 12.)։

271.) Գնեմ ծունր առ Հայր Տեառն մերոյ Յսի Քսի . . . զի տացէ ձեզ ըստ մեծութեան փառաց իւրոց, հաստատել զօրութեամբ 'ի ձեռն Հոգւոյն իւրոյ, 'ի ներքին մարդն. բնակել Քսի հաւատովք 'ի սիրտս ձեր. սիրով արմատացեալք, և հաստատեալք (Եփես. գ. 16. 17։ Կարդա և Հռովմ. ե. 5. Յովհ. ժգ. 22.)։

272.) Որ արժանի լինիցին այնմ աշխարհի հասանել . . ո՛չ մեռանել ևս կարեն, զի հաւասար հրեշտակաց են՝ և որդիք Այ (Ղուկ. ի. 35. 36։ 'ի մի'տ առ և Յայտ. իա. 3. 4։ է. 15. 16։ տ. Կորնթ. ժե. 42. 43։ Յովհ. ի. 19. 26։ Փիլիպ. գ. 20. 21. Մատթ. ժգ. 43։)։

273.) Ասեմ ձեզ, զի բազումք յարևելից և յարևմտից եկեսցեն և բազմեսցին ընդ Աբրահամու՝ և ընդ Սահակայ՝ և ընդ Յակովբու յԱրքայութեան Երկնից (Մատթ. ը. 11։ Տես և ըզնախընթաց համարն)։

274.) Քաջ 'ի միտ առ Հռովմ. ը. 21=24։ Եր-

րայ. Դ. 9=12.).

275.) Երթիցեն նոքա յանցաւորքն մշտաւոր 'ի տանջանսն յաւիտենականս, և Արդարքն 'ի կեանսն յաւիտենականս (Մատթ. ԻԵ. 46.).

276.) Նեղութիւն և անձկութիւն 'ի վերայ ամ. մարդոյ որ գործէ զչար (Հռովմ. Բ. 9. Կարդա և Մատթ. Է. 13.).

277.) 'Ի միտ առ Սաղմ. ԽԲ. 15. 16. Մատթ. Ե. 22.=30. Ղուկ. Բ. 31.).

278.) Հասկացիր Յուդայ. 13. Յայտ. Թ. 1. 2. 11. ԺԲ. 8.).

279.) Յայնժամ ասասցի ցնոսա՝ եթէ ոչ երբէք գիտէի զձեզ. 'ի բաց կացէք յինէն ամենեքեան. որք գործէիք զանօրէնութիւն (Մատթ. Է. 23.).

280.) Ընթերցիր Մատթ. ԻԵ. 31.=46.).

281.) 'Ի միտ առ Իմաստ. Դ. 16=20. Եսայ. ԿԴ. 24. Եբրայ. Ժ. 27.).

282.) Կարդա Մատթ. Ժ. 15. Հռովմ. Բ. 6.=8.).

233.) Կարդա Բ. Մակաբ. Ե. 22. ԺԵ. 12. Ա. Կորնթ. ԺԵ. 33. Եբրայ. ԺԴ. 5.).

284.) Ընթերցիր Մատթ. ԻԴ. 42. 43. Ա. Կորնթ. Ժ. 12.).

285.) Բանք 'ի միտ առ Սաղմ. ԼԷ. 4.=8. Մարկ. Թ. 47. 48. Ա. Տիմոթ. Ա. 19. 20.).

286.) Հասկացիր Ա. Կորնթ. ԺԳ. 13. Յայտն. ԺԳ. 15.).

287.) Կարդա Իմաստ. ԺԷ. 10.).

288.) Ընթերցիր Յովհաննու. Գ. 8. Դ. 14. ԽԲ. 21.).

289.) 'Ի միտ առ Ա. Մակաբ. Զ. 8= 16.).

290.) Հասկացիր Մատթ. ԻԷ. 3. 4. 5.).

291.) Բա՛ջ ՚ի միտ առ
292.) Հռովմ. Բ. 15: Յովբ. ԼԵ. 6, Իմաստ. Գ. 20,
293.) Ա. Պետր. Գ. 16, Բ. Կորնթ. Ա. 12, Ա. Կո-
294.) րընթ. Դ. 1=5, Բ. Կորնթ. Ե. 8=11, Ա.
295.) Յովհ. Գ. 20=22.),

296.) Պատուիրանս այս … ոչ հեռի է ՚ի քէն … այլ մե՛րձ է բանն առ քեզ յոյժ, ՚ի բերան քո և ՚ի սրտի քում դրոշմեալ է, և ՚ի ձեռս քո՛ է առնել զնա (Երկր. Օրէնք. Լ. 11=15.):

297.) Զամ զոր միանգամ կամիջիք՝ թէ արասցեն ձեզ մարդիկ՝ այնպէս և դուք արարէք նոցա զի այս իսկ են օրէնքն և մարգարէք (Մատթ. Է. 12, ՚Ի միտ առ և Հռովմ. Բ. 14. 15.),

298.) Կարդա Յովհ. Է. 24, Ղուկաս. ԺԲ. 57.),

299.) Ընթերցիր Մատթ. Ի. 23, Մարկ. ԺԲ. 34.):

300.) ՚Ի միտ առ Եփես. Դ. 17. 18: Տես և զհամարն՝ 245.),

301.) Իմա Ելից. ԺԹ. Ի. ԼԱ. ԼԲ. և ԼԴ: Երկր. Օրէնք. Ե. Զ. Թ. Ժ: Մատթ: ԻԲ. 37=40:),

302.) Եւ ետ Մովսիսի իբրև դադարեաց ինքն ՚ի խօսից իւրոց ՚ի լերինն Սինա, զերկուս տախտակսն վկայութե՟ն, տախտակս քարեղէնս գրեալս մատամբն Ա՟Յ (Ելք. ԼԱ. 18.),

303.) Ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց, և հը-պատակ կացէք նոցա. զի նոքա տքնին վասն ոգւոց ձերոց՝ որպէս թէ համարս տալոց իցեն ընդ ձեր (Եբրայ. ԺԳ. 17, Կարդա և Մարկ. Զ. 11: Ղուկ. Թ. 5.),

304.) Մեք յԱ՟Յ եմք, որ զԱ՟Ծ ճանաչէ՝ լսէ մեզ,

և որ չէ՛ յԱ՟ծ՝ ոչ լսէ մեզ. այսուհետև ճանա-չեմք զհոգին ճշմարտութեան, և զհոգին խաբէ-ութեան (ա. Յովհ. դ. 6. Ընթերցիր և Եքեմ. ա. 9. 10. Տես և զհամարն՝ 239.)։

505.) Կարդա Մատթ. ժէ. 25=26.)։

506.) Հասկացիր ա. Պետր. բ. 13=19. Յուշ ա-րասջիր նոցա, իշխանութեանց և պետութեանց հնա-զանդ լինել՝ և հպատակ կալ. և ամ գործոց բարութեան պատրաստ գտանել (Տիտոս. գ. 1. Ընթերցիր և Մատթ. իբ. 21. Հռովմ. ժգ. 1=8.)։

507.) Զգաստութ՟բ առ անձն մեր, Արդարութ՟բ առ ընկերս և Աստուածպաշտութ՟բ կեցցուք յաշխարհիս (Տիտ. բ. 12.)։

508.) ՚Ի միտ առ Հռովմ. գ. 4. դ. 21. ա. Թեսա-ղ. ե. 24. Մատթ. զ. 25=34. Եբրայ. ժ. 35.)։

509.) Եւ Յիսուս ասէ ցնա. սիրեսցես զՏէր Ա՟ծ քո յամ սրտէ քումմէ, և յամ անձնէ քումմէ, և յամ մտաց քոց (Մատթ. իբ. 37.)։

510.) Զոր ինչ առնիցէք՝ սրտի մտօք գործեսջիք իբրև Տեառն, և ոչ իբրև մարդկան (Կողոս. գ. 23.)։

511.) Բոլորով սրտիւ իմով խնդրեցի զքեզ, մի մերժեր զիս ՚ի պատուիրանաց քոց (Սաղմ. ճժը. 10. Կարդա և Ճ՟դ. 3.)։

512.) Ընթերցիր Ղուկ. ժ. 21. 29.)։

513.) ՚Բնաջ ՚ի միտ առ ա. Կորնթ. ժա. և ժդ.)։

514.) Մ՟ի արբենայք գինւով, յորում զեղխութիւն է. այլ մանաւանդ լցարուք Հոգւով. խօսել ՚ի

սիրտս ձեր սաղմոսիւք և օրհնութեամբք. և երգովք հոգևորօք. երգել և սաղմոսել ՚ի սիրտս ձեր Տն̃ (Եփես. Ե. 18. 19.)։

315.) Զգուշասջիք միմեանց յորդորմամբք սիրոյ և գործոց բարեաց. և մի թողցուք զժողովս միմեանց, որպէս սովոր են ոմանք. այլ մխիթարեսցուք, այնչափ ևս առաւել՝ որչափ տեսանիցէք զօրն մերձեալ (Եբրայ. Ժ. 24. 25. Հասկացիր և Կողոս. Գ. 16. Ա. Տիմոթ. Բ. 8.=15.)։

316.) ՚Ի մէտ առ Ա. Կորնթ. ԺԱ. Եբրայ. Ժ. 19.=30.)

317.) ՚Ի Տեառնէ Ա̃յ քումմէ երկիցես. և զնա միայն պաշտեսցես, և ՚ի նա յարեսցիս, և յանուն նորա երդնուցուս (Երկր. Օրէ. Զ. 13. Կարդա՛ և Ելք. ԻԲ. 10. 11. Եսայ. ԺԹ. 18.)։

318.) Վկայ է ինձ Ա̃ծ, զոր պաշտեմն Հոգւով իմով յաւետարանի Որդւոյ նորա, թէ որպէս զյիշատակս ձեր առնեմ (Հռովմ. Ա. 9. Ընթերցիր և Մատթ. ԻԳ. 16.=23. ԻԶ. 63. 64).։

319.) Կարդա՛ Բ. Կորնթ. Ա. 23. Եբրայ. Զ. 12=20.)։

320.) ՚Ի մէտ առ Ա. Տիմոթ. Ա. 8.=11.)։

321.) Ուշի ուշով ընթերցիր Սաղմ. ԺԴ. և ԻԴ. 3.=5.)։

322.) Շուրջ եկի ես և սիրտ իմ, ճանաչել՝ նաև խորհել՝ և խնդրել զիմաստութիւն և զհանճար (Ժողով. Է. 26. Կարդա՛ և Եսայ. Ե. 12. ԻԴ. 20. Բ. Մակաբ. Թ. 11.)։

323.) Իջա՛ք 'ի մէտ առ Մատթ. Ե. 1.=5. Մարկ. ԺԶ. 33. Ղուկ. ԻԲ. 41.=45.)։

324.) Փորձեցէք զանձինս ձեր, եթէ կայցէք 'ի նոյն հաւատս. քննեցէք զանձինս, եթէ ոչ գիտէք զանձինս (Բ. Կորնթ. ԺԳ. 5.)։

325.) Զգո՛յշ լինիջիր անձին և վարդապետութեանդ՝ և 'ի դմին յամեսջիր (Ա. Տիմոթ. Դ. 16. Կարդա՛ և Եփես. Ե. 7=12. Գաղ. Զ. 4.)։

326.) Կարդասցէ առ իս՝ և ես լուայց նմա, և առ նմա եղէց 'ի նեղութեան. փրկեցից փառաւոր արարից զնա, երկայն աւուրբք լցուցից և ցուցից նմա զփրկութիւն իմ (Սաղմ. ՂԱ. 15. 16. 'Ի միտ առ ես և Մատթ. Ը. 1=12. Յովհ. Ե. 5=16. Գործ. ԺԶ. 33. 34. Եփես. Ե. 29.)։

327.) Այսուհետև՝ մի ջուր և եթ ըմպիցես, այլ սակաւիկ մի և գինի խառնեսջիր, վասն ստամոքսի և ստէպ հիւանդութեանց։ Շահավաճառ մեծ Ածպաշտութիւն է՝ բաւականութեամբ հանդերձ. զի ոչ բերաք ինչ յաշխարհս, և ոչ տանել ինչ կարասցուք. այլ ունիմք կերակուր և հանդերձս, և այնու շատասցուք (Ա. Տիմոթ. Ե. 23. և Զ. 6. 7. 8.)։

328.) Յայտնեցաւ Սաւղոսի նենգութիւն նոցա, քանզի պահէին զդրունսն 'ի տուէ և 'ի գիշերի, որպէս զի սպանցեն զնա. Եւ առեալ զնա աշակերտացն 'ի գիշերի՝ ընդ պարիսպն կախեալ իջուցին վանդակաւ (Գործ. Թ. 24. 25. 'Ի միտ առ ես Յովհ. Ը. 59. Մատթ. Ժ. 6. 7.)։

329.) Ուշի ուշով ընթերցջիր Դ. Թագ. Ե. 5=8.

Բ. Մնաց. ԺԲ. 12. Եսայ. ԼԸ. 2=8. Ղուկ. Ը. 41=47. ԺԵ. 12=20.).

330.) Բանք ի միտ առ Մատթ. Ե. 29. 30. Ժ. 28. Հռովմ. Զ. 13=19. Ա. Կորնթ. Զ. 15=19. Փիլիպ. 3. 19.).

331.) Բուսուցեր զխոտ 'ի լերինս, զդալարի ի ծառայութիւն մարդկան. Հաներ զհաց յերկրէ, գինի ուրախ առնէ՝ իւղ զուարթ, և հաց հաստատէ զսիրտ մարդոյ (Սաղմ. ՃԳ. 14. 15.):

332.) Եկն Որդի մարդոյ՝ ուտէ և ըմպէ. և ասեն, ահա այր կերող և արբեցող, բարեկամ մաքսաւորաց և մեղաւորաց. և արդարացաւ Իմաստութիւն յորդւոց Իւրոց (Մատթ. ԺԱ. 19. Կարդա ևս և Ղուկ. Ե. 17=20. Լ. 7=10.).

333.) Ընթերցիր Հռովմ. ԺԴ. 14=24. Ա. Կորնթ. Ը. 8=13. Ժ. 23=31. Ա. Տիմոթ. Դ. 4. 5.):

334.) Սէր՝ երկայնամիտ է, քաղցրանայ. սէր՝ ոչ նախանձի, ոչ ամպարհաւաճէ, ոչ հպարտանայ. ոչ յանդգնի, ոչ խնդրէ զիւր, ոչ գրգռի ոչ խորհի զչար (Ա. Կորնթ. ԺԳ. 4. 5. 'Ի միտ առ ևս Ժ. 24=33.).

335.) Ո՛չ զոք ունիմ համաշունչ, եթէ ընտաներամբ հոգայցէ վասն ձեր. զի ամենեքին զանձանց խնդրեն, և ոչ զՅիսուսի Քրիստոսի (Փիլիպ. Բ. 20. 21.),

336.) Եթէ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, թողցէ և ձեզ Հայրն ձեր Երկնաւոր. ապա թէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, և ոչ Հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր (Մատթ. Զ. 14. 15.).

337.) Բարւոք հասկացիր Նոյն. ԺԸ. 'ի 21=35.).

338.) Ա՟Ծ Տէր Ա՟Ծ ցԿային. Ո՞ւր է Աբէլ եղբայր քո. և նա ասէ՝ չգիտեմ մի թէ պահապան իցեմ եղբօրն իմոյ. և ասէ Ա՟Ծ զի՞նչ գործեցեր զայդ. ձայն արեան եղբօր քո բողոքէ առ իս յերկրէ. և արդ՝ անիծեալ լիջիր դու 'ի վերայ երկրի, որ եբաց զբերան իւր ընդունել զարիւն եղբօր քո 'ի ձեռաց քոց (Ծննդ. Դ. 9. 10. 11.):

339.) Անողորմ դատաստան լինելոց է այնմ, որ ոչ առնիցէ ողորմութիւն (Յակոբ. Բ. 13. Ընթերցիր ևս և Ելք. Է. 13.=22: Ա. Կորնթ. ԺԲ. 26.):

340.) Մի խնդրեսցէ վրէժ ձեռն քո, և ընդ որդւոց ժողովրդեան քոյ ոխս մի ունիցիս (Ղևտայ. ԺԹ. 18. 'Ի միտ առ ևս Եզեկ. ԻԵ. 12.=17. Առակ. ԺԶ. 32: Ի. 22.):

341.) Ես ասեմ ձեզ, մի կալ հակառակ չարին. այլ եթէ ոք ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո՝ դարձո նմա և զմիւսն. Եւ որ կամիցի ոք դատել և առնուլ զշապիկս քո, թող 'ի նա և զբաճկոն քո. և որ տարապարհակ վարիցէ զքեզ մղոն մի, երթ ընդ նմա և երկուս (Մատթ. Ե. 39. 40. 41.):

342.) Յորժամ յաղօթս կայցէք, թողուցուք եթէ ունիցիք ինչ զումեքէ. զի և Հայրն ձեր՝ որ յերկինս է, թողցէ ձեզ զյանցանս ձեր (Մարկոս. ԺԱ. 25. Կարդա ևս Ղուկ. Թ. 54. 55. Ա. Պետր. Գ. 9: Հռովմ. ԺԲ. 17. 18. 19.):

343.) Ուսուցէք զիս և ես լռեցից. և եթէ մոլորեալ

ինչ իյեմ՝ արարէք զիս խելամուտ (Յովբ. Զ. 24։ Բարուք հասկացիր և Մատթ. ԺԵ. 14=30. Ղուկ. Թ. 59. 60։ Գործ. ԺԸ. 24.=28.)։

344.) Եղբա՛րք իմ, եթէ ոք 'ի ձէնջ մոլորեսցի 'ի ճանապարհէ ճշմարտութեան, և դարձուսցէ ոք զնա. գիտասցէ զի որ դարձուսցէ զմեղաւորն 'ի մոլորութենէ ճանապարհէն իւրմէ, փրկեսցէ զոգի իւր 'ի մահուանէ, և ծածկեսցէ զբազմութիւն մեղաց (Յակոբ. Ե. 19. 20.)։

345.) Իւրաքանչիւր ոք որպէս և ընկալաւ շնորհս ինչ՝ 'ի միմեանս զնոյն մատակարարել, իբրև զբարւոք հազարապետս պէսպէս շնորհացն ԱՅ... զի յամենայնի փառաւորեսցի ԱԾ 'ի ձեռն Յսի Քսի, որում փառք և զօրութիւն յաւիտեանս ամէն (Ա. Պետր. Դ. 10։ 11.)։

346.) Հա՛րք՝ մի զայրացուցանէք զորդիս ձեր, այլ սնուցանիջիք զնոսա խրատու և ուսմամբ ՏՆ (Եփես. Զ. 4.)։

347.) Եթէ ոք իւրոց, և մանաւանդ և ընտանեաց խնամ ո՛չ տանիցի, 'ի հաւատոցն ուրացեա՛լ է, և չա՛ր ևս քան զանհաւատսն է (Ա. Տիմոթ. Ե. 8.)։

348.) Ծերոց զգաստս լինել, պարկեշտս, ցածո՛ւնս ողջամիտս 'ի հաւատս, 'ի սէր, 'ի համբերութեան, 'ի ժուժկալութեան։ Պառաւանց նոյնպէս 'ի ըզգաստութեան, 'ի սուրբ վայելչութեան, մի բանսարկուս, մի գինեմոլս, այլ բարեխրատս. զի ըզգաստացուսցեն զմանկամարդսն՝ այրասէրս լինել, որդեսէրս, ցածունս, սուրբս, տնարարս, բարեգործս, հնազանդս իւրեանց արանց, զի մի բանն ԱՅ և վարդապետութիւն հայհոյեսցի

(Տիտոս. Բ. 2. 3. 4. 5.)։

349.) Ոչ ապաքէն մի՛ հայր է ամենեցուն ձեր. ո՞չ մի ԱԾ հաստատեաց զձեզ. զի՞ է զի թողէք իւրաքանչիւր զեղբայր իւր (Մաղաք. Բ. 10.)։

350.) Վայ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի փակէք զարքայութի երկնից առաջի մարդկան. դուք ո՛չ մտանէք, և որոց մտանեն՝ չտա՛յք թողուլ մտանել (Մատթ. ԻԳ. 13. Կարդա և Ղուկ. ԺԹ. 13.=26.)։

351.) Այսպէս ասէ Տէր ՚ի վերայ մարգարէիցն՝ որ մոլորեցուցանեն զժողովուրդ իմ. որ խածանեն ատամամբք իւրեանց, և քարոզեն նմա զխաղաղութի. և ո՛չ տուաւ ՚ի բերան նոցա. և յարուցին ՚ի վերայ նոցա պատերազմ. Վասն այնորիկ . . . մտցէ արեգակն ՚ի վերայ մարգարէիցն, և խաւարեսցի ՚ի վերայ նոցա տիւ. . . Լուարո՛ւք զայս ա՛ռաջնորդք տանդ յակոբայ . . որ անարգէք զիրաւունս, և թիւրէք զամ ուղորդս. որ շինէք զՍիոն արեամբ, և զԵրուղէմ անիրաւութ (Միքիէ. Գ. 5=10.)։

352.) Աղաչեմ զձեզ եղբարք, դիտել զայնպիսիսն, որ հերձուածս և գայթակղութիս առնիցեն արտաքոյ վարդապետութեն՝ զոր դուքն ուսարուք, խորշեցարո՛ւք ՚ի նոցանէ. զի այնպիսիքն Տն մերոյ Քսի ո՛չ ծառայեն, այլ իւրեանց որովայնին. և քաղցրաբանութ և օրհնութ պատրեն զսիրտս անմեղաց (Հռովմ. ԺԶ. 17. 18.)։

353.) Ամենեցուն վախճան մերձեալ է. զգաստացարո՛ւք այսուհետև՝ և լերուք զուարթունք յաղօթս։ Նախ քան զամ սէր սերտ ունել

ընդ միմեանս առանց տրտնջելոյ (Ա. Պետր. Դ. 7. 8. 9.)։

354.) Մի՛ տրտնջեսցուք, որպէս ոմանք 'ի նոցանէ տրտնջեցին, և կորեան 'ի սատակչէ անտի (Ա. Կորնթ. Ժ. 10։ Ընթերցիր և Յուդ. 16։ Փիլիպ. Բ. 14.)։

355.) Զարախօսք, Ա՟ծատեացք, թշնամանօղք, ամբարտաւանք, ամբարհաւաճք, գտիչք չարեաց, զծնօղս անարգուք ... անողորմք. ոյք հասեալ էին յԱ՟յ իրաւանցն վերայ, եթէ ոյք զայնպիսին գործեն՝ արժանի են մահու. և ո՛չ միայն որ զայն առնեն, այլ և որք կամակիցն լինին գործելեացն (Հռովմ. Ա. 30=32.)։

356.) 'Ի միտ առ Բ. Կորնթ. ԺԲ. 10։ Ա. Թեսաղ. Բ. 2։ Ա. Տիմոթ. Ա. 13.)։

357.) Բա՛ղջ 'ի միտ առ Ելք. Ի. 15. 17։ Ղևտ. Զ. 2=5։ ԺԹ. 11. 35. 36։ Բ. Օրին. ԺԵ. 7=11.)։

358.) Լուարո՛ւք զայս, որք նեղէիք զտնանկն ընդ առաւօտս, և զրկէիք զաղքատ յերկրորէոյ. և ասէիք՝ ե՞րբ անցցէ ամիսս և շահեսցուք, և շաբաթս՝ և բացցուք զգանձս, և առնել ըզչափ փոքր, և մեծացուցանել զկշիռս, և առնել կշիռս ստութեան. ստանալ արծաթով զաղքատս, և զտնանկս 'ի գնոց կօշկաց. և յա՟մ 'ի վաճառս մեր շահեսցուք։ Երդնու Տէր 'ի վերայ հպարտութեան Յակովբու. թէ ո՛չ մոռասցին 'ի սպառ ա՟մ գործք ձեր (Ամովս. Ը. 4=7.)։

359.) Որ գողանայր՝ մի՛ ևս գողասցի, այլ մանաւանդ վաստակեսցէ գործել ձեռօք իւրովք

զբարիս. զի բաւական լիցէ տալ ում պիտոյ ի-ցէ (Եփես. դ. 28։ 'Ի միտ առ եւս և Ղուկ. գ. 34. 35։ ժթ. 8։ ա. Կորնթ. գ. 10։ Յայտ. թ. 21.)։

360.) Իբրև եկն ՚ի տեղին. հայեցաւ ՚ի վեր Յս՟՝ և ասէ ցնա, Զակքէ փութա՛ էջ այտի, զի այսօր ՚ի տան քում արժան է Ինձ ագանել. փութացաւ և էջ՝ և ընկալաւ զՆա ուրախութբ (Ղուկ. ժթ. 5. 6.)։

361.) 'Ի միտ առ Մատթ. ժա. 19։ Ղուկ. բ. 51։ ժդ. 1։ ժե. 1. 2։ Յովհ. ժբ. 1. 2։ Գործ. ժ. 38.)։

362.) Ամ դառնութի, և բարկութի, և սրտմտութի, և աղաղակ, և հայհոյութի՝ բարձցի ՚ի ձէնջ ամ չարութբն հանդերձ։ Լերո՛ւք ընդ միմեանս քաղցունք՝ գթածք. շնորհել միմեանց, որպէս և Այ Քսիւ շնորհեաց մեզ (Եփես. դ. 31. 32.)։

363.) Եղբայրսիրութի հաստատեսցի առ ձեզ. զօտա-սիրութի մի մոռանայք. զի այնու ոմանք յան-գէտս ընկալան զհրեշտակս (Եբրայ. ժգ. 1. 2.)։

364.) Քնա՛ջ ՚ի միտ առ ա. Պետր. գ. 8։ ա. Կորնթ. ժգ. 4։ բ. Կորնթ. զ. 6.)։

365.) Ատեցեր զայնոսիկ որ գործեն զանօրէնութի, կորուսանես զամենեսեան որք խօսին զսուտ (Սաղմ. ե. 7.)։

366.) Այսուհետև զգո՛յշ լերուք յանօգուտ քրթմն-ջանէ. և ՚ի բամբասանաց խնայեցէ՛ք զլեզու. զի շշունջ գաղտնի՝ դատարկ ո՛չ անցցէ, և

բերան ստախօս՝ սպանանէ զանձն (Իմաստ. Ա. 11։ Ընթերցի՛ր եւ Ղուկ. Գ. 17. 18. 19։ Ե. 17։ Եա. 6։ Ովսէ. Դ. 2. 3.)։

367.) Ոչ ապաքէն մինչ կայրն քո էր, եւ 'ի վաճառելն՝ ընդ քո իշխանութեամբ էր. զի՞ է՝ զի եդիր 'ի սրտի քում զիրս զայս. ոչ ստեցեր մարդկան՝ այլ Ա.Յ (Գործ. Ե. 4։ Կարդա՛ եւ Յովհ. Ը. 44։ Եփես. Դ. 25։ Կողոս. Գ. 9. 10։ Յայտ. Իա. 27։ ԻԲ։ 15.)։

368.) Իմարուոք 'ի մէտ առ Ա. Կորնթ. Թ. 19=25։ Գ. 12։ ԺԳ. 7։ Հռովմ. ԺԴ. 1=23։ ԺԵ. 1=3.)։

369.) Զսա (զՏիմոթէոս) կամեցաւ Պաւղոս ընդ իւր տանել. եւ առեալ թլփատեաց զնա վասն հրէիցն՝ որ էին 'ի տեղիսն յայնոսիկ. քանզի գիտէին ամենեքին զհայր նորա թէ հեթանոս էր (Գործ. ԺԶ. 3.)։

370.) 'Ի մէտ առ ուշի ուշով Մատթ. ԺԵ. 24=26. Գաղատ. Բ. 12=15.)։

371.) Եղբարք մի՛ տղայք լինիք մտօք, այլ 'ի չարեաց տղայացարուք, եւ մտօք կատարեալք լինիջիք (Ա. Կորնթ. ԺԴ. 20.)։

372.) Զայն աղօթս առնեմ. զի սէրն ձեր եւս քան զեւս առաւել լիցի 'ի գիտութեան եւ յամենայն իմաստութեան. ընտրել ձեզ զլաւն (Փիլիպ. Ա. 9. 10.)։

373.) Խրատեմք զամ մարդ, եւ ուսուցանեմք զամ մարդ ամ հոգեւոր իմաստութբ, զի կացուսցուք զամենայն մարդ կատարեալ 'ի Քրի Յի (Կողոս. Ա. 28.)։

374.) Ընթերցիր Բ. Տիմոթ. Գ. 13=17. Եբրայ. Ե. 11=14: Ղուկ. Զ. 40. Ա. Կորնթ. Բ. 6. Եփես. Դ. 13. 14.):

375.) Եղերուք դուք կատարեալք, որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է (Մատթ. Ե. 48: Կարդա և ԺԹ. 21. 22.):

376.) Եթէ ոք բանիւ ոչ յանցանիցէ՝ նա է մարդ կատարեալ որ կարօղն է սանձահարել զամ մարմին իւր (Յակոբ. Գ. 2: Կարդա և Ա. 3. 4.):

377.) Որովհետև զայս աւետիս ունիմք սիրելիք, սրբեսցուք զանձինս մեր յամ պղծութէ մարմնոյ և հոգւոյ. կատարեսցուք զսրբութի ահիւն Այ (Բ. Կորնթ. Է. 1.):

378.) Հասկացիր Բ. Պետր. Ա. 5=11. Ա. Յովհ. Դ. 18. Հռովմ. ԺԲ. 2. Փիլիպ. Ա. 10. Գ. 12=16. Կողոս. Գ. 14. Դ. 12. Ա. Թեսաղ. Դ. 1. Յայտ. ԻԲ. 11. 12.):

379.) Որդեակ՝ լուր ինձ. և երանելի են՝՝ որ զճանապարհս իմ պահիցեն. Երանեալ է այր որ լուիցէ ինձ, և մարդ՝ որ զճանապարհս իմ պահիցէ. տքնիցի առ դրունս իմ հանապազ. և պահիցէ զսեամս մտից իմոց (Առակ. Ը. 32: Ընթերցիր և Գ. 13.):

380.) Կարդա Սաղմ. ՃԸ. 16. ՂԴ. 12. ՃԺԸ. 2.):

381.) Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնա. երանի քեզ Սիմովն որդի Յովնանու, զի մարմին և արիւն ոչ յայտնեաց քեզ՝ այլ Հայր իմ՝ Որ յերկինս է (Մատթ. ԺԶ. 17.):

382.) Նա՝ երանի այնոցիկ է որ լսեն զբանն Այ և առնիցեն (Ղուկ. ԺԱ. 28.):

383.) Երանի որ կարդասցէ կամ լուիցէ զբանս մարգարէութեանս, և պահեսցէ զոր 'ի սմա գրեալ է. զի ժամանակս մերձեալ է (Յայտ. ա. 3.)։

384.) 'Ի միտ առ Մատթ. ե. 6.)։

385.) Երանեալ է այր որ ոչ գնաց 'ի խորհուրդս ամբարշտաց, 'ի ճանապարհի մեղաւորաց նա ոչ եկաց, և յաթոռս ժանտից նա ոչ նստաւ։ Այլ յօրէնս Տեառն են կամք նորա, և յօրէնս նորա խորհեսցի նա 'ի տուէ և 'ի գիշերի (Սաղմ. ա. 1։ Կարդա և ը. 13։ լա. 1. 2։ լգ. 9։ խ. 2. 3։ ծգ. 5. 6. 13։ ճե. 3.)։

386.) Երանեալ է այր որ երկնչի 'ի Տեառնէ, զի զպատուիրանս նորա նա կամի յոյժ (Սղմ. ճժա. 1.)։

387.) Այսպէս ասէ Տէր, զգո՛յշ կացէք իրաւանց՝ և գործեցէ՛ք զարդարութիւն զի եկեալ հասեալ է փրկութիւն իմ, և յայտնելո՛յ է ողորմութիւն իմ։ Երանի առն որ առնիցէ զայն, և մարդոյ որ կալցէ 'ի նմին. և պահիցէ զշաբաթս իմ և ոչ պղծիցէ, և պահիցէ զձեռս իւր յառնելոյ զանիրաւութիւն (Եսայ. ծզ. 1. 2։ Ընթերցիր և Երակ. իը. 14.)։

388.) 'Ի միտ առ բարւոք Մատթ. ե. 2=11։ իդ. 46։ Ղուկ. զ. 20։ ժբ 37=44։ Յովհ. ժգ. 17։ ի. 29.)։

389.) Իսկ եթէ նախատիցիք ևս վասն անուանն Քսի, երանելի էք. զի փառացն և զօրութե անուն, և Այ Հոգին 'ի վերայ ձեր հանգուցեալ է (ա. Պետր. դ. 14։ Կարդա ևս գ. 14։ Գործ. ե. 35։ Յակ. ա. 12. 25.)։

390.) Տես զհամարն 383. Կարդա եւ Հռովմ. Բ. 6=9. ԺԲ. 22.)։

391.) Ահա՛ գամ իբրեւ զգող, երանի որ իցեն արթունք (Յայտ. ԺԶ. 15. Կարդա եւ Ի. 6. ԻԲ. 7.)։

392.) Երանելիք են՝ որ պահեն զպատուիրանս նորա, նոքա ունին իշխանութի՛ւն ուտել 'ի փայտէն կենաց՝ եւ մտանել ընդ դրունս քաղաքին (Յայտ. ԻԲ. 14.)։

Օրհնութիւն, որ [illegible]

## Առ Ա. Մ. Մ.........ն

Ընկա՛լ սիրով, ո՛ Մադերին,
Ըղձոյղն ընծայ անոխերիս,
Զոր ընձեռեալ 'ի սուրբ սրտէ
Քնքոյշ պերճ անուամբ եւ ճոխագին.

Զի Քո խորհուրդ թագաւորեն
Զիս ազդեհար դրդեաց գրել
Առ բարգաւաճել վեհերեալեան
Աստուածութեան ճառագայթներն։

Մե՛ պղծնեալց դէմ Քո բարեր,
Թէ ես վտարանդ չէ՛ անբերեր.
Իտկեղծն է այս Եսոց խրատանց. —
Զի՞նչ է ղարծանք հէ է բերեր.

Նուաստագոյն Ծառայ

Ա. — Ս. Գ. Տէր — Աւագեանց։

# ԱՍՏՈՒԱԾ

Ո՛վ Դու անսահման ՚ի տարածութեան,
Յաւէժ կենդանի յեռակաց շարժման,
Ըստ հոսման դարուց նախայաւիտեան,
Անդէմ յեռանձնեայ Սուրբ Ածութեան.
Հոգի Դու միակ, այլ գերբընապէս
Յար ամենակալ և Ամենատես,
Որում չիք պատճառ, չիք և ինչ տեղի,
Եւ որում ոչ ոք հասանել մարթի.
Որ ինքն ինքեամբ կամ լինու,
Զամենեսին յիւր ՚ի գիրկըս առնու,
Հաստէ, խնամէ, տածէ, պահպանէ,
Զոր աշխարհ համայն՝ Աստուած՝ անուանէ:

Թէ և վսեմ միտք կարասցէ չափել
Զովկիանոս ծով ըղհամատարած,
Եւ զաւազ նորին ՚ի թիւ արկանել
Ընդ ճառագայթիցըն մոլորակաց.
Այլ չիք Քեզ թիւ չափ, Անեղ, Անվախճան:
Ո՛չ կարեն հոգիք լուսակերպարան,
Որ ՚ի Քոյդ լուսոյ ծնեալ հաստեցան,
Զննել զՔո խորս՝ զգործս անսահման.
Խորհ և եթ առ Քեզ վերաճեմել ճ՚պրհի,
՚Ի քում մեծութեան անհետ կորնչի՝
Որպէս քթիթ ինչ կամ թարթափ ական՝
Անցեալ անհետեալ ՚ի յաւիտենի.

Զնախագոյակն քան զժամանակ
Ի՛նչ խառնակութեան կոչեցեր համակ

՚Ի յաւիտենից խորոցն անդնդոց,
Ուր Թագաւորէր խաւար միայնակ։
Այլ զյաւիտեան նախ քան զյաւիտեան,
Հիմնեցեր ինքնին Դու ՚ի քեզ ինքեան,
Ինքնին գոյացեալ ՚ի քէն քեւ փայլեալ
Դու լոյս, ուստի լոյս բղխեաց ամենայն։
Միով եթ բանիւ հաստող Դու միայն
՚Ի նոր արարածս տարածեալ համայն.
Դու էիր, Դու ես, Դու ունիս լինել
Յանցեալն, և արդ, նա և առ յապայն։

Դու ըղձոդ էից ՚ի քեզ զետեղես,
Պաշտպանես նմին և կենսագործես,
Դու ընդ սկըզբան զլախձան կապես,
Եւ ձեռամբ մահուան կեանք պարգեւատրես։
Որպէս կայծակունք ոստնուն և ցնդին,
Նոյն արեգակունք ՚ի քէն ծնանին։
Որպէս հողմահոս մանր սարսուռք ձեան
՚Ի պարզ ցրտաշունչ աւուր ձմերան
Շողան, շողշողեն և շուրջ պտուտին,
Փայլփայլեն, յայսկոյս յայնկոյս տատանին,
Նոյնպէս և ընդ քեւ անհամար աստեղք
Յանդունդս երկնից պարեն խնդագին։

Աքանչելափայլ լուսաւորք անթիւ
Յամբաւութեան անդ գնան ընդ երկնիւ.
Նոքին զՔո, Տէր, օրէնս կատարեն,
Օ կենսաւիթ լոյս յայս երկիր հոսեն։
Այլ այս ամ Հրաբորբոք ղամպարք,
Կամ հրաշէկ կուտակք ջինջ ականց վառեալց,

Եւ կամ սառնորակ բիւրեղաց կարկառք,
Կամ եռանդուն կոյտք ոսկեփայլ ալեաց,
Կամ հրացայտ եթերք սաստիկ բոցավառք,
Կամ համանգամայն լուսավառ աշխարհք
Են Քո առաջի, Տէր Ամենասուրբ,
Իբր առ ցերեկիւ գիշերեան խաւարք։

Կաթիլ ինչ ծովու համարի առ Քեւ
Այս հաստատուն համօրէն համբուն.
Զի՞նչ ապա տեսեալն տիեզեր ինև,
Եւ զի՞նչ առ Քեւ ես, Աստուած իմ անհուն։
Եթէ յօդային անդ ովկիանու
Զաշխարհս հոյակապ, վեհ և ահարկու
Հազար հազարօք բազմապատկեցից,
Եւ բիւր քան զբիւր զայլս յաւելից. —
Եւ զայն թէ ընդ Քեզ և ընդ Քոյդ փառաց
Բաղդատել, կշռել ես յանդգնեցայց,
Հազիւ թէ լիցի նշանակէտ ինչ.
Իսկ ես առաջի Քո, Տէր, եմ ոչինչ։

Ոչինչ, — այլ Դու յիս մեծութեամբ փայլես
Նորաւ Քոց բարեաց սքանչելապէս.
Որպէս արեգակն 'ի կաթ ինչ ջրոյ,
Դու յանձին իմում զՔեզ պատկերես։
Ոչինչ, — այլ զկեանս ես յինքեան զգամ,
Դու անյագ ինձ՝ ես յամենայն ժամ՝
Սլացմամբ 'ի բարձունս ձախրեմ խոյանամ։
Հոգի իմ 'ի Քոյդ, Հայր ամենախնամ,
Գոյուն յուսայ և խոստմանի,
Խորհի, խելամտէ, թափանցանց լինի,

Ըմբռնէ, զննէ, որոշէ, դատի. —
Եմ ես. — ապա ես և Դու հաւաստի։

Դու ես. — բնութեան իսկ կարգ քարոզէ,
Զնոյն սիրտ իմ ինձ քաջայայտ ձայնէ,
Զիս յայնմ միտք իմ հաւաստի առնէ.
Դու ես. — վասն որոյ և ես ոչ եմ չէ.
Մասն եմ փոքրիկ ես տիեզերաց՝
Եդեալ, ինձ թուի, 'ի գերյարգելի
Յայն միջին տեղւոջ բոլոր գոյակաց,
Ուր կատարեցեր Դու զսքանչելի
Զողջոյն մարմնաւոր արարածս աստեաց,
Եւ ուր ըսկըսար զհոգիս երկնի.
Որով և զկապ ողջ գոյացութեանց
Ինև պնտեցեր, Դու միայն Բարի։

Ես եմ յօդակապ համակ աշխարհաց,
Եւ ես էակաց վերջին աստիճան,
Ես կենդրոն եդեալ 'ի մէջ կենդանեաց,
Պատկեր սկ'զբնակոն սուրբ Աստուածութեան։
Ես նեխիմ մարմնով 'ի հող փտութեան,
Մտօք հրամայեմ շանթից՝ որոտմանց.
Ես արքայ, — ես և ծառայ անպիտան.
Ես որդն զազիր, — ես իսկ և աստուած։
Իսկ արդ գոլով ես այսչափ սքանչելի,
Ուստի՞ և զիարդ եղէ. — չէ՛ յայտնի.
Միայն ես ինքնին՝ ինև գոյանալ
Ոչ բնաւ և ոչ երբէք կարէի։

Քո՛ արարած եմ, Տէ՛ր իմ Արարիչ,
Քո՛ իմաստութեան ձեռագործ հաստուած,

Ա՛կնաղբիւր կենաց, բարեաց պարգևիչ,
Հոգի իմ հոգւոյ, Թագաւոր փառաց.
Կարեւոր եղև Քոյդ արդարութեան,
Զի լինելութիւն իմ անմահական
Քերբեսցէ՝ անցցէ ընդ դառնատեսիլ
Եւ անդնդախոր տարտարոս մահուան.
Զի հոգիս զիւրև առցէ ձորձ մահու.
Եւ զի ընդ ձեռըն մահու կարացից
Ես անդրադառնալ, Հայր կենդանատու,
Յանմահութիւն Քո՝ ՚ի փառսն երկնից։

Ա՛նըմբռնելի, Ա՛նհասանելի,
Գիտեմ ես ստոյգ, զի հոգւոյ իմոյ
Ողջ կարողութիւնք են անզօր կարի
Ա՛ռ ՚ի գծագրել և զստուեր լոյս Քո։
Իսկ թէ հարկ լիցէ զՔեզ փառաւորել,
Զանուն՝ մեծութիւնդ գովել՝ հռչակել,
Տկար՝ սնոտի՝ չիք մահկանացուաց
Ո՛չ իւիք է մարթ զՔեզ մեծարել։ —
Բայց միայն հոգւով առ Քեզ վերանալ,
Յանչափ խնդութեան յաւէտ տարրանալ,
Զտիւ և զգիշեր միշտ և անդադար
Հեղլով զարտասուս՝ զՔէն գոհանալ։

Մ. Ա. Խ Ճ Ա. Ն.